

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱԼՏՔՈՎ
ՍԻՐԻԿՑՈՒՄ ՇԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ ԵՎ
ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1915-1924թթ.)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻճԱԿԲ ԵՎ
ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1915-1924թ-թ.)**

**REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
ARMENIAN GENOCIDE
MUSEUM - INSTITUTE**

NARINE MARGARYAN

**THE STATUS OF THE ARMENIAN DEPORTEES
SETTLED IN SYRIA AS A RESULT OF THE
ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN-ARAB
RELATIONS (1915-1924)**

Yerevan 2013

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Դ) 52
Մ 350

Նրագրարակվում է ՀՀ Գիրությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիրական խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ պ. գ. դ. Հայկ Ղեմոյան

Պարասպանականագործության խմբագիր՝ պ. գ.թ. Արաքս Փաշայան

Մարգարյան Ն.

Մ 350 Հայոց ցեղասպանության հետքևանքով Սիրիայում հասքարված հայ գրագիրների կարգավիճակը և հայ-արարական փոխհարաբերությունները (1915-1924թթ.) / Ն. Մարգարյան. - Եր.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013- 180 էջ:

Աշխագրությունն անդրադառնում է Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում հանգրվանած հայ գրագիրներին առնչվող խնդիրներին՝ քննության կյուր դարձնելով վերջիններին նկարմամբ Սիրիայի արար բնակչության ունեցած դիրքորոշումն ու կեցվածքը: Ներկայացվել է սկզբանական շրջանում հայ գրագիրների նկարմամբ գրեղի արար կատակարիչների, ցեղասպների դիրքորոշումը, այսուհետև Սիրիայում հմիր Ֆևյսայի իշխանության /1918-1920 թթ./, ապա՝ ֆրանսիական մասնագիր հասքարման առաջին գրադիտներին /1920-1924 թթ./ իրականացված քաղաքականությունը, քննվել և շված ժամանակահարվածում Սիրիայում հայ-արարական հարաբերությունների գարգացումները, վերուժվել հայ-արարական հարաբերությունների ընթացքը պայմանավորող հիմնական գործոնները: Աշխագրությունում ուսումնասիրվել է հայ գրագիրների Սիրիայի տղիական ու քաղաքական կյանքում ներ-գրավվելու հիմնական միջումները. ներկայացվել է սիրիահայ համայնքի աստիճանական վերածնավորման և կազմակորման գործընթացը:

Աշխագրությունը հասցեազրված և պարմաբաններին, արևելագետներին, միջազգայնագետներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակներին:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Դ) 52

ISBN 978-9939-822-40-2

© Մարգարյան Նարինե, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	17
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՇՈՍՔԸ ՄԻՐԻԱ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	17
1.1 Հայ փարավորների առաջին խմբերը Սիրիայում	17
1.2 Որրահավաք աշխատանքները. կանանց ազագագրումն ու ապաստարանների հիմնումը Սիրիայում	29
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	44
ՄԻՐԻԱՑԻ ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՖ. ԷՄԻՐ ԱԼ-ՇՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ	44
2.1 ՄՆՔՋԱՅԻ շերիֆ. Էմիր Ալ-Շուսեյն իր Ալիի ուղերձները. անդրադարձ հայ փարավորներն	44
2.2 Սիրիայի արաբական ցեղախմբերի դիրքորոշումը հայ փարավորների նկարմամբ	57
2.3 Արաբ գործիչների վերաբերմունքը հայ փարավորների նկարմամբ	72
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	81
ՄԻՐԻԱԿԱՆ ԻՃԱՎՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ /1918-1920թթ/	81
3.1 Էմիր Ֆեյսալի քաղաքականությունը հայ փարավորների նկարմամբ	81
3.2 1919 թ. փետրվարի 28-ի Հայեակի դեպքերը	102
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	113
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՇԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ/ 1920-1924 թթ./	113
4.1 Հայ փարավորների սոցիալական վիճակի ասդիճանական քարելավումը	113
4.2 Հայ փարավորների ներգրավվումը Սիրիայի քաղաքական կյանքում	139
Հերջարան	156
Օգբագործված սկզբնադրյուրների և գրականության ցանկ	161
Անգլերեն համառողագիր	170

ԱՌԱՋԱԲԱՆ

Օսմանյան կայսրությունում և իրիտաբական իշխանությունների կողմից XX դարի սկզբին ծրագրված և իրականացված Հայոց ցեղասպանության հետևանքով հարյուր հազարավոր հայեր բռնի գրեղահանվեցին իրենց բնօրրանից: Սկզբնական փոլում զինաթափվեցին և ոչնչացվեցին թուրքական բանակ զորակոչված հայ գողամարդիկ: Վյոհ գործընթացը, ինչպես նաև Միրիայի Դեյր Էզ-Զոր, Շաբրա, Շաս ու Ալ-Այն, Մեսքենե և այլ բնակավայրերի համակենտրոնացված ճամբարներում անզեն հայերի զանգվածային կուրորածներն անառարկելիորեն վկայում են հայերի նկարմամբ թուրքական իշխանությունների կողմից ծրագրված և իրականացված ցեղասպանության մասին:

Հայ գրաբագիրների պարմությունն այդ ժամանակահարվածում սերպորեն առնչվում է. Միրիայի արար ժողովրդի պարմության հետ: Վրաները հիմնականում փորձում են աջակցել սիրիական անապատներում հայրնված հայ գրաբագիրներին: Վյոհ աջակցությունը և ական դեր է կարառում գրաբագիր հայերի՝ դժվարությունների հարթահարման ու Միրիայի սոցիալական, գործեսական և քաղաքական կյանքում ասպիրանտական ներգրավման ու մասնակցության գործընթացում:

Հայ գրաբագիրների նկարմամբ արարեների դրական դիրքորշման մեջ կարևոր դեր է խաղացել արարական աշխարհի հոգեոր առաջնորդներից Մեքքայի շնորհ, Էմիր Հուսեյն իրն Ալիի 1918թ. ուղերձը, որդեռ նա արար ժողովրդին պարզաբեր օգնել ու աջակցել հայ գրաբագիրներին: Վյոհ ուղերձը, փասփորեն, պաշտոնական հիմքի վրա դրեց արարների օգնությունը: Հուսեյն իրն Ալիի ուղերձի դրույթները Միրիայում հետքողականորեն իրականացվել են սիրիական ազգային կառավարության կողմից, Հուսեյն իրն Ալիի որդի՝ Էմիր Ֆեյսալի /1918-1920/ գլխավորությամբ: Ֆեյսալի կառավարության կողմից բնողության անպատճերում հայրնված հայ կանաց և երեխաներին հավաքագրելու, գրաբագիրներին սնունդ և անհրաժեշտ այլ պարագաներ գրամադրելու որոշումները, ինչպես նաև հայ հոգեոր և քաղաքական վերնախավի հետ հայ գրաբագիրների ինսդիրների քննարկումները և պաստում են վերջիններիս վիճակի ասդիճանական բարելավմանը, որրահավաք աշխարհանքների աշխուժացման ու արդյունավելությանը:

Միրիայում ֆրանսիական մանդապի սկզբնական փոլում /1920-1924թ./ հայ գրաբագիրների ինսդիրումը երկրի սոցիա-գրնչեսական կյանքում ավելի արագ դեմքերով է սկսում իրականանալ: Դիմնվում են նոր հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, իսկ

առանձին կառույցներ վերսկսում են ցեղասպանության փարիներին ընդհափ-ված գործունեությունը: Հայեր մենաշնորհներ են ձեռք բերում բնտեսության մի շարք կարևոր ոլորտներում, աշխատանում է քաղաքական կյանքը, ազգա-յին կուսակցությունները փորձում են ներդրում ունենալ հայ համայնքի՝ նոր հա-սարակությունում ինտեգրման ներգրավվելու գործնթացին:

Սույն մենագրության շրջանակներում ուսումնասիրվում և վերլուծվում է նշված ժամանակաշրջանում հայ դարագիրների դրությունը Սիրիայում, ներկայացվում է վերջիններիս Ակադմամբ գեղի արարների, սիրիական կառավարության, ինչպես նաև ֆրանսիական մանդատույին իշխանությունների դիրքորոշումը: Հայրենական պատմագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրել Սիրիայում հայունակած հայ դարագիրների հիմնախմբիները հայ-արաբական հարաբերությունների համա-դրեսում, վերլուծվում են վերջինիս ընթացքը պայմանավորող հիմնա-կան գործոնները, այդ լույսի ներքո քննության է ներարկվում Սիրիայի հայ համայնքի վերածնավորման գործընթացը:

Աշխաբությունում վերլուծվել են Սիրիայում հայ դարագիրների հիմքեզր-ման հիմնական միգրումները, այդ համագետեքստում գնահատական է դրվել Սիրիայի արարական քաղաքական վերնախավի դերին հայ-արաբական փոխարարաբերությունների հետազա զարգացման գործում: Անդրադարձ է կարարվել հայ-արաբական հարաբերություններում առկա լարվածության դրսնորումներին՝ Շեշդրայրելով 1919թ. փերքարի Հայեալի դեպքերը, վեր-լուծվել են դրա պատճառներն ու հետևանքները:

Աշխաբությունը ժամանակագրական առումով ներառում է 1915-1924թ.:՝ Հայոց ցեղասպանության հետևանքով դարագիրների՝ Սիրիայում հայունակելուց մինչև 1924թ. հումսիս «Նանսենյան անձնագրերի», իսկ նոյն թվականի օգոստոսին Սիրիայի քաղաքացիության ձեռք բերումը: Անհ-րաժեշտ է նշել, որ հետազողության համար ընդուրված ժամանակահավ-վածում՝ 1915-1924թ., Սիրիա եզրույթ ընդգրկել է ոչ միայն ներկայիս Սիրիայի Արաբական Հանրապետությունը (ԱԱՀ), այլ նաև ներկայիս Լի-բանանի Հանրապետությունը և Հորդանանի թագավորությունը, այսինքն՝ պատմա-աշխարհագրական Սիրիան (Բիլալ Աշ-Շամ): Սակայն, հաջվի առ-նելով այն հանգամանքը, որ ցեղասպանության և դրան հաջորդող առաջին փարիներին հիմնական դեպքերն ու զարգացմանները ծավալվել են ներկայիս ԱԱՀ-ում, նպարակահարմար ենք գտել սահմանափակել հետազորության աշխարհագրությունը հենց այդ շրջանակում:

Թեմայի ուսումնասիրությունն ունի ինչպես քաղաքական, այնպես է գիտական կարևոր նշանակություն: Թեման արդիական է Հայոց ցեղասպա-

նության, Մերձավոր Արևելքի հայ համայնքների, մասնավորապես, սիրիակայ համայնքի նոր շրջանի պարմության դարրեր ասպեկտների ավելի համակողմանի ուսումնասիրման դեսանկունից:

Թեմայի հերազդությունը կարևոր է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին նպաստող նորանոր փաստեր գիրական շրջանառության մեջ դնելու դժևականության համար: Վյո գործելությունը խիստ արժեքավոր են արարական վկայությունները, որոնց թենությունը կարող է նպաստել ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին գիրական պարկերացումներին իւրամական, իսկ ավելի սրբությունը ամրագրելուն, այլև դրանց ընդլայնմանը:

Մենագրության շարադրման ընթացքում օգտագործվել են միևնույն այժմ գիրական շրջանառության մեջ դրվագ արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև արարական նոր և նորագոյն շրջանի պարմագիրության կյուրեր, արար հեղինակների՝ հայկական թեմաներին վերաբերող հիմնական աշխատանքներ, որոնց մի մասն առաջին անգամ են ներկայացվում հայերևն լեզվով:

Աշխագրության աղբյուրագիրական հենքի շրջանառություն օգտագործվել է նև Սիրիա հասած հայ գրարագիրների դրվագ դեպքում ականափենսների մեծաթիվ վկայություններ, հուշագրություններ և օրագրեր,¹ որքեղ անդրադարձ և կագարվել արարների դիրքորոշմանը՝ դրական կամ բացասական կողմնորություններում բացահայտվում են նոր պարմական անցքեր, իրադարձություններ, որոնք միևնույն այժմ դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Նյութը լրացնելու և նեկել հայ գրարագիրների իրական վիճակը ներկայացնող գարենցույցներն ու գարեգրերը:²

Սույն մենագրության մեջ գեղի արար ժողովրդի ու հայ գրարագիրների

¹ 1915. Վելլու և վերածնությ. հայաբել Փ. Պալաւել, Փարիզ, 1952; Տլր-Զօր. Վելլու վերապրողներ, կազմոց՝ Լեռն-Սեպրապ, Փարիզ, 1955; Մոյել Սեպրեան, Դիրումներ և դադումներ, Էջեր օրագրել. Պլյուր, 1932; Առնակ, Թուրքերու ճանախն մէջ, 1916-1919, Երևան, 2007; Մարգիկեան Յ., Թթրական դժոխիք և անցական դժոխ, Պլյուր, 1973; Դիշիշյան Հ., Ներ Զորի անապարհերում, Երևան, 2006; Տուիկեան Յ., Կիրակոս Ղ. Կիիկեցի/ Կեանքին Ցուշերը՝ 1900-1972, Պլյուր, 2004; Սասունցի Մ., Աև օրագիր, Պլյուր, 1957; Սարաֆյան Գ., Եփրափիք Ոփո Հե Հա Պատրա, Երևան, 2002; Արևիան Գ., Ցենան և անհարակութիւն, Վյենա, 2005; Անդույան Ա., Մուծ ոճիք, Երևան, 1990; Գագիկան ատագ քահանա Կարապետ, Գիրք Ելից հայոց, Պլյուր, 1955; Պօյաճյան Յ. Տ., Հայկական Ազգունք /պարմական յուշագրութիւն, Ուօթրթասուն, 1965; Նահանիան Մ., Ցուշագիր, 1918-1948, 30-ամեա ազգ. իրադարձություններ Սուրբոյ և Լիքանակի հայ կյանքին առնուած, Պլյուր, 1949; Տարինան Վ., Հևի անապար փրկուած Էջեր օրագրեւ, Լի Եռոր, 1945:

² «Սուրբիակայ գարենցոյց», Գահիրէ, 1924; «Սուրբիակայ գարենցոյց», Հայլա, 1925; «Տաթե», տարեցոյց, կրոնա-բանասիրական-գրական. Բ գարի, 1926, «Գվեղարդ», Հայլա, 1978, 1976-1978 միացյալ թիվ, հ. Բ, «Գեղարդ», Հայլա, 2002, հ. 6, /արարներն/ «Երթ», Բերիոյ Հայոց թեմ, Սուրբիակայ գարենցիր, Հայլա, 2006, հ. 2:

հարաբերությունների հետ կապված հարցերի մեկնաբանման համար օգբագործել ենք նաև այդ ժամանակահարփածում Միրիայում գործունեություն ծավալած քաղաքական, դիվանագիտական ծառայության մեջ զբնվող անձանց, միայնուներների, հասարակական գործիչների և ականաբռն այլ մարդկանց հուշագրություններն ու նամակները:³ Իր կարևորությամբ հարկ է առանձնացնել դանիուի միայնուներ Կ. Եփիկի գործունեությունը:⁴

Վերյուրագիտական նշանակություն ունեն հայազգի հայքնի որբախոյզ Ռութեն Շերյանի անվանական ֆոնդում եղած նամակները, դիմում-խնդրանքները, նրա կարգարած որբահավաք գործունեությունն ամփոփող հայկերպությունները:⁵ Մենագրության աղբուրագիտական հենքի շրջանակում կարևորություն ունեն Կիլիկիո Տան Սահակ Բ կաթողիկոսի՝ Միրիայում ծավալած գործունեության վերաբերյալ նյութերը,⁶ հայրուկ ուշադրություն է դարձվել Հայաստանի ազգային արխիվում պահպող Սահակ կաթողիկոսի խնդրո առարկա հիմնահարցին առնչվող նամակներին ու տեղեկագրերին:⁷ Ոչ պակաս կարևոր է նաև Զիլիսկիրեան Եղիշե եպիսկոպոսի հուշագրությունը:⁸ Հայեափի առաջնորդ Ա. արք. Սյուրմեյանն /1925-1940/ իր «Պապմութիւն Հայեափի Հայոց»⁹ եռահավոր աշխափության մեջ անդրադարձել է Միրիայում ապաստանած հայ բարագիրների խնդիրներին: Աշխափության նյութը համարվել է նաև այդ թվականներին Հայեափում և Աղանայում լույս բենող պարբերական մամուլի հոդ-

³ Ambassador Morgenthau's Story. By Henry Morgenthau, NY, Garden City, Doubleday, Page & Company, 1918, Künzler Jakob, Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges /1914-1918/, Herausgegeben von Hans-Lukas Kieser, 1921, Potsdam, 1999, Chronos Verlag, Zürich, 1999, Burtt J., The People of Ararat, London, The Hogarth Press, 1926, The Horrors of Aleppo, Seen by a German eyewitness, London, Adelpf: Terrace, 1917. Kaizer H., "At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917" NJ, Gomidas Institut, Princeton, 2001.

⁴ Չղաքեան Յ., Քարեն Եփիկի, Հայ գորդության և վերածնությին հետ, Հայեափ, 2001; Քախիչյան Ա., Հայությունը սկասելիսավայան երկրներում / Հայ-սկասելիսավայան պարմաշակութային առնություններ, Երևան, 2010; Bjørnlund M., Karen Jeppe, Age Meyer Benedictsen, and The Ottoman Armenians: National Survival in Imperial and Colonial Settings. Հայկակեան Հայագիտական Հանդես, Պլյույթ, 2008, հ. ԻՀ, էջ 9-43:

⁵ ԴԱԱ, Փ. 420:

⁶ Եղիայեան Բ., Ժամանակակից պարմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Ալթիլիաս, 1975; Տէմիրճյան նախակոպոս Վ., Գավազանագիրը Լիբանանի և Սուրբոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Ալթիլիաս, 1980, հ. Ա:

⁷ ԴԱԱ, Փ. 420, ց. 9:

⁸ Զիլիսկիրեան Եղիշե, Նախակ., Նկարագրությունը Երուսաղեմի-Հայեափ-Դամասկոսի գաղթականական և վանական զանազան դիպվաց և անցերու 1914-1918, Երուսաղեմ, Բ տպագրություն, 1927:

⁹ Միրմետան արք. Ա., Պապմութիւն Հայեափի Հայոց, Հայեափ, 2002, հ. Ա, Սուրբա, Հայեափ, 2003, հ. Բ, հ. Գ, Փարիզ, 1950:

վածներով:¹⁰ Ցեղասպանությունը վերապրած հայերի խնդիրներին և անդրադարձել Ս. Վարժապետյանը,¹¹ վերջիններիս իրավական կարգավիճակի փոփոխություններն են ներկայացրել Շ. Գոյումջյանը,¹² Շ. Թորիքյանը¹³ և Շ. Հակոբյանը:¹⁴ Միդիայում ապաստանած որբերի խնդիրներին առնչվող կարևոր նյութ է պարունակում Լ. Ազարյանի եռահավոր ուսումնասիրությունը:¹⁵

Մեզ հետաքրքրող խնդրի լուսաբանման ուղղությամբ մնած ավանդ ունի պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը,¹⁶ ով հայ պարմագիրության մեջ հիմք է դրել արարական պարմագրության՝ Տայոց ցեղասպանության վերաբերյալ աշխաբությունների գիրական ուսումնասիրությանը:

Աղյուրագիրական նշանակություն են ունեցել նաև նշված ժամանակահավածում հայ ազգային քաղաքական կուսակցությունների ակրիվ գործիքների աշխաբությունները: Այս առումով կարևոր են Մ. Աղազարյանի,¹⁷ Ա. Կենծյանի,¹⁸ Ա. Նիկոլի,¹⁹ Վ. Նավասարդյանի²⁰ աշխաբությունները:

Մենագրության մեջ բարձրացվող հիմնախնդիրների լուսաբանման գիրանկայունից հագուստ ուշադրություն է դարձվել Շ. Թոփուզյանի,²¹ Ն. Միգլիորինյոյի²² և Շ. Գրինշլիդի աշխաբություններին:²³ Աշխաբության մեջ ներառվել են նաև Միդիայում ՀԲՀՄ-ի ծավալած գործունեությունն ամփո-

¹⁰ «Հայ ճայ», Հայեա, 1918-1919; «Կիլիկիա», Աղանա, 1918-1919; «Արծագանգ Փարիզի», 10.06.1916; «Եփրատ», Հայլայ, 1927-1928:

¹¹ Վարժապետեան Ս. Յ., Հայերը Լիրանանի մլ.ց. հ. Բ. Պ. լրութ. 1981:

¹² Գոյումճեան Շ., Քննութիւն 1941-ի Կաթողիկոսութեան Տայոց Մեծի Տան Կիլիկիոյ «Կանոնագրութեան», Պէյրութ. 1955:

¹³ Torigyan Sh., The Armenian Question and International Law, Beirut, Hamaskaine Press, 1973.

¹⁴ Հակոբյան Շ. Վ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պարմական և իրավական հիմքերը, Երևան, 2002:

¹⁵ Ազարյան Լ. Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լու Ամճկրս, 1995. հ. 1: 1999. հ. 2: 2002. հ. 3:

¹⁶ Հովհաննիսյան Ն., Տայոց ցեղասպանությունը արարական պարմագրության քննական լույսի ներքո, Երևան, 2004; Hovhannissyan N., The Armenian Genocide, Yerevan, 2009.

¹⁷ Աղազարյան Մ., Սահ Վերջին աթոռակալը և իր մեղապարտ գաւառականը, Պէյրութ, 1926:

¹⁸ Կէնճեան Ա., Սօցիալ-դեմօկրաք Նշանակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան աթը 1919-1921, Պէյրութ, 1958:

¹⁹ Նիկոլ Ա., Սուրիա և մենք. Գահիրէ, 1932:

²⁰ Նաւասարդյան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրէ, 1925:

²¹ Թոփուզյան Շ., Միդիայի և Լիրանանի հայկական զարդարանշների պարմություն /1841-1946/, Երևան, 1986:

²² Nicola Migliorino, (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, vol. 21, Oxford, Berghahn Books, 2008.

²³ Գրիշալդէ Խ. Տ., Պուլութ առաջանական բարեկարգությունը ՀԱՄԱ Գիրությունների Ազարյանի, Երևան, 1982/2:

փող աշխաբությունները:²⁴

Ներազգության համար հարուստ փաստագրական նյութ են պարունակում դիվալ ժամանակահարվածին վերաբերող գերմանական,²⁵ անդրիկյան,²⁶ ինչպես նաև Ազգերի լիգայի²⁷ փաստաթղթերի ժողովածուները:

Ներազգության համար կարևոր կշանակություն են ունեցել ցեղասպանագիրական աշխաբությունները. ինչպես օրինակ Վ. Դարրյանի,²⁸ Ռ. Մելսոնի,²⁹ Թ. Աքչամի,³⁰ Լ. Կուպերի³¹ Ա. Ավագյանի³² և ուրիշների գործերը: Սիրիայում հայ համայնքի վերածնավորման և փարագիրների կայացման խնդիրների ուսումնասիրության համար շահեկան են եղալ Վ. Դյաբլովի և Է. Մելքոնյանի,³³ Ա. Դյուֆոյի³⁴ և Գ. Շեֆերի³⁵ աշխաբությունները:

Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում հայդեմքած հայ փարագիրների խնդիրներն ուսումնասիրելու համար կարևոր են արաբական սկզբնաղբյուրների, ինչպես նաև պատմաբանների աշխաբությունների վերլուծությունն ու ուսումնասիրությունը: Նարկ է նշել, որ, արաբ հերազգությունների՝ վերջին շրջանում լույս դրեած մի շարք աշխաբություններում

²⁴ Ուկեմագիեան. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1931, Քարիզ. 1935; Դար մը պարմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, հ. 1, 1906-1940, Գահիր-Փարիզ-Նիի Եռոր. Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն, Գրիգոր Շահինեան, Արձունի Շաղիկ, Պերճ Սէլլուկեան, 2006:

²⁵ Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, Donat & Temmen Verlag, 1986; Հայ դարի և իշխանության Քրիստոնեանության մասին, Փաստաթուրքի ժողովածու /1920-1930/, Երևան, 2005.

²⁶ United States official records on Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafyan, London, Gomidas Institut, Princeton, 2004.

²⁷ League of Nations, Scheme for the settlement of Armenian Refugees, Genereal Survey and Principal Documents, Geneva, Publications of the League of Nations, 1927.

²⁸ Dadrian V., The History of the Armenian Genocide, Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, NY, Oxford, Berghahn Books, 1995.

²⁹ Melson R., Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, Chicago and London, University of Chicago press, 1992.

³⁰ Akçam T., A Shameful Act, The Armenian Genocide and Question of Turkish Responsibility, London, Constable, 2007.

³¹ Kuper L., Genocide. Its Political Use in Twentieth Centure, New Haven and London, Yale University Press, 1981.

³² Ավագյան Ա., Գеноциդ 1915 թ. Մеханизмы принятия и исполнения решений. Ереван, “Гитутյուն”, 1999.

³³ Դյալյօն Վ., Մելքոնյան Է., Օчерки социокультурной типологии. “Армянская диаспора”, Еր., Институт Кавказа, 2009.

³⁴ Dufoix St., Diasporas, London, Berkeley and Los Angeles, University of California press, 2008.

³⁵ Sheffer G., Diaspora politics, At home Abroad, NY, Cambridge University Press, 2003.

հսկակ ընդգծվում է հիմնահարցի նկատմամբ ցուցաբերվող առավել համակողմանի մոդեռնան և կզրություն:

Ժամանակագրական առումով կարեի է առանձնացնել փաստարակ, Խարբերդի գավառներից մեջի կառավարիչ Ֆայեգ Ալ-Ղուսեյնի³⁶ հուշագրությունը՝ «Զարդերը Հայաստանում»:³⁷ Մյուս՝ «Բնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում»³⁸ աշխագործությունում նա գրախիս է Սիրիայում գիրող իրավիճակն Առաջին համաշխարհային պատերազմի ժարիներին ու կենդրունանում է երիտրությունը՝ Սիրիայի արարների նկատմամբ ունեցած դաժան վերաբերմունքի վրա:

Արժեքավոր լուրեկություններ կան դեպքերի ժամանակակից մի շարք արար գործիչների հուշագրություններում: Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Քուրդ Ալին³⁹ (1876-1953) իր հուշերում բացահայտում է պանթուրքիզմի քաղաքականությունը հայերի նկատմամբ: Նրա 4 հագործով լույս դրեսած «Հուշեր»⁴⁰ գրքում «Հայերը և նրանց գրագրությունը» խորագրի գակ հեղինակը քննարկում է Հայոց ցեղասպանության հարցը: Իր մյուս՝ «Շամի գրեղագրություն»⁴¹ վեց հավորանոց գրքի երրորդ հագործում մանրամասներ է հաղորդում հայերի գրագրության մասին:

Թեմայի ուսումնասիրության համար մեծ կարևորություն և սկզբնադրյության նշանակություն են ունեցել Ա. Քեշիշյանի խմբագրությամբ «Հայեափառականություն» թերթի վավերագիր էջերը հայերի և արարների վիճակի մասին:

³⁶ Ֆայեգ Ալ-Ղուսեյնը սերում էր Հաուրակի շրջանի արարական Սուլութ ցեղից: Երկր փարի Խարբերդում գրադեցրել է կայսմակամի պաշտօնը, որը նրան հետափորություն է տվել մասրամասն ծանոթանալ դեպքերին ու ականայից ականատես լինել հայերի դժբախտությանը: 1915թ. հրաման է ստացել մեկնել Երգրում, սակայն Դիարքերի գրությունը մեկուկես ամիս ծերակալված է մնացել:

³⁷ فائز الغصين، المذابح في أرمينيا، حلب، 1991.

Ֆայեգ Ալ-Ղուսեյն, Զարդերը Հայաստանում, Հայեափ, 1988:

³⁸ فائز الغصين، المظالم في سوريا و العراق و الخazar العقبة، 1918،

Ֆայեգ Ալ-Ղուսեյն, Բնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում, 1918:

³⁹ 1920թ. ստանձնել է Սիրիայի գիրությունների ակադեմիայի կառավարման գործը. իինելի է Արարական գիրությունների խորհրդոր՝ Երկար տարիներ վարեկան վերջինս գետքում պաշտօնը: 1908թ. Համասկոսում սկսել է հրաբարակել ու խմբագրել «Ալ-Մուրքարա» օրաթերթը, որին դրագրվել են հայերի գրեղանականությունների. Սիրիայում նրանց հասկարման և թվաքանակի հետ կապված կյութը:

⁴⁰ محمد كرد علي، مذكرات، دمشق، الجزء الثالث، 1949.

Մուհամմադ Քուրդ Ալի, Հայեր, Դամասկոս, հ. 3, 1949:

⁴¹ محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983,

Մուհամմադ Քուրդ Ալի, Հայոց գրեղագրությունը, Դամասկոս, 1983, հ. 3:

Օսմանյան պետության մեջ և Սիրիայում»⁴² և Ն. Արիսյանի խմբագրությամբ «Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930թթ.»⁴³ թերթերից կարարված ծաղկաքաղը: Առաջին ժողովածորի շրջանակներում ամփոփված են Հայեափի «Ար-Թակադրում» թերթի՝ Սիրիայում հայ փարագիրներին վերաբերող հոդվածները, իսկ երկրորդում ներկայացված է հայ փարագիրներին առնչվող որոշ մամուլի գենությունը՝ սիրիական ու Սիրիայից դրուս փարագրված արաբական թերթերում:

Ազգբնադրյուրային նշանակություն ունի նաև Ն. Արիսյանի մեկ այլ աշխագություն՝ «Հայկական սարսափները սիրիական մքրում. սիրիացի մրավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում»⁴⁴ գիրքը: Շեղինակը ներկայացրել է արաբ ականավորների, աշխարհների առաջնորդների. նրանց հետքորդների հետ ունեցած իր հանդիպումների ու հարցազրույցների ընթացքում նրանց պատմած մակրամասները՝ հայ փարագիրներին արաբների ցուցաբերած օգնության և հայ-արաբական հարաբերությունների վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության պատմության համար կարևոր են նաև լիբանանցի պագմարան Սահե Զահր Աղ-Դինի աշխագությունները, մասնավորապես, «Արաբների անկեղծությունն ու հայերի երախափափի գությունը»⁴⁵ ծավալուն աշխագությունը: Շեղինակն ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության պատճառները, անդրադարձել Սիրիայում և Լիբանանում հետքեղասպանական շրջանում արաբ ժողովրդի ցուցաբերած օգնությանը: Զահր Աղ-Դինը հեղինակ է մի շարք այլ աշխագությունների, որոնցից առանձնանում են «Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայասպանում և մեծ գերությունների դիրքորոշումը»,⁴⁶ «Հայեր, ժողովուրդը

صفحات و ثانقية من جريدة التقدم الحليبة عن الاحوال الارمنية والعربيّة في الدولة العثمانية والبلدان الشامية، حلب، دار طلاس، 1992.

⁴² Հայեափի «Ար-Թակադրում» թերթի վավերագիր կտըր հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, Հայեափ, 1992:

أرسيان نورا، أصد أ الابادة الارمنية في الصحافة السورية 1877-1930، بيروت، 2004.

⁴³ Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930թթ., Բեյրութ, 2004:

أرسيان نورا، غوائل الارمن في الفكر السوري، دمشق، 2002.

⁴⁴ Արիսյան Ն., Հայկական սարսափները սիրիական մքրում, սիրիացի մրավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, Դամասկոս, 2002:

⁴⁵ صالح زهر الدين، أصلة العرب وأنوفاء الارمني، بيروت، 2002

⁴⁶ Սահե Զահր Աղ-Դին, Արաբների անկեղծությունն ու հայերի երախափափի գությունը, Բեյրութ, 2002:

صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية، وموقف القوى الدولية منها، بيروت، 1996.

⁴⁷ Սահե Զահր Աղ-Դին, Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայասպանում և մեծ գերությունների դիրքորոշումը, Բեյրութ, 1996:

և հիմնախնդիր»⁴⁷ մենագրությունները:

Ուշադրության է արժանի սիրիացի պարմաբան Նայիմ Ալ-Յաֆիի աշխափությունները, որոնցից առավել հետաքրքրական է՝ «Նայոց ցեղասպանությունն ու արաբական հասարակական կարծիքը»⁴⁸ աշխափությունը: «Եղինակի մյուս՝ «Վրյունաբրու Ձեմալ Փաշա»⁴⁹ աշխափությունը նոյնպես կարևոր է, որին հետազոտված է՝ Ձեմալ փաշայի քաղաքական գործունեությունը՝ հայկական և արաբական կողմերի գործառնությունով: «Եղինակի մեկ այլ աշխափություն, որի համահեղինակն է Խալիլ Ալ-Մուսան, «Վրաբների ու հայերի պայքարն ընդունմ Օսմանյան գաղութապիրության»,⁵⁰ ևս վերաբերում է մեզ հետաքրքրող թեմաներին:

«Նայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պարմագրության մեջ իրենց կարևոր գույնը ունեն նաև սիրիացի պարմաբաններ Օսման Ալ-Թուրքի «Եցեր հայ ժողովրդի պարմությունից»,⁵¹ Մարզան Ալ-Մուտաւարի «Հայեր պարմության ընթացքում»,⁵² սիրիացի գրող և հրապարակախոս Սամիր Արքաչի «Հայասպան, հող և ժողովուրդ»⁵³ աշխափությունները:

«Նայոց ցեղասպանության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Մուսա Պրենսի աշխափությունը»:⁵⁴Մ. Պրենսի հետ է կապված «արմենոցիդ»՝ «հայասպանություն» եզրի ներդրումը գիրական ոլորք: Արմենոցիդը համակողմանիորեն արգածողում է: «Նայոց ցեղասպանության բուն եռթյունն ու բնորոշ գծերը, ավելի հասկանալի են գարձենում ինդիքը միջազգային, գիրական, քաղաքական և այլ շրջանակներում:

⁴⁷ صالح زهر الدين، الارمن-شعب وقضية، بيروت، 1988

Սալիհ Զահր Աղ-Դին, Հայերը. Ժողովուրդ և հիմնախնդիր, Բեյրութ, 1988:

⁴⁸ نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، اللاذقية ، 1992

Նայիմ Ալ-Յաֆի, Հայերի կովորածները և արաբական հասարակական դիրքորոշումը, Լաթարիա, 1992:

⁴⁹ نعيم اليافي، جمال باشا السفاح، اللاذقية، 1992

Նայիմ Ալ-Յաֆի, Արյունաբրու Ձեմալ փաշա. Լաթարիա, 1992:

⁵⁰ نعيم اليافي، خليل الموسى، نضال العرب و الارمن ضد الاستعمار العثماني، اللاذقية، دار الحوار ، 1995

Նայիմ Ալ-Յաֆի, Խալիլ Ալ-Մուսա, Արքաների ու հայերի պայքարն ընդունմ Օսմանյան գաղութապիրության, Լաթարիա, 1995:

⁵¹ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960

Օսման Ալ-Թուրք. Եցեր հայ ժողովրդի պարմությունից, Հայեա, 1960:

⁵² مروان الصوار، الارمن عبر التاريخ، بيروت، دار الحياة، 1982

Մարտիան Ալ-Մուտաւար, Հայերը պարմության ընթացքում, Բեյրութ, 1982:

⁵³ سمير عريش، أربيل، أرض وشعب، بيروت، 1991

Սամիր Արքաչ, Հայասպան, հող և ժողովուրդ, Բեյրութ, 1991:

⁵⁴ موسى برنس، مجازر الارمن. جوانب ضد الإنسانية، حلب، 1997

Մուսա Պրենս, Հայերի ցեղասպանությունը. ոճրագործություն մարդկության դեմ, Հայեա, 1997:

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության համար աղբյուրագիրական նշանակություն ունի «Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ»⁵⁵ ժողովածուն, որին ներառվել են Ֆայեզ Ալ-Դուսեյնի, Ուալի Ալ-Դին Յաքունի և ամենակարևորը՝ Մեքքայի շերիֆ ու Էմիր Հուսեյնի իրեն Ալիի ուղերձները: Մենագրության շրջանակներում Սիրիայի այդ ժամանակահարվածի պատմական դեաքերին առավել մանրամասն փեղեկանալու համար օգրվել ենք Ա. Սահդի,⁵⁶ Է. Թումայի,⁵⁷ Ս. Ալիի,⁵⁸ Դ. Փայխսի,⁵⁹ Գ. Կոսաչի,⁶⁰ Մ Լազարսի,⁶¹ Ն. Դովիհաննիսյանի,⁶² Ա. Սանջյանի⁶³ աշխատություններից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության, հայ փարագիրների մասին արաբ ականաբեսների, պատմաբանների կողմից գրքած վկայություններն ու կարգարված ուսումնասիրություններն անպայման իրենց նպաստը կրերեն Հայոց ցեղասպանությունը համակողմանի ուսումնասիրելու և իրականությունը բացահայտելու գործընթացին:

Մենագրության շրջանակներում բերված հայկական ու արաբական հավասփի աղբյուրներն ու Սյուրերը ճշմարդացի և իրական պարկերացում են փախս Հայոց ցեղասպանության նկարմամբ արաբների դիրքորոշման և Խված ժամանակահարվածում փարագիր հայերի ու Սիրիայի արաբների փոխհարաբերությունների վերաբերյալ:

⁵⁵ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، بيروت، 1988.

Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ, Թեյրութ, 1988:

⁵⁶ Саид А., Восстание арабов в XX в., Москва, Прогресс, 1964.

⁵⁷ Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского единства, Москва, АН СССР, Наука, 1977.

⁵⁸ على سلطان ، تاريخ سوريا، نهاية الحكم التركي، 1918-1908 ، دمشق، 1996.

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն /1908-1918/, Դամասկոս, 1996:

⁵⁹ على سلطان ، تاريخ سوريا، حكم فصل بن حسن 1918-1920 ، دمشق، 1996.

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, Ֆեյսալի իրեն Հուսեյնի իշխանությունը, /1918-1920/, Դամասկոս, 1996:

⁶⁰ Pipes D., Greater Syria, The History of an Ambition, NY, Oxford University Press, 1992.

⁶¹ Косач Г., Красный флаг над Ближним Востоком? Компартии Египта, Палестины, Сирии и Ливана, Москва, Институт Стран Азии и Африки при Московском государственном университете им. М. В. Ломоносова, 2001.

⁶² Лазарев М.С., Крушение турецкого господства на Арабском востоке (1914-1918), Москва, Изд. вост. Лит. 1960.

⁶³ Հովհաննիսյան Ն., Սարգսյան Ռ., Սիրիան անկախության համար մղված պայքարում /1917-1946/, Երևան, 1975:

⁶⁴ Sanjian A., The Armenian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1965.



Armenische Flüchtlingskinder aus Aleppo.

Nach Hilf und Trost sie schaute aus,
Voll Leid war schon ihr junges Herz!
Nun tragen Dank sie in das Haus,
Das Trostung sandte ihrem Schmerz.

Dankeskarte der A. C. O.

Դանիական փոստային բացիկ.
Հայեաի դարագիր հայ երեխաները



ԱՐՄԵՆԻԱ ՈՎՐԵՐՈՒ ՀԵՐԱՅԻ ԽՈԿՈՎԸ ԴԱԼԵՓՈ ԿԱՑԱՐԻՆ ՄԵԽ

**Փոստային բացիկ. Անապատի հայ որբերի վերջին խումբը Դալեփո
գաղթակայանում**



Մայ 1924 -

Darmat: առ առնելուք

Դամակոսի հայկական դպրոցի սաները /1924թ./



Հայկական նոր թաղամասի բնակարանների կառուցում.
Տալեպ. 1920-ականների սկիզբ



Տալեպի «Մեյդան Ալ-Ջարիր» հայկական թաղամասի կառուցումը.
որը 1930-ականներին անվանակոչվեց Նոր գյուղ



LA CHAPELLE-ECOLE. — SORTIE DE LA MESSE
P. Macérian

O. Zalikine.

Փոստային բացիկ. ղպրոց-մատուռ. պատրարքից հետո

LES FRANCISCAINES MISSIONNAIRES DE MARIE EN MISSION - Alep (Syrie)



LES OEUVRES POUR LA JEUNESSE - Les petites rescapées d'Arménie sur la terrasse de Ste. Odile.


*Փոստային բացիկ. Տայոց գեղասպանությունից փրկված հայ
փոքրիկները Սուրբ Օդիլի պատշամբում Դալեա (Սիրիա)*

الهاشمي الذوؤان

بسم الله الرحمن الرحيم
لهم إنا نسألك

من المحسين بعثي من البلاد العربية وبرجامعة وأي حمل إلى الأمرا الوجلة
الاعاجد الأمير فنهن والأمير عبد العزيز الجريبا العجم وروزه وبركتة أما
بعد صدرت الأحرف من أم القرى تاريخ ١٩٢٦ جب ٢٢٢٦ محمد الذي لا له
الله وهو اليهم نعم وسلام على نبيه والرسول عليهما السلام وبركتة
وتسلي بعده وعافيه وفتحة من فضله صافيه وفيه أسلوبه على ما يعلم سمع نعم
وان لم يغب بحربي المحافظ على كل من تخلف بأطرا فهم ومحاجاتم وبين عشائرهم
من الطائف العيعرية الهربيه تساعدهم على كل امر لهم وذمائهم على
كما عاقبهم على انسائهم واموالهم وابنائهم وتسهدون كل ما يحبهون اليه في
خطفهم واقاتهم فا لهم احسن زمرة المسلمين والذين قال لهم صلات الله عليه
وسلامه من أخذ عليهم عقال بغير كرت مخصمه يوم القيمة وهذا من أحقرهم
ما نعذكم به وتنشره من شيمهم وهم ينكرون ما دايمكم بشرفكم وسلام
عليكم در حمد الله وبركتة





Դամասկոսի հայկական ողբանոցի արհեստանոցը /1919թ./



Դամասկոսի հայ երեխաների ու կանանց ապաստարան՝
ՇԲՀՄ հովանավորությամբ /1919թ./



Դայ լուրազիրների ընդունման կետի վերածված Դակիայի նախկին
թուրքական զորանոցը /1918թ./




Դամաս (Յան Կառավա)

Դամասկոսի հայ լուրազիրների վրանաքաղաքը
Բար Ծարքի, 1924թ./



Դիշազի թագավոր Շուտեյն իրն Ալիի այցը Ամման /1924թ./
/ձախից և դեպքութիւն/



Շուտեյն թագավորի նամակն ուղղված Եղիշե եպիսկոպոս
Չիլինկիրյանին /1918թ./

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՇՈՍՔԸ ՍԻՐԻԱ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՔԸ

1.1 ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Առաջին համաշխարհային պատրիազմը հնարավորություն լիսենոց երիտրուրական կառավարությանն իրականացնելու հայերի ցեղասպանության ծրագիրը: Ռազմաճակատին սահմանակից շրջաններից բնակչության փարհանման պարուվակով Օսմանյան կայսրության զրեթե բոլոր նահանգների հայ ազգաբնակչությունը ենթարկվեց կորորածների և փարագրության: Տարագիրների քարավանների վերջին հանգրվանը սիրիական անապատներն էին, որին և իրականացվում էր աքսորի ընթացքում վերապատճեների վերջնական ոչնչացումը:

Օսմանյան կայսրության Ռազմական նախարար Էնվերը՝ Ձեմալ փաշային ուղղված ապրիլի 24-ի հեռագրում գրեթեկացնում է. «Անհրաժեշտություն է առաջացնել հայ փարագիրներին գրեղահանել Դյորթ-Ցոլից, Հաճնից, Ջեյրունից, Սսից, ուստի գրեթեկացնում ենք Ձեզ նրանց՝ Հալեպի վիլայեթի հարավ-արևելքում գրինվոր Զոր վայրը ուղարկելու մասին, որի հետ համաձայն է Գիլավդոր հրամանագրադր».⁶⁴

1915թ. մայիսի 13-ին Ներքին գործերի նախարարությունը հրապարակում է հայերի գրեղահանության մասին որոշումը: Մայիսի 18-ին Թալենաբի հրամանով Էրգրումի նահանգապետը հրաման է փալիս փարագրել հայերին Դեյր էզ-Զոր, մայիսի 23-ին հայերի փարագրության վերաբերյալ մանրամասնորեն գրեթեկացվում են Վանի և Բիթլիսի նահանգապետերը: Նշանառման վայրը նույնն էր՝ Դեյր էզ-Զոր:⁶⁵

Մայիսի 26-ին Ներքին գործերի նախարարը դիմում է Մեծ վեզիրին՝ առաջարկելով կառավարությանն ընդունել գրեղահանությունը թույլադրող հասկուկ օրենք: Մայիսի 29-ին Մեծ վեզիրը հավանություն է փալիս ևշված դիմումին, իսկ փլյալ հարցի վերաբերյալ կառավարությունը որոշում է ընդունում մայիսի 30-ին: Միևնույն ժամանակ, արդեն մայիսի 27-ին մամուլում հրապարակվում է գրեղահանության մասին ժամանակավոր օրենքի ընդունման լուրը:⁶⁶

⁶⁴ Ավագյան Ա., Գеноցիդ 1915թ. Մеханизмы принятия и исполнения решений, Ереван, МИГА, 1999, с. 42-43.

⁶⁵ Նշվ. աշխ., էջ 43-44:

⁶⁶ Dadrian V., The History of the Armenian Genocide, Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, NY, Oxford, Berghahn Books, 1995. p. 284.

Այսպիսով, հարկ է նշել, որ թեև գեղահանությունը թույլափրող օրենքը Օսմանյան կառավարության կողմից ընդունվել էր մայիսի 30-ին, բուն գործընթացը մեկնարկել էր դեռևս 1915թ. ապրիլին:

Թուրքական կառավարությունը սկսում է փուլային քաղաքականությամբ իրականացնել հայերի գեղահանությունն ու կոստորածները: Տեղահանություններին իրականացվում էին հեփեռականորեն և հսկակ ժամանակացույցով:⁶⁷ Արևմբահայությունը քշվում է սիրիական անապատներ՝ առանց կյանքի ապահովության: Սիրիական անապատը՝ որպես 1915թ. հայերի գեղահանության վերջնակետ, իթրիհաղական կառավարության կողմից ընդունվում է երկու պարբռառով՝ առաջինը և հիմնականը հայ գարրի հևարագործինս հեռացումն էր Արևմբյան Հայաստանից, երկրորդ՝ անապատում ավելի հեշտ էր կազմակերպել մարդկային մեծ զանգվածի կուրֆակումն ու ոչչացումը:

Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Քուրդ Ային այն կարծիքն է հայություն, որ երիտրուրքական կառավարությունը ցանկանում էր արաբների մոտ շահարկել իսլամի գործոնը՝ դրդելով կրանց հայերի դեմ, որի արդյունքում պետք է արաբներն իրենց կիսաք թողած գործն ավարտեին:⁶⁸

Մուհամմադ Քուրդ Այի այս դրույթը հանդիպում ենք նաև 1913-1916թթ. Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Դ. Մորգենթաուի հուշերում, ով ևս մեկ անգամ փաստում է, որ երիտրուրքական կառավարությունը 2 միլիոն հայությանը որոշում է գեղափոխել անապատ՝ գիրակցելով, որ «հայ գարագիրների մեծ մասը սահմանված վայրը չէր կարող հասնել. ծարավից, քաղցից կմահանային կամ զոհ դառնային անապատների վայրենի մուսուլման ցեղերին»:⁶⁹

Դեռ ավելին, Մորգենթաուն նշում է, որ երիտրուրքերը հայերին գարագրում էին սիրիական անապատ՝ «նվազագույն չափով անզամ մրգադրություն չունենալով հայերին այդ երկրում հասպարելու»:⁷⁰ Ի գարբերություն Վրդու Համիդ II-ի, ով վախենում էր միջազգային հակազդեցությունից, երիտրուրքերի ձեռքերն ազատ էին իրականացնելու հայերի կոստորածները, քանի որ «Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան կենաց մահու պատերազմի մեջ էին, չէին կարող միջամտել Թուրքիայի գործերին, իսկ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան իր դաշնակիցներն էին»:⁷¹

⁶⁷ Kuper L., Genocide. Its Political Use in Twentieth Century, New Haven and London, 1981, p. 110.

⁶⁸ محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983 . ص 163.

Մուհամմադ Քուրդ Այի, Համիդ թեղագրությունը, Դամասկոս, 1983, h. 3, էջ 163:

⁶⁹ Ambassador Morgenthau's Story, NY, 1918, p. 309.

⁷⁰ Նոյել Քելում:

⁷¹ فؤاد حسن حافظ تاریخ الشعب الارمني منذ البداية حتى اليوم، القاهرة، 1986 ، ص 214.

Ֆուադ Հասան Համեդ, Հայ ժողովրդի պատմությունը սկզբնավորումից մինչ մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 214:

Երիքուրքական կառավարության նոյն մբաղրությանն է անդրադառնում Դամասկոսում գերմանական հյուպատոս Լ. Նարդեզր Կ. Պոլսի դեսպանին հասցեագրված նամակում, որը նշվում է. «Հայեապում գեղակայված հայ գաղթականներին Մոսուլ և Ներ Էզ-Զոր ուղարկելու նպատակը բեղվիններին նրանց որպես զոհ հանձնելու է»:⁷²

1915թ. մայիսի վերջերին Հայեա են հասնում գեյթունցիների առաջին քարավանները:⁷³ Սկզբնական շրջանում նրանց հանգրվանը Հայեան էր: Վերջինիս կարսորությունը Հայոց գեղապանության գարիներին է. ական էր մի քանի նկարառումներով. նախ հյուպատոսական նստավայրերի առկայությունը. ինչպես ևս Հայեաի հյուպատոսական իրավասությունների ընդարձակ լինելու հանգամանքը: Վերջիններս քարածվում էին ևս Ուրֆայի, Մարաշի, Ջեյրունի հայկական շրջանների վրա: Հյուպատոսարանների օպարերկրացի աշխատողներն ականափես էին լինում Հայեապում հայ գարագիրների կուտակմանն ու վերոնշյալ գարածքներից նրանց գեղահաման ողջ գործընթացին: Ամերիկյան, գերմանական, իբրական, ավստրո-հունգարական հյուպատոսական ներկայացնությունների Հայեապում գորևելու փաստով կարելի է բացագրել այն հանգամանքը, որ այդպես ջարդեր չեն եղել: «Հայեաը փրկության քաղաք չէր վերապրուների համար, այլ կենդրունացման ընդարձակ վայր. որդենից հայ գարագիրները քշվում էին վերջնական կուրորածի ամայի կայաններ... Նարյուր հազարավոր հայեր լցվեցին Դեյր Էզ-Զորի, Մեսքենեի, Ռաքքայի, Խալահինեի, Ռաս ու-Այնի կենդրունացման և մահվան ճամբարները»:⁷⁴ Ինչպես իրավացիորեն նկարում է Լ. Կուտերը, գեղահամանությունները ցեղասպանության իրականացման համար քորարկման ծև էին, ինչպես ևս կուրորածի նոր մեթոդ:⁷⁵

Հայեապում հայերի գարերային այս գեղահամությունների, ճամբարներում նրանց կենդրունացնելու ժամանակ առաջ էին զայիս բազմաթիվ դժվարություններ՝ սկսած նրանց գեղափոխման խնդիրներից, որոնց ավելանում էին բազմաթիվ իիվանդությունները, սովոր, կիմայական ոչ բարենպաստ պայմանները: Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար, Սիրիայում

⁷² Deutschland und Armenien. 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986, N 275, s. 272-273.

⁷³ Երիքուրքական կառավարության կողմից իրականացված հայերի պարբերաբար ու հեփկողականորեն իրագործվող գեղահամանությունները դեպի միրիական անապատներ արարական աղբյուններում հիշապակվում է «սասուկիյաթ»՝ թարգմանաբար գալթ, գեղահամանություն եղբու:

⁷⁴ .75 موسى برقن، مجازر الارمن ... ، ص

Մուսա Պրեսն. Հայերի ցեղասպանությունը..., էջ 75:

⁷⁵ Kuper L., նշվ. աշխ., էջ 112:

Չորրորդ բանակի հրամանափար Զեմալ փաշային հանձնարարվել էր գրեպում վերահսկել և կազմակերպել հայերի գրեղահանություններն ու կովորածները: Վերջինիս ծավալած գործունեության, հայերի նկարմամբ վարած քաղաքականության վերաբերյալ կարծիքները շատ հակասական են:⁷⁶

Միրիացի պարմարան Նայիմ Ալ-Յաֆին, ով վերլուծել է Զեմալ փաշայի քաղաքական գործունեությունը՝ հայկական և արարական կողմերի գրեսակեփից, եզրակացնում է, որ նա երթեք է հետ չի կանգնել հայերի նկարմամբ ոչնչացման քաղաքականություն վարելուց, ուղղակի, երբեմն հայերին օգտագործել է արաբների դեմ⁷⁷ որպես գործիք:⁷⁸ Այսուհանդերձ, հարկ է նշել, որ գրեղահանման և ոչնչացման ճանապարհին գրնվող հայերի նկարմամբ ցուցաբերած որոշակի դրական վերաբերմունքը թելադրված էր ոչ այնքան Զեմալ փաշայի մարդասիրական վերաբերմունքով, այլ պայմանավորված էր քաղաքական հաշվարկով: Հայերին նա դիմում էր որպես Միրիայում և Լիբանանում արաբներին հավասարակշռող դրար և հայ արհեստավորներին արարական դրաբերություն բնակեցնելով ձգրում էր լուծել երկու խնդիր՝ թուլացնել արարական դրարը, արաբական ազգային-ազգագրական շարժման միջումները և սպեղծել բանակի կարիքները հոգալու նոր հենարան: Այս գրեանկյունով միայն կարելի է բացաբերել ժամանակ առ ժամանակ հայ փարագիրների նկարմամբ նրա ձեռնարկած քայլերը:

Հարավային Միրիայում դրաբերություն հանգրվանն էր Դամասկոս քաղաքը՝ իր արվարձաններով: Առաջին քարավանն այսպես հասել է 1915թ. օգոստոսի 12-ին: Քաղաքը հավաքալայան էր դրագիր այն հայերի համար, ովքեր Զեմալի հրահանգով Դամասկոս էին ուղարկվում: Վերջիններս հիմնականում արհեստավորներ էին, որոնց աշխատանքը պետք էր օսմանյան բանակին: Արքայիսկովոս Եղիշե Զիլինկիրյանը 1916թ. Դամասկոս կարգարած այցի ընթացքում դեղեկացել է, որ 20 հա-

⁷⁶ Մի շաբթ բարձրաստիճան իթթիհաղականներ իրենց հուշերում առանձնացնում են Զեմալի դիրքորոշումը հայերի գրեղահանության հարցում և նշում, որ հակառակ Թաթեաթի հրահանգների՝ հայերի դրույթունը բարեկավելու և օգնույթուն ցուցաբերելու Զեմալի հրահանգների մասին: Անզամ համաձայնություն է, ովելի բժիշկ Ասադոր Արթուրյանի նեկարությամբ հայ դրաբերությունների խնամենու համար հիվանդանոց բացելու առաջարկին, մինչդեռ իրականում, Հայերի օսմանյան գործի ակնելու փաստն է նրան սպիտել նման քայլ ձեռնարկել: Տե՛ս Kaiser H., “At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917”, NJ, 2001, p. 27.

⁷⁷ Ենիսակն ընդգծում է այս փասդը, որ թուրքական կառավարությունը լուրջ մրադրություններ ուներ 1914թ. հայդրարված ջիհաղի իրականացման գործում արաբների օգնությունը սպանա:

⁷⁸ نعيم البافقي، جمال باشا السفاح، اللاذقية، دار الحوار، 1992، ص 112-114.

Նայիմ Ալ-Յաֆի, Արյունարքու Զեմալ փաշա, Լարակիս, 1992, էջ 112-114:

զարից ավելի հայեր կային Դամասկոսում. իսկ 1917թ. նրանց թիվը հասել էր 30 հազարի, որոնց մեծ մասն արդեն հարմարվել էր տեղական կյանքի պայմաններին այն ասդիճաւ. որ Բար Թումայի մեծ շուկան գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքն էր անցել:

Հայերի կենդրուացման վայրերից էր նաև Հառուանի շրջանը: Ազգությամբ թուրք Հասան Ամջան 1916թ. օգոստոսի 23-ին Զենմալ փաշայի հագուկ հանձնարարականով նշանակվում է. «Հայ տեղահանվածների գրեսուց»: Նա Հայեացից մեկնում է Հառուան կենդրուն և ու Հերան/ որ կենդրուացած էին մուգավորացես 20-30 հազար մուհաֆիրներ՝ գարագիրներ՝ հեգույայ հանձնարարականով. «Ներկայիս քո պարբականությունը Հառուանից այդ ըստանիքները կատուակարգված կերպով մինչև անձրևները և ծմեռ գեղափոխելի է: Նեփազայում կապահովես ընակության կյանքի անվանվությունն ու հասարակական բարեկապումը».⁷⁹ Բայց ներքին գործերի նախարարությունը այս գործերներն արագ կանխել է՝ նորացնելով ուղարկված հեռագերի բովանդակությունը. բայց որի բանակի հրամանափարությունն իրավասու չեր այլևս միջամբել այդ խնդիրին:

1915-1916թ. Օսմանյան կայսրության հայարևակ վայրերից արտորը հիմնականում ավարտված էր. արևմտահայությունը՝ գեղահանված հայրենիքից: Արտորը վերապրածների մեծ մասը 1916թ. կենդրուացած էր Հայեաւ ու Դամասկոս քաղաքների և Եփրափ գետի միջև ընկած գարածքի ճամբարներում, որը դիրուում էր կենցաղային ծանր վիճակ. սովոր. համաձարակն ամենուր հազարավոր մարդկանց կյանքեր էին խլում:

Դամակենդրուացման ճամբարներ այցելած բազմաթիվ օգտարերկրացիների նկարագրությունները հիմնականում համրնկնում են. և բոլորն այդ ճամբարները որակում են մեծարիվ զանգվածների միաժամանակ կամ ասդիճանական ոչնչացման միջոց: Երբեմն նշում է. որ ճամբարներում առաջանում էին զաղթականների այնպիսի կուրակումներ. որոնք դուրս էին զալիս անզամ թուրքական կողմի վերահսկողությունից:

Ամերիկացի Սփյուարդ Դայը մանրամասն նկարագրում է. վրանաքաղաքների վիճակը. «Որջ, որուինքի ատնք կարելի չէ ընակարան կոչել, շինուած էին որևէ բանե, որ մարդոց ձեռք ինկած էր: Ասուք կը ներկայացնեին յուսահար սպեղծագործութիւն մարդ արարածին՝ մղուած ունենալու բնակարան մը վայրի մը մէջ, որ ոչինչ էր, բան աղբի կոյդ»:⁸⁰

⁷⁹ Զիլիսկիրեան Եղիշէ Եպիսկ., Նկարագրութիւնը Երուսաղէմի-Հայեայի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիմուաց եւ անցերու 1914-1918, Երուսաղէմ, 1927, էջ 29 և 42:

⁸⁰ Ամջա Հասան, Տեղահանություն և ոչեացում. Երևան, ՇՖՁԻ, 2007, էջ 30:

⁸¹ Վարժապետեան Ս. Յ., Հայերը Լիքանակի մեջ. Պեյրութ, 1981, հ. Բ, էջ 40:

Ունենալով համապատասխան հրահանգ՝ Հայեափի գաղթականների ընդիմականություններ ամեն գրեթե չարդարարական գործողություններ սկսելու հետարակորություն էր սրբանում: Մինչև 1915թ. հուլիսի վերջը Հայեափի նահանգում աքսորի հրամանը չի գործադրվում նահանգապետք Զալալ բեյի՝ հայերի նկարմամբ ունեցած բարյացակամության շնորհիվ: Վյո կապակցությամբ նա կորուկ հայգարարել է. «Ես այս շրջանի կառավարիչն եմ և ոչ թե նրա դահիճը»:⁸² Քաղաքի ոսդիկանության դժունների մեջ ևս համամիտ չէր հայերի շարդերի իրականացմանը և փորձում էր ըսդում հայության վերադասների հրահանգներին:

Զալալ բեյն աջակցում էր Սահակ Բ Խապայան կաթողիկոսին,⁸³ ով Հայեափի գործադրությունը անձամբ գրադարձություն էր կաթոլիկությանը: Զալալ բեյը Հայեափում գործող «Գաղթականների օգևության հանձնախընթիք», հայ գարագիրների գործադրության հարցերով գրադարձությունը այլ մարմինների գործունեության համար նպաստավոր պայմաններ էր սրբեղծում: Սակայն շուրջով նրան գործադրություն են Կոնիա:

1915թ. սեպտեմբերի 9-ի Ներքին գործերի նախարար՝ Թալեաթի հեռագիր-հրահանգում, որն ուղղված էր Հայեափի կուսակալությանը, ասվում է. «Հանեցէք հոնկի, բոլորին եւ գեղի մի՛ գրաք որ զանոնք պաշտպանէ գործուուրդը, որ գոփիութեանը բերմունքով նիրական շահերը իր հայրենասիրական զգացմուներէն բարձր կը դասէ»:⁸⁴

Վերոհիշյալ հրամանը փաստում է, որ Միրիայի արաքները բարյացակամ են հայ գարագիրների նկարմամբ և թուրքական կառավարությունը քաջադասների հայ գարագիրների նկարմամբ արաք ժողովրդի դիրքորոշմանը:

⁸² نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، اللانقية ، 1992 ، ص 67

Նայիմ Ալ-Ճաֆի, Հայերի կոփորածները և արաբական հասարակական դրիբորոշումը, Լաթարիա, 1992, էջ 67:

⁸³ 1915թ. հոկտեմբերի 21-ին Սահակ կաթողիկոսը թուրքական կառավարության հրամանվ աքսորվել է Խոյիր գյուղաքաղաք և մինչև 1915թ. հոկտեմբերի 27-ր երես է Հայեափում, որդենից կրկին կառավարության հրամանով մնկել է Երուսաղեմ: 1915թ. հոկտեմբերի 31-ից մինչև 1917թ. նոյեմբերի 19-ը գտնվել է Երուսաղեմում, որ պաշտոնավարել է որպես Կաթողիկոս-պարհիաք Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի և Երուսաղեմի ու Կ. Պոյտի. Երբ նորից պետքության հրամանով իրեն ընկերակցող նկեղեցականներով աքսորվել է Դամասկոս: 1921թ. Կիլիկիայի հայարագությունից հետո Աղասիայից գրեթափոխվել է Հայեափ: Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսության վերակազմավորման համար 1929թ. Աղնեան հայոց կաթողիկոս Գևորգ Շ Սուրբեանացի օրինությամբ Երուսաղեմի հայոց պարհիաքությունը Բևյորդի և Կիլիկիոյ թեմների հետ Կիլիկիոյ աթոռին է փոխանցել ևս Դամասկոս թեմը: 1929թ. աթոռակիսարք վեղափոխվել է Անթիլիաս: Մաերամաս գտն. A. Sanjian, The Armenian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, 1965, pp. 257-259.

⁸⁴ Ալսորեսյան Ա., Մեծ օճիրը, Երևան, 1990, էջ 35:

Թուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր արարների կողմից հայերին օգնություն ցուցաբերելու յուրաքանչյուր և ախատածություն խսդիկ արգելելու համար, գործում էր մահապարժի սպառնալիքը: Այնուամենայնիվ, անզամ նման իրավիճակում, արարները ելքեր էին փնտրում հայերին օգնելու համար և դժվար կիխեր պարկերացնել հայերի վիճակը. եթե չիներ արարների հանդուրժուական վերաբերմունքը: Նուանք հնարավորինս փորձում էին օգնության ձեռք մեկնել գարագիրներին: Թուրքական իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանում գեղի կառավարիչների, հավակապես, արարների վրա, որպեսզի նրանք անշեղորեն կարարեն Կ. Պոլսից եկող հրահանգները: Փոքր անհետապահության դեպքում իսկ նրանք պաշտոնանկ էին արքում: Դայոց ցեղասպանության իրականացման գարիներին Երրորդ բանակի հրամանաւոր Մահմուդ Քամիլը իր հեռագրում նախազգուշացնում է, որ յուրաքանչյուր արար, ով որևէ հայի օգնի, նրան կախաղանի մահապարիծ էր սպասվում՝ իր իսկ գան դիմաց, որից հետո կայրվեր նաև նրա գոտիը:⁸⁵ Հայկանշական է, որ նման սպառնալիքների պայմաններում, գեղի արարները շարունակել են հնարավոր միջոցներով օգնել հայ գրագիրներին, որի մասին վկայում են հայկական, արարական և օպարավեճու այլ աղբյուրներ:

Հայեափի նահանգապետարանում Կ. Պոլսից սպացվող նախարարական հեռագրերի համաձայն Դամասկոսից, Հայեափի դուրս բերվող քարավաններն ուղարկվում էին Մեսքենե, Դեյր Էզ-Զոր, Ռաս ուլ-Վյե, Խեթլիլի. Ռաքքա: «Անապագում պետք է իրականացվեր հայկական ողբերգության վերջին արարը»:⁸⁶ Թուրքական հակամարդկային բաղարականության հետվանաբռով գուժում էր նաև արար ժողովուրդը: Եզոր չև, որ գաղթականների ընդհանուր գենչության պես Արդուլահավ Նորի բեյն այդ կապակցությամբ հայդարարում է, որ թուրքական ապազայի համար հայեափի ու արարներից միանգամից պետք է ազարպել:⁸⁷

Փաստուեն, Հայեափի հայերին հեռացնելու բռնագաղթի երկրորդ փուլը էր, Հայեառում Գերմանիայի հյուպարու Վ. Ռյոսլերը /1910-1918թ. մայիսի 30/ գրում է, որ հայերին գեղափոխելու անվանում էին «գեղափոխում բնակության վայրեր»: Բռնագաղթի առաջին փուլում արսորավայրեր էին սիրիական շրջանները՝ Դամաս, Շոմար, Բաբր, Դամասկոս, իսկ երկրորդ փուլում՝ Ռաքքան, Դեյր Էզ-Զորը, Արևմտյան Հաուրանը և Ռաս ուլ-Վյեը:

⁸⁵ نعيم الباقي، خليل الموسى، نضال العرب و الأرمن ...، ص.88.

Նայիմ Ալ-Յաֆի, Խալիլ Ալ-Մուսա. Արարների ու հայերի պայրարու... էջ 88:

⁸⁶ موسى برسن، مجازر الأرمن. جرائم ضد الإنسانية، طلب، 1997، ص. 75.

Մուսա Պրենե, Խշկ. աշխ., էջ 75:

⁸⁷ Անդրեյան Ա., Խշկ. աշխ., էջ 25:

Չնայած թուրքական կառավարության հեփեռդական քաղաքականությանը, այսուամենայնիվ, չի հաջողվում Հալեպի նահանգը լրիվ մաքրել հայերից: 1916թ. հունիսին Հ. Վանզենհայմը⁸⁸ տեղեկացնում է, որ «Հալեպից բոլոր հայերն աքսորվելու են, Հալեպում մնալու նախկինում վրդական արդունագրերը չեղյալ են համարվել և հունիսի 19-ից աքսորվում են ոչ միայն քաղաքականական կասկածելիները, այլև անգամ հալեպարևակները»:⁸⁹ 1917թ. գարնանը Հալեպի, Դամասկոսի, Բեյրութի, Մոսուլի հյուպարուանները հանձնարարական են սրբանում գեղի հայ գարագիրների վերաբերյալ մանրամասներ գոալ՝ կապված վերջիններիս թվաքանակի. իրական վիճակի, կազմակերպվող նարդասիրական օգնությունների ու վերջիններիս հայրայթման աղբյուրների մասին: Այս հանձնարարականի պարագաները նամակում Ռյուստերը Հալեպի հայերի համար նշել է 45 հազար թիվը, որոնցից 35 հազարը ծայրահետ կարիքավոր, իսկ Դամասկոսի հյուպարուս իր նահանգի համար նշել է 30 հազար:⁹⁰

Հալեպում ամերիկան հյուպարուս Զ. Ջեքսոնի 1916թ. փետրվարի 3-ի գեկուցագրերից ակնհայտ է դառնում, որ Սիրիայի գարագը է գեղահանվել 486 հազար հայ:⁹¹

Հայ գարագիրներին Հալեպից քշում էին դեպի Մեսրենե, որդեռից է՝ Դեյր Էզ-Զոր: Բարբ, Մամբուջը, Մաարան լրիվ հայրավավել լին: Եփրափի այս գծի վրա գտնվող հայերը հիմնականում Կ. Պոլսի, Ռողոսթոյի, Նիկոմեդիայի, Կոնիայի, Պարփիզակի և Կիլիկիայի հայերն էին: Նրանք լիովին չեին թալանվել և ամեն միջոց ձեռնարկում էին՝ Մեսրենեից ներքև չիշնելու համար: Ռաս ուլ-Այսի արաքները վկայում էին, որ այսպիս գտնվող գրեթե բոլոր հայերը սպանված էին: Փաստորեն, սկսվել էր «Սիրիայից դեպի Սիրիա», «անապարհից անապարհ» գարագրության փուլը, որդեռ, ինչպես վկայում են հայկական և արարական աղբյուրները, կազմակերպվում են երեք ջարդեր. Ռաս ուլ-Այսում, Խնթիլիիում և Դեյր Էզ-Զորում: Թեև երեք վայրերում էլ ջարդերն իրականացվում են ամենադժան կերպով, սակայն Դեյր Էզ-Զորը դառնում է հայ ժողովոյի «գերազույն սպանդանոց»:⁹²

⁸⁸ Հ. Վանզենհայմը 1912 թվականից մինչև 1915թ. նոյեմբեր ամիսը որոշ ընդմիջումներով Կայսերական Գերմանիայի դեսպանն էր Կ. Պոլսում:

⁸⁹ Deutschland und Armenien. 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986, N 281, s. 276.

⁹⁰ Deutschland und Armenien. 1914-1918, N 330, s. 331, 334.

⁹¹ United States official records on Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafyan, London, 2004, p. 490.

⁹² Գրանեան Հ., Մեծ և աւարեկութեան նկր..., գրքն «Յուշամարեան Մեծ Եղեռնի», էջ 929:

Նալեացի մարոնի Ժողեք Թաութելը,⁹³ ով դեպքերի բերումով 1916-1918թթ. եղել է Դեյր Էզ-Զորում, ականափես և եղել հայերի սարսափներին: Նա նոյնապես վկայում է, որ սկզբանական շրջանում Դեյր Էզ-Զորը խաղաղ էր՝ շնորհիվ զավադի կառավարիչ Զալալ թէյի /Զելալ Աղ-Դին Ակ-Զորրան/, որի կառավարման տարիները՝ որոշակի ընդմիջումներով 1910-1916թթ. : «Վերջինս հասպաս մնաց իր գաւառի քրիստոնիաներուն հանդէպ ունեցած կեցուածքին վրայ... ազետուական մոլուսարենքը հայ գարագիրներուն գեղատութեց բաղադրի արուածաններն ու խաները եւ հրամայեց օգնել առողք՝ իր կարողութեան սահմաններուն մէջ».⁹⁴ 1916թ. հունիսին հայերին բնացնչելու հասպատակամությամբ Դեյր Էզ-Զոր է եկել Զերի փաշան:

1916թ. ըսթացքում Զ. Զերսոնի զեկուցագրերից մեկից գրելեկանում նեք, որ Հայեալում և հարակից շրջաններում գարագիր հայերին զաղգրի ճանապարհով բաշխվել է մարդասիրական օգնություն: ⁹⁵ Այս փասքը պայմանավորված էր թուրքական իշխանությունների սահմանած հսկողությամբ: Բայց, չնայած դրան, գրելի հյուպագոսական անձնակազմերը և միախոներները միջոցներ են փնտրել այդ օգնությունն ամեն ձևով իրականացնելու համար: Այսդեղ հարկ է նշել երրորդ կարևոր կողմի դերն ու եւանակությունը՝ գեղաբենակ հայերը, որոնք ել սպեղծել էին իրենց բաշխման ցանքը:⁹⁶ Արարենք նոյնապես աջակցել են այդ գործընթացին: Թաութելը համագործակցել է Զ. Զերսոնի հետ. ով բարեգործական կազմակերպությունների նպասգներն ու օժանդակությունները հանձնում էր Թաութելին, վերջինս էլ փոխանցում էր հայ գաղթականներին: Անզան որոշ հայ գարագիրների Թաութելն իր գանեն է թաքցրել: «Բազմաթի մարդիկ, մանուկներ եւ կիններ կը թաքնուիին գանս մէջ և կը փրկուիին մահի»:⁹⁷ Վերջինիս գործունեությունը պայմանական է դարձել կրոս ծերրակալության: Հայեալում Զերսոնի հետ համագործակցել է պատվելի Հովհաննես քահանա Էսրիջյանը, ով հայ գարագիրներին օգնություն բաշխելու թուղթաբակյա ցանք էր սպեղծել: Վերջինս այցելել է Զերսոնին՝ դեսպանաբան միջոցով հայ գարագիրներին գրամադրվող օգնությունն ընդլայնելու խնդրանքով:⁹⁸

⁹³ Ժողեք Թաութելն իր գաղթակալությունները գրի է, առել դեպքերից անմիջապես հետո որպես «ականաբես, վկա», ինչպես ինքն է իրեն բնութագրում: Նրա հուշերն առաջին անգամ լույս են դրեն Քեյրութի «Ալ-Մաշրեբ» հանձնում. 20-րդ դարի թիվ 6, հունիս, 1922, էջ 562-570:

⁹⁴ Տէր-Զօրի դեպքերը պատերազմի ժամանակ, «Ազգակ», Պէյրութ, 24.04.2004, էջ 53:

⁹⁵ United States official records on Armenian Genocide 1915-1917, p. 489.

⁹⁶ Kaiser H., Եղվ. աշխ., էջ 47:

⁹⁷ Տէր-Զօրի դեպքերը պատերազմի ժամանակ, գրեն «Ազգակ», 24.04. 2004, էջ 56:

⁹⁸ Kaiser H., Եղվ. աշխ., էջ 47:

Նեյր էգ-Զորում Զեքի փաշան նոյնպես մբադրություն ուներ արաբ-ներին ներգրավել հայերին բնաշխելու ծրագրերում: «Թրքական իշխանութիւնը ապօնց նաքրազործնան յոյսը դրած էր Տէր-Զօրի արաբներուն վրայ»:⁹⁹ Տեղի արաբները մերժում են նրա առաջարկը. «Մեր խիդճը չենք կրնար բեռնատորել անմեղներու արիւնով»:¹⁰⁰

Ուստ ուլ-Այսի կայանակամ Յուսուֆ Զիյա թեյր պարբերաբար հեռագրեր էր ուղարկում Հալեպ՝ խնդրելով, որ այլևս գաղթականներ չուղարկեն, որովհետք չէր կարողանում հոգ փանել ու պատսպարել նրանց: Զիյա թեյր հապաղում էր հայերին անապատ ուղարկել, սակայն 1916թ. փետրվարին այսիրե է ժամանում Վասի նախկին կուսակալ Ջևեդ թեյր՝ «Բաշկալեի պայտարը», ով դեսնելով հայ գաղթականների բազմությունը, պաշտոնանել է անում Զիյա թեյին:

Ժողովրդին առանձին խմբերով հանում են Նեյր էգ-Զորից Մսուլ գանելու նպագրակով, բայց նրանք չեն հասցնում Շադադիեն անցնել: Մինչև Շադադին Զեքի փաշան ընդունում է Մարաթի և Սուվարի անապատները և քանի որ «կարելի չէր ամբողջ այդ բազմութիւնը սպաննելով հացնել, սրեհծեց արհեստական սով մը»:¹⁰¹ Բնականաբար, Խման իրավիճակն իր անմիջական ազդեցությունն էր ունենում գեղի արար ժողովրդի վրա: Վհմադ Ուասֆի Զաքարիան իր ուղևորական հուշերում, որոնք ամփոփված են «Հուշերս Եփրափի մասին, 1916թ.» և «Ուղևորություն դեպի Եփրափ» գրքերում, անդրադարձել ենան հայերի բռնագաղթին և նշում է, որ արաբները պատերազմի գարիներին շփվելով Եփրափի ու Տիգրիսի հովիքները թշված հայկական քարավանների հետ, գրաբեր հիվանդություններով են վարակվել, «մասաւանդ երբ դիֆուսէն գառապած մեռեալներու հագուստները կը հազնելին»:¹⁰²

Այսուամենայնիվ, ինչպես փաստում է սիրիացի պատմաբան Օմար Սլեբին իր «Զորի նահանգը օսմանյան ժամանակաշրջանում» աշխագության մեջ, «Ծրջանի բնակիչները դիմակայեցին քաղաքական կամայականութեանց, եւ պահպանեցին հայերը առանց զիփակցելու միջազգայնօրեն շրջանին դէմ լարուած քաղաքական խաղին»:¹⁰³

Ծնունդով դերգործի, Սիրիայի Արաբական Հանրապետությունում Արաբ գորդների միության անդամ Զաքիր Սուլթանը գրում է. «Տարագիր հայերին Նեյր էգ-Զորի բնակիչները ընդունում էին մեծահոգությամբ ու բարությամբ:

⁹⁹ Տէր-Զօր, Աղեկեն վերապրողներ, էջ 28:

¹⁰⁰ Նոյն գեղում:

¹⁰¹ Անդույան Ա., Խշկ. աշխ., էջ 109:

¹⁰² Արիստան Ն., Տէր Զօր մարդիրոսաց քաղաք, Հալեպ, 2010, էջ 90:

¹⁰³ Խշկ. աշխ., էջ 103:

Նրանք ամեն ինչ անում էին, որ խոշընդոփեին թուրքերին՝ հայերին ձերբակալել: Շշում եմ մորս պատմությունը, թե գալիք՝ Արդ Ալ-Ալլահ Սիրիայի թափ-ցրել է հայերին խոփի դեզերի մնջ: Իսկ թուրքերը փնտրում էին նրանց Դեյր Էղ-Զիրում գրևող ցանկացած գալարը: Տարիկս միակը չէր»:¹⁰⁴

Հայ գարագիրների համակենքորուացման գլխավոր վայրերից էր նաև Ռաքբան: 1915թ. Ռաքբան Հայսպից բաժնաված ինքնուրույն շրջան էր ու վարչականորեն կապված էր Ռուֆայի մութասարիֆության հետ: 1915թ.. Երբ հայ գաղթականները հասնում են Ռաքբա, գեղի կառավարիչն էր հայսպից Ֆեհմին, ով գեղուում գաղթականության հարցերով գրադիվոր Արիր աղայի հետ համագործակցելով՝ իրենց արգունված քանակից 2-3 անգամ ավելի գաղթականներ էր ընդունում, ընդ որում, կաշառքով: 1916թ. Ֆեհմին փոխարինում է Դեյր Ֆախրին, սևումբերին՝ Ալի Քեմալը: «Ռաքբան եթէ իր ազատարար ճանչցաւ Ֆախրին, պիտի չի մոռնայ նաև անոր այս յաջորդը, որ նոյնքան արիարար պաշտպանեց Հայութիւնը և ատիթները սփեղծելով ժողովուրդը գեղավորեց աւելի ապահով զօրիներու մեջ»:¹⁰⁵

1915թ. հունիսի 15-ին Ռաքբայի հայության թիվը կազմում էր շուրջ 30 հազար, 1916թ. կազմակերպված մարդահամարի ցուցակը հետևյալն էր՝ ընդհանուր առմամբ 4035:¹⁰⁶ Փաստորեն, մենք գրաված ընթացքում 90 տոկոս անկում էր գրանցվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արաբները սկզբից նեյշ չեն աջակցել երիտրութական կառավարությանը: Չնայած այն փասփին, որ կրանք բազմակողմանիորեն հրահրվում էին վերջիններիս կողմից, որին ավելանում էր դիրող պարերազմական վիճակը, ծանր փնտեսական կացությունը, արաբները փորձում են աջակցել հայերին:

«Արաբների վերաբերմունքը հայերի ողբերգության նկարմամբ» գլխում պատմաբան Օսման Աթ-Թուրքը կարծես ամբողջացնում է արաբների դիրքորոշումը՝ նշելով, որ արաբները բարյագակամ են եղել հայերի նկարմամբ. «Բոլոր արաբները, հարկապես, սիրիացիները, պետք է նշել, որ մեծ ուշադրություն և բարյացակամություն ցուցաբերեցին հայերի նկարմամբ. ապաստան դպեցին իրենց կմերում գարագիրներին ու որբերին, և դա արաբներն արեցին անսալով իրենց խղճի ճայնին հակառակ կառավա-

¹⁰⁴ أريبيان نورا، غواص الارمن في الفكر السوري، دمشق، 2002، ص 98-101.

Արիսյան Ն., Հայկական սարսափները սիրիական միքրում, սիրիացի միքավորական-ների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, Դամասկոս, 2002, էջ 98-101:

¹⁰⁵ Գալֆանան աւագ քահանայ Կ., Գիրք Ելից հայոց, Պլյուր, 1955, էջ 532:

¹⁰⁶ Նշվ. աշխ., էջ 262:

բության խիստ հսկողությանն ու սպառնալիքներին... նրանք իրենց օգնության ձեռքը մեկնեցին, դան դուռը բացեցին բոլոր հայերի առջև»:¹⁰⁷

Հայերն ու արարները նշված ժամանակահարվածում որոշակի ընդհանրություններ ունեն: Դրանցից առաջնայինը թուրքական գիրապետությունից ազարվելու գաղափարն էր: Հայ և արար ժողովուրդներին երկար ժամանակ չպահանջվեց գիրակցելու, որ իրենց նկարմամբ դարվում էր «նոյն քաղաքական գիծը՝ թրացման բաղաքանությունը»:¹⁰⁸ Թուրքական կառավարությունը, որքան էլ հեփսնողական էր հսկողության հարցում, բայց նրա՝ «հայ ժողովրդին ոչնչացնելու արարներին ուղղված սպառնալիքների քաղաքականությունը ձախողվում է»:¹⁰⁹ Նրան չի հաջողվում «շահել արարների վսփահությունը, որոնք Օսմանյան կայսրության ամենասպաքար գաևազգածն էին»:¹¹⁰

Այսպիսով, երիփթուրքական կառավարության՝ հայերի նկարմամբ վարած ոչնչացման քաղաքականության հեփսնանքով Սիրիա հասած հայ գարագիրներին դրտի արար ժողովուրդը սկզբից ներ բարյացակամ վերաբերմունք է, ցուցաբերում: Արարների օգնությունը սկզբնական շրջանում հիմնականում անհագության բնույթ է կրել՝ թուրքական կառավարության կողմից արգելված լինելու պատճառով: Եվ քանի որ հայերի գրաբարությունն էլ դարձրային ծնունք է, իրականացել, դրտի արար ժողովրդին ժամանակ էր հարկավոր հայերի՝ սիրիական անապահներում հայդրավելու պատճառները և դրանից առաջացած հեփսնաերենը ու բարդությունները գիրակցելու համար: Արարների դրական վերաբերմունքը, մարդասիրիական բնույթից բացի, կարելի է, բացարձել նաև արարների այն մուսավահությունով, որ իրենք նոյնապես կանգնած էին թուրքական վրանգի առջև, ինչպես նաև հայկական կուրորածներին կարող էին հաջորդել արարական կուրորածները: Արարների դրական վերաբերմունքի պատճառներից էր այն գիրակցումը, որ օսմանյան գիրապետությունից ազարվելու հարցում հայերի ու արարների ճանապարհ ընդհանուր է:

¹⁰⁷ عثمان الترك، صفحات من تاريخ الأمة الارمنية، حلب، 1960 ، ص 247

Օսման Աթ-Թուրք, Էջեր հայ ժողովրդի պատմությունից, Հալեպ, 1960, էջ 247:

¹⁰⁸ مروان المدوار، الأرمن عبر التاريخ، بيروت، 1982، ص 497.

Մարուան Ալ-Մուլատի, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 497:

¹⁰⁹ صالح زهر الدين، أصلة العرب والوفاء الارمني، بيروت، 2002، ص 243

Սալիհ Զահր Աղ-Դին, Արարների անկեղծությունն ու հայերի երախտագիրությունը, Բեյրութ, 2000, էջ 243:

¹¹⁰ موسى برس، مجازر الارمن. جرائم ضد الإنسانية ، ص 75

Մուսա Պրես, Աշվ. աշխ., էջ 75:

1.2 ՈՐԲԱՇԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՎՆՔՆԵՐԸ, ԿԱՆԱՆՅ ԱԶԱՏԱԳՐՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՄՆՈՒՄԸ

Հայոց գեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայ փարազիրների հոծ բազմության մեջ ամենաածանքը թերևս հայ որբերի վիճակն էր: Տարագրության դաժան ճանապարհից, ծանր վերապրումներից հետո սիրիական անապատներում երանց նոր դժվարություններ էին սպասում: Առկա էր կենդանի մնալու խնդիրը, բացի այդ, երանք մշտապես կանգնած էին նաև ծուլման վիճակի առջև:

Երեխաների վերապրելու խնդիրն այս պարագայում հագուկ ուշադրության է արժանի: Երեխաների գործոնի կարևորությունը հսկակ գիտակցում էր երիտրոբլական կառավարությունը: Դա են վկայում իրար հետքնից Հայեափի կուսակալություն հասնող հեռագրերը՝ անհապաղ միջոցառումներ ձեռնարկելու և հայ երեխաների միջոցով հայերի ընդհանուր բնաջնջումն իրականացնելու համար:

Սիրիայի արարները, անփեսելով վիճակն ու կառավարության հսկողությունը, փորձել են օգնել գրագիր երեխաներին: Թալեաթի՝ 1915թ. սեպտեմբերի 9-ի հեռագրից պարզ է դաշնում. որ գեղի արարները փորձում են պաշտպանել հայերին: Փասդ, որը խիստ դժգոհություն էր սուած բերում երիտրոբլական կառավարության շրջանում:

«Ո՞չ միայն բուն սուրբացի, արար գրարր որել, կերպով Հայ ցևի արեան ծարաւը չունեցա, այեւ գովելի հոգածութեամբ ու որբան կարելի էր, ամոք Հայոց թշուառութիւնը»:¹¹¹

Սփեղծվել էր մի բարդ իրավիճակ, որդեղից պետք էր ամեն կերպ դուրս բերել հետարափորինս մնձ թվով երեխաներ: Նման իրավիճակում հայ որբերին աջակցելու համար լրարագրության առաջին իսկ շրջանից սկսում են գործել ինչպես հայկական, այսպես էլ՝ միջազգային գարրեր բարեգործական կազմակերպություններ: Ամենուր լրարվում էին որբահավաք աշխարհանքներ: Հայ որբերի և կանանց ազարագրմամբ գրադաւում էին հայկական կամավորական փոքրաթիվ ջոկատներ, անհատներ, ովքեր բեղվիների անվան գակ շրջում էին հեռավոր գյուղերում՝ հայքնարերում իրենց ազգակիցներին, ազարագրում ու փոխադրում էին հայաշաբ կենսքրոններ: «Թուրքի մը, արարի մը, քիւրդի մը բռվէն հայ որը մը կամ կին մը փախցնելը պարփականութիւն կր համարուէր, իրաքանչիւր Հայու: Պէսք չունէին հրամանի կամ հրահանգի սպասելու, այդ պարփականութիւնը կափարելու համար»:¹¹²

¹¹¹ Սիրմէեան արք. Ա., Պարմութիւն Հայեափի Հայոց, Հայլա, 2002, հ. Ա. էջ 452:

¹¹² Չորմիսեան Լ., Համայնապատկեր Արևմբահայոց մէկ դարու պարմութեան, Պէյութ, 1975, հ. Գ, էջ 527:

Անապակներում գործում էր մի կարգախոս՝ «Մեկ հայ, մեկ ոսկի»: Քանի որ ազարագրման հիմնական միջոցներից էր թուրք, քուրդ կամ արար փերերի դրամական վարձագրությունը կամ կաշառքը, դարբեր երկներում կազմակերպվում էին հանգանակություններ՝ փրկագին ապահովելու համար:¹¹³

Հայ որբերին աջակցելու համար, ինչպես նշվել է, մեծածավալ աշխատանք են վարել հայկական, միջազգային ու հասարակական կազմակերպությունները: Նրանց գործունեության մեջ մի բան շատ հայրկանչական ու բնորոշ է. Միջիայում հայ որբերի և, ըստհանրապես, հայ դարագիրներին փրկելու գործընթացում լինեն դրանք անհապ մարդիկ, հայկական կամ միջազգային կազմակերպություններ, դժվար էր արդյունքի հասնել՝ առանց արարական կողմի միջամբության ու օգնության: Որպես կանոն, հիմնականում բոլորը համագործակցել են արաբների հետք: Վերջիններս՝ աշխարթների ցեղապետերից մինչև բեղվիններ, բարձր պաշտոնյաններից մինչև անհապներ, աջակցել են հայերին հնարապոր միջոցներով: Արաբների օգնությունը հայ որբերին ու կանանց շարունակական բնույթ է կրել, հետքեղասպանական առաջին հավկածում նրանք գործել են մարդասիրական մղումներով, հետքագայում Շուտեյն իրն Ալիի ու նրա որդու՝ Ֆեյսալի պատգամներից ենելով: Արաբներն աջակցել են նաև հայահավաք աշխատանքներ իրականացնող անզիհական և ֆրանսիական իշխանություններին: Իհարկե, եղել են բացառություններ, որոնք էլ ունեցել են իրենց պարճառներն ու բացարությունները, բայց մի բան հսկակ է՝ արաբների օգնությունն ու բարյացակամ վերաբերմունքն այդ ժամանակահավաքածում գերիշխող բնույթ են ունեցել:

Որբահավաք աշխատանքներին զուգահեռ սկսվում է որբանոցներ բացելու գործընթացը: Հայ որբերին պատսպարելու սուածին քայլերն անում են գեղի հայերը: Արդեն 1915թ. հուլիսի 15-ին Վիարոն Շիրաճյանը Հալեպի Ազապա թաղամասում որբանոց է բացում: Պեսքը է նշել, որ 1916-1918թթ. Հալեպի հայկական որբանոցի¹¹⁴ աշխատանքները երեք անգամ ընդհափվել են և վերականգնվել են 1918թ.: «1917թ. որբերի թիվը հասնում է 1008-ի, իսկ աւելի եփքը՝ 1918թ. հոկտեմբերին՝ անզիհական բանակներու

¹¹³ Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ըստհանուր միության պարմություն, Երևան, 2005, էջ 99:

¹¹⁴ 1921թ. սաների թիվը կազմում էր 900, որուսից 614 հաճախում էր դպրոց, իսկ արենսփանոցի սաների համար /190 տղա և 60 աղջիկ/ գործում էր գիշերային դպրոց: Որբանոցն ուներ մոտ 200 հոգուց բաղկացած աշխատակազմ: Որբանոցում որբերին արիենսփաններ էին սովորեցնում, ուներ նաև կույրերի համար հափուկ երածշղական դասընթաց: Որբանոցը փակվել է 1924թ.:

մուլտֆլ Սուրիա, հայ որբերի թիւր կը հասնէ 2000-ի»:¹¹⁵ 1920-ական թվականներին որբերի թիւրը 1800-ից եվազել է 1350-ի:¹¹⁶ Անգլիական գործերը 1918թ. Հալեպը գրավելուց հետո սկսել են նյութական օժանդակություն ցուցաբերել որբանոցին:

«Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամագրույցը»¹¹⁷ նոյնապես հայ գրարագիրների օգլության մնածածակա ձեռնարկումներ է, իրականացրելու: Նրա ջանքերով փրկված և որբանոցներում խնամված որբերի թիւրը հասնում է մոտ 12 հազարի՝ Սիրիայի Լիբանանի Պատղառինի շրջաններում: «Երբեք չէ խնայած Ամերիկեան Նպաստամագրույցը իր պաշտօնեաները դրկելու այնպիսի վրանզարու գեղեր, ուրիշ կարելի էր որբեր հաւաքել»:¹¹⁸

Արաբների հետ համագործակցել են ևս Տալեպում Օնսիկ և Արմեն Մազլումյան եղբայրները¹¹⁹, ովքեր «գրարագրութեան գրարիներուն նախախնամական դեր մր խաղացին Հալեպի և Լիբանան մլց անհամար հայ գրարագիրներու սրոյց մահէ փրկվույ»:¹²⁰ Նրանք օգբագործում էին փեղական իշխանությունների հետ իրենց կապերը՝ բազմաթիվ հայ գր-

¹¹⁵ ԴԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 1:

¹¹⁶ ԴԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 4:

¹¹⁷ «Մերձավոր Արևելքի նպաստամագրույց» կազմակերպությունը սպառնվել է, թուրքիայում հայերի ջարդներին ականագրեան և դատավանդությունների՝ հայերին օգնելու համար իրենց կառավարության ուղղակա դիմումների հիման վրա: Ակզրում այս կազմակերպությունը կոչվել է՝ Կայ նպաստամագրույց հանձնախումը՝ Armenian Relief Committee- և սկսկ լ. գործել 1915թ. իրավումների 1-ից: Իրանից մը բաւի ամիս առաջ սպառնվել էին «Սիրիայի Պատղառինի նպաստի հանձնախումը» և «Պարսկական պատկրազմի նպաստի հիմնադրամը»: Վյո կրթեր միավորվում էն 1915թ. նոյեմբերի 15-ին՝ կրչվելով «Հայ-սիրիական ամերիկյան նպաստամագրույց հանձնախումը»: Կոնքը սիրիական որդումնվ այս հանձնախումը վերթանականապես կոչվել է՝ «Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամագրույց»: 1916թ. Ամերիկյան նպաստամագրույցի գործունեությունը մնած թափ է սպասում Հայեանում: Սիրիայում Նպաստամագրույց օգնության գործը սկսվում է 1915թ., իսկ 1918թ. թնդանություն լ. իր գագաթնեակեափին հասնելով 1922-1923թթ.: 1924թ. Բեյրութում և Հայեանում հիմնադրվել է՝ «Մերձավոր Արևելքի որբերի թնկերակազմություն» /իհամ: «Ներազայնում բացվել են ևս Արևելքների և Համասկուսի մասնաճյուղերը: Մաքրանասն լին Վարժապետեան Ս. Յ., նշվ. աշխ., լ.ջ 351-385, Ազագյան Լ., Կայ որբերը Մեծ Եղեռնի, Լու Անմելը, 1995, հ. 1, էջ 154-170:»

¹¹⁸ Վարժապետեան Ս. Յ., նշվ. աշխ., լ.ջ 351:

¹¹⁹ Մազլումյան եղբայրները Հալեպում մեծ հեղինակություն վայելող անձինք էին, որոնց պատկեանում էր Հալեպի հայրիկի «Օթել Բարոն» հյուրանոցը, որտեղ ժամանակին իշխանել են երկիր կարևոր դմբքները: 1916թ. Նորայրների իրենց որբահավաք աշխատանքների և քաղաքական գործունեության համար անզամ որոշ ժամանեակ ձերբակավել են: Մաքրանասն լին թորանեան թ., «Պատմութիւն Հալեպի «Օթել Պարոն»ի և Արմեն Մազլումեանի (Պարոն) նամականին, Պլյորու, 1987:

¹²⁰ Օսկեմարեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 1906-1931. Փարիզ, 1935, էջ 154:

րագիրների, հարկապես մտավորականների սիրիական անապատներից Հայեա լրեղափոխելով:¹²¹

Հայեապոմ պատերազմի վերջին տարիներին արդեն կազմվել էին որբախնամ և այրիախնամ մարմիններ, որոնք չնայած սկզբնական շրջանում գործում էին առանց լուրջ կազմակերպության. բայց կարողանում են առաջին կարևոր քայլերն անել հայ որբերի ու կանանց հավաքագրման աշխարհական ներություն: 1918թ. վերջում ավելի է սպավարանում անապատներից քաղաք Եկող հայ գաղթականների թիվը, այդ ժամանակ նոր թափ է սպանում բանակի սպանների և որբախոյզ մարմինների աշխարհանքները, նրանց որբանոցներում գրեղավորելու գործությանը: «Բովանդակ Սուրբոյ շրջաններէն եւ հարկապէս Տէր Զորի անապատներէն որբանոց կը հանեն զարհուրած դիմքերով խեակները որբերուն, որոնց վրայ կու զան աւելան թրքական հարկմներէն փրկուած հայ ցեղին դժբաղդ որբնայիրները»:¹²²

Նշված ժամանակահարվածը Սիրիայի քաղաքական կյանքը բեկում նային էր: Անգլիական և ֆրանսիական իշխանությունները հավակնում էին Սիրիայում իրենց գիրապես գործությունը հասպատել: Տարկ է նշել, որ բրիտանական սպայակույզը, որը 1918թ. ռազմական գլխավոր ուժն էր Սիրիայի գարածքում, հապաղում էր աջակցել հայերի և արևմտյան կազմակերպությունների կողմից իրականացվող հայահավաք աշխարհանքներին: Բրիտանացինների գլխավոր նպատակն էր մերձեցում առաջացնել և համաձայնություն սդուղել մի կողմից իրենց, մյուս կողմից էլ Սիրիայի արաք մեծամասնության միջև: Այնպես որ, բրիտանացի պաշտոնակագրարներն ընդհանրապես խուսափում էին դիմել այնպիսի գործողությունների, որոնք կարող էին գրեղի արաբների համար քրիստոնյաններին ի նպաստ քայլեր համարվել: Բրիտանական այս կեցվածքին անդրադարձել է ՀՔԸՄ-ի ներկայացուցիչ Միքայել Նաթանյանը. «Զափազանց թույլ և կրատրական մօքեցում մը կը ցուցաբերէին, եթի հարցը կը վերաբերէ գրեղական իսլամ ընդունակներու մօտ պահուող հայ երեխանները վերադարձնելուն»:¹²³

Զպեսք է թերազնահագել նաև ֆրանսիական կողմից դերը, չնայած գինադադարին հաջորդած առաջին ամիսներին ֆրանսիական գինվորների թիվը սահմանափակ էր, և դրան համապատասխան օժանդակությունը դարողունակ չէր: Զինվորականները դարագիրներին համախմբում էին զորա-

¹²¹ Հար մը պարմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, նշվ. աշխ., էջ 62:

¹²² ՀԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 1:

¹²³ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը հայ կիններու եւ որբերու ճամբով. գործն ու անոր հակասությինները, տես՝ «Երբ», Բերիոյ Հայոց թեմ, Սուրիահայ դարնայիր, Հայեա, 2006, հ. 2, էջ 170:

նոցներում, որպես նրանց գրամադրվում էր սնունդ և բժշկական խնամք:

Որբախնամ գործունեություն ծավալեցին նաև «Գերմանական արևելյան առաքելությունը», «Հանիայի տիկնանց միությունը» և «Շվեյցարիայի հայասիրական ընկերությունը», որոնց միջոցներով որբանոցներ բացվեցին Սիրիայում: Նշանակալի է օպարերկրացի միսիոներներ Կ. Եփիկեի, Յ. Կյունցիկրի, Վ. Դիկերստի, Ռ. Բյուլի և որիշների երախտիքը Սիրիայում որբանոցներ հիմնելու, հայ որբերին անհրաժեշտ օգնություն ցոյց գրալու գործում: Իրենց ծավալած գործունեությամբ կարելի է առանձնացնել դասիացի Կ. Եփիկեն: Եսունացի Ռ. Բյուլին, շվեյցարացի Բ. Ռուսենին: Վերջինս 2 որբանոց է բացել Հայեպում: Նա հայերին աքսորից փրկելու համար անզամ համոզել է. Զեմայ փաշային Հայեպում գիւղորների համար հագուստ ու անկողին արքադրել: Շոր 3000 աշխատելով, 650 դրամարդիկ և երեխաներ աքսորից գերծ են մնացել այսպես աշխատելով:¹²⁴

Իր հայանապատճեն գործունեությամբ առանձնանում է նաև Լսունուիի Ռ. Բյուլը¹²⁵, ով 1922թ. հայրենիքից մեկնում է Հայեպ՝ որպես «Քրիստոնեական առաքելություն Արևելքում»¹²⁶ մարդասիրական կազմակերպության անդամ: Վյափեղ նրա առաջին գործը հիվանդանոցի հիմնումն էր և բժշկական օգնության կազմակերպումը: Բյուլը կարողաւում է ջուղակագործական և ծեռագործական արիեսագանոցներ բացել և 500 կանանց ապահովել աշխատանքով:¹²⁷ Նրա նախաձեռնությամբ շոր 250 դպրոցակաների համար կրթաթոշակներ են սահմանվում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ սիրիահայությունը հնարավորություն և սրանում վերադառնալ խորհրդային Հայաստան, նա նույնականացնում է Ներգաղթի կոմիտե, բայց նրան մերժում են և քանի որ Էսպոնիա այլևս չէր կարող վերադառնալ, 1951թ. մնանում է Եվրոպա:

¹²⁴ Ազգագեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի. Լու Անձնվա, 1995, հ. 1, էջ 89-90:

¹²⁵ Էսպոնացի միսիոներութիւն 1911թ. մեկնում է. Կիլիկիա և աշխատանքի անցնում Մարաշի գերմանական որբանոցում: 1916թ. Մարաշից փողապիսվում է. Հարուսեի գերմանական որբանոցը: 1919թ. նա հարկադրաբար հևոանում է. Էսպոնիա, 1922թ. մնանում է Հայեպ:

¹²⁶ Կազմակերպությունը հիմնադրվել է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում 1922թ. դեկտեմբերի 6-ին: Կազմակերպության նպատակն էր մուսուլմանական շրջաններում օգնություն կազմակերպել Մերձական Արևելքի բրիստույսաների համար: Կազմակերպությունը Հայեպում ստեղծել էր իր կայանը. որն էլ ուներ հայկական և արարական մասնաճյուղեր:

¹²⁷ Գրիգորյան Վ., Հայությանը և վիրաված կյանք, Երևան, 1996, էջ 31:

Մեծ է նաև Կ. Եփիեի¹²⁸ կատարած աշխարհանքը, ով հայ որբերին ու կանանց հավաքագրման աշխարհանքներում համագործակցում էր արաք բեղվինների, դեղական իշխանությունների ու անհարմանի հետ:

Հայ երեխանների մասին խոսելիս հնարավոր չէ չանդրադառնալ թրքացման խնդիրն: Այս գործով հեքունդականորեն գրաղկում էին Հային Եղիպար, Նիզյար Խանումը, ովքեր մեկնել էին Սիրիա՝ որբերին անձամբ վարժեցնելու թուրքական կենցաղին: Հայուկ որբանոցներ բացելու ծրագիրը գործում էր համաձայն 1915թ. դեկտեմբերի 12-ի հեռագրի, որտեղ Թալեաթը պահանջում էր. «Հայաքեց՛ք եւ սնուց՛ք միայն այս որբերը, որոնք չեն կրնար յիշել զուլումը, որուն ենթարկուեցան իրենց ծնողները»:¹²⁹ Խնայելով միայն 5-ից փոքր երեխաններին՝ նրանք թուրքական հավուկ որբանոցներում պետք է մեծանային ու հետագայում ծառայեին պատերազմի պարճառով թուրքերի ունեցած մարդկային կորուսաքը լրացնելուն: Նույնիսկ խլամացած հայ երեխանների պարագայում թուրքերը նրանցից վրանգ էին զգում, մրգածելով, որ նրանք կրկին իրենց հայրենակիցների մով կարող են վերադառնալ:

Արաբները գիրակցում էին, որ նոյն թրքացումն ուղղված էր նաև իրենց դեմ: «Երիտրուրբերի թրքացման քաղաքականությունը գարածվում էր նաև ոչ թուրք մուսուլման ժողովուրդների՝ արաբների, պարսիկների, եգիպտացիների, հնդիկների վրա, որոնց նրանք չեն վերաբերվում որպես հավասարների»:¹³⁰

Տեղահանության և կորորածների ընթացքում թուրքերն աշխարհում էին իսլամացնել հարկապես Սիրիա գարագրված հայերին: Կրոնափոխ հայերին թուրքական կողմը կյանքի երաշխիք էր խոսքանում: Բայց նման դեպքում էլ նրանց կյանքին վրանգ էր սպառնում: Արաբների վերաբեր-

¹²⁸ Դասիացի միափունքուիկ Կ. Եփիեն արդեն 1903թ. սպանծնել է Ուրֆայի որբանոցի 300-350 հայ որբերի խնամքը: 1915թ. գլուխահանությունների ու կորորածների ժամանակ ևս ոչինչ չէր խնայում հայ գարագրիներին օգևություն ցուցաբերելու համար: 1917թ. վախառողջության պատճառով Եփիեն ստիպված էր հայերինք վերադառնալ, որիտեղ հողվածներով և դասախոսություններով, հայերի կորորածների մասին իր վկայություններով փորձում է արևմտյան աշխարհին տեղյան պահել կապրարվող ոճի մասին: 1920թ. Կ. Եփիեն նոր ծրագրերով մեկնում է Հայեալ՝ հայ զաղթականության զիխավոր կյանքունագրելով, իր հայանապաստ գործունեությունն այդիքեղ շարունակելու համար: 1922թ. Կարեն Եփիեն նշանակվել է Ազգերի լիզայի կողմից առևանգված հայ կանանց և որբերին ազատելու նպատակով ստիպված հանձնախմբի լիազոր ներկայացուցիչ:

¹²⁹ Ասկուսյան Ա., նշվ. աշխ., էջ 187:

¹³⁰ عنوان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، ص 236

Օսման Աթ- Թուրք, նշվ. աշխ., էջ 236:

մուսքը նման դեպքերում միշտ չէ, որ դրական է եղել: «Ամա քաղաքում 1916թ. հուլիսին մի խումբ հայերի կրօնափոխ լինելու փասբը դրական արձագանք չէր սփացել գեղի արարմերի շրջանում, որոնք մեծ աղմուկ են բարձրացրել ու արգելել նման հայերի մուտքը մզկիթ:»¹³¹ Այս դեպքերի մասնամասներին որպես ականափես անդրադառնում է արևմտահայ գրող Ե. Օփյանը:¹³² «Ամայի մութասարիֆը Օփյանին ու իր ընկերներին նախ ասել էր, որ «ինքը ամօթ կը զգայ կրօնափոխ լինելու առաջարկ մը թնելու Հայերուն, բայց դժբախփարաք պարագաները կը սփիպէին գինքը այդ դիմումը ընելուն», բանի որ դա միակ միջոցն էր նրանց կյանքը փրկելու համար:»¹³³

Ե. Օփյանը նշում է, որ «Ամայում երկու հոգք կար՝ մի մասն ուզում էր իւլամ ընդունել, մյուսները՝ դիմադրում: Անգամ ուզողները գրագնապում էին, հավրկապես նրանք, ովքեր հասուն աղջկներ ունեին: «Կվահնային, որ այս կրօնափոխութեան հետքնանքը պիտի ըլլան խառն ամուսնութիւնները, ինչը որ կը սարսափեցնէր գիրենք»:¹³⁴ Ուրիշ խնդիր է կար՝ «ոչ-ոք կ’ուզէր առաջին քայլը րնել եւ օրինակ րլալ ուրիշներու»:¹³⁵ Միայն Դամասկոսից հայերի խալամացման հանձնարարությամբ ժամանած Քեմալ Ալիին է հաջողվում լուծել խնդիրը: Չորս-հինգ օր հետո Համայում գվեսող հինգ հազար բարագիր հայեր հարկադրաբար խլամանում են: Այս իրողությունը «շատ զայրացուց գրեղացի Վրաքները, որոնք կ’ըսէին թէ: այս ձեռով խլամացումը հակառակ էր մարզարէին պատրիառներուն»:¹³⁶

Հայերի խալամացման վերաբերյալ թուրք գործիչ Ֆալիհ Ռոֆք Աթայր նշում է. «Չերքեզների քրդերի և մյուսների նման հայերի արտաքրումը դեպի Սիրիայի խորքերը նոսրացնելու էր արարմերով խիմ թնակեցված վայրերը: Նույնիսկ մի հարուկ հանձնաժողով սփեղծվեց, որպեսզի հայերին և գուն,

¹³¹ كيفور كيان ر., في أصول الجماعات الارمنية في الشرق الأوسط، ص 32

أرمن 1917-1939، باشرف ريمون كيفور كيان، ليغون نورديكيان، فاهي طاشجيان، جامعة القديس يوسف، 2010

Գնորդյան Ռ., Հայ համայսքի արմադիները Մերձավոր Արևելքում. Լ. 32, տես «Հայերը 1917-1939», Ռ. Գնորդյանի, Լ. Նորդիշյանի, Վ. Թաշճյանի խմբագրությամբ, Բեյրութ, 2010:

¹³² Ե. Օփյանը հայկական գրեղահանությունների, կուրուածների ականափեսներից Լ. եղել: Սիրիայում անցել է բավական երկար բարագրության ճանապարհ: Նա իր «Ասիծնեալ փարիսներ 1914-1919/անձնական յիշափակներ/» գրքում հուշագրության ձևով մասնամասնել է, այդ ժամանակահարվածի բազմաթիվ արժեքավոր փասփեր՝ կը լուսաբարձր կ’ըսէին թէ: Որ իր երեք բարվա աքսորը փոխարինեց երեսուն բարվա գրական սփեղծագործությանը:

¹³³ Օփյան Ե., Անիծնեալ փարիսներ 1914-1919 /անձնական յիշափակներ/, Կազմեց՝ Գրիգոր Ցակորենանը, խմբագիր՝ Գ. Գասպարեան, Երեւան, 2004, Լ. 320:

¹³⁴ Նշվ. աշխ., էջ 231:

¹³⁵ Նույն գեղում:

¹³⁶ Օփյան Ե., Նշվ. աշխ., էջ 233:

և հող դրամադրվի՝ մահմեդական դառնալու պայմանով»:¹³⁷

Տարկ է նշել, որ հայ տարագիրների մի սրբար զանգված արաբացվել է: Հայերը համակերպվել էին բեղվինների սովորություններին ու բարքերին ու հարկանշական է, որ «առանց բռնական միջոցներու»:¹³⁸ Տարկ է նշել, որ աստիճանաբար դժվարանում եր նրանց այդ միջավայրից հեռացնելոր: Այս հանգամանքն ունի իր բացապրությունը: Արարտների կողմից որդեգրվելու, աշխափանքի կամ ծառայության անցնելը, որը դվյալ պարագայում իրենց համար ուղղակի փրկություն էր, և նրանց այն գիրակցումը, որ հայությունը ցեղասպանության հետքանըռով լիովին ոչչացվել է, հիմք են փալիս եզրակացնել, որ տարագրվածները հաշվվել էին հայկական ինքնությունը կորցրած լինելու փաստին և համակերպվել արաբական միջավայրին, կենցաղին ու սովորություններին:¹³⁹

Ասվածի ապացույցն է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին հասցեագրված նամակը:¹⁴⁰ Նամակի հեղինակ Զ. Վրեյանը հավաքիացնում է, որ Սիրիայի Զեզիրեն¹⁴¹ նահանգում գոյություն ունի հայկական ցեղախումբ՝ հայամացած հայերով՝ Աշիրաթ Արման Ալ-Շաթար՝ Հայոց սիյուռի ցեղախումբ, որը 1998թ. փետրվարի 2-ին վերանվանվել է Աշիրաթ Արման Ալ-Մուսլիմա՝ Հայոց իսլամական ցեղախումբ: Աշիրաթը ունի իր կանոնագրությունը, անդամների թիվը ըստ Միհրան Դովիաննես Նեքիմյանի և Եղիա Սիսոյանի որդի Արդալ Ռահման Մուհամմադի, հասնում է 25 հազարի, վերջիններս արարտների ու քրեերի մով մնացած հայորդիների հետքնորդներն են: Մի մասն արաբացած են, մյուս մասը՝ քրդացած: Կրոնով իսլամ սուսնի են, չնայած բոլորը հայդարարում են, որ իրենց երակներում հայի արյուն է: Ումանք կրում են հայկական, ումանք՝ իսլամական ասլուներ: «Քայց ասուք լուսանցքի վրայ ապրող մարդիկ են. ոչ քիւրդը կ'ընդունի զիրենք որպես իսլամ եւ քիւրդ, ոչ ալ հայը կ'ընդունի զիրենք որպէս հայ»:¹⁴² Ցեղախումբի կանոնագրության մեջ հսկակ նշվում է, որ այն պետք է հարի Կառավարությանն ու հեռու մնա քրդական քաղաքական-անջափողական շարժումներից: Ցեղախումբը սպեղծվել է՝ հաշվի առնելով դրամածաշրջանում փիրող ցեղախմբային դրությունը, եթե ցեղա-

¹³⁷ Ազարեան, Լ., նշվ. աշխ., 1999, էջ 29:

¹³⁸ Սիրմեեան արք. Ա., Պարմութիւն ..., հ. Ա, էջ 507:

¹³⁹ Ազարեան Լ., նշվ. աշխ., հ. 2, էջ 228:

¹⁴⁰ ՀՀ ԳԱԱ ՀՅԹի գիրական ֆոնդեր, բաժին 47, թպ. 12:

¹⁴¹ Զագիրաս գրնավում է Ձուրիքայի և Իրաքի սահմանում և այդպես է անվանվում Եփրաստ և Տիգրիս գետերի միջև գտնվելու պատճառով: Կարչական կենդրոնն է Հասաքեն Հասիթի:

¹⁴² ՀՀ ԳԱԱ ՀՅԹի գիրական ֆոնդեր, բաժին 47, թպ. 12, թ. 6:

խումբը պաշտպանում է իր անդամների իրավունքները:

Վրաբները գիտակցում էին իրավիճակի բարդությունը և հասկանում էին, որ միայն գեղերում ցուցաբերված օգնությամբ հազարավոր որբեր չեն կարող փրկվել, ապաստան ունենալ: Դրա համար պես էր որբերին ցուցաբերվող օգնությունն առավել կազմակերպված լիներ և ֆինանսավորվեր: Եվոտպական երկրներին ուղղված իրենց նամակում թվագրված 26 հունվար, 1916թ., մի խումբ ազդեցիկ շեյխեր հետևյալ կերպ են նկարագրել իրավիճակը. «...Անզամ Արար ճամփորդներու սիրուն այ շարժած է և յաճախ այս անիրաւութեանց դեմ բողոքի մոած գիրենք: Անոնք կենդանի վկաներն են այս արարքներու, անջի սահմուեցուցիչ պատմութիւններ կը պատմեն մեզի արցունքով աչքերով»:¹⁴³

Որբախնամ գործունեության աջակցել է նաև Դամասկոսի վայի Թափսին բեյը, ով բարյացակամ էր հայերի նկարմամբ: Ըստ Զիլինսկիրյան եպիսկոպոսի՝ վային եախաձեռնություն էր սրանձնել հայ որբերի համար որբանոց բացել, ինչպես նաև ապաստարան՝ հայ այրիների համար, գեղերում ասեղնազործությամբ և գորգազործությամբ լին գրադպում: Եվ չնայած ճեղնարկված բոլոր միջոցառումներին՝ Եղիշե Զիլինսկիրյան, ով մինչև 1917թ. Հայեպում էր ապրել, նշում է, որ նրանք ապրում էին սարսափելի պայմաններում:¹⁴⁴

Սալեհ Զահր Աղ-Դինն իր «Արարների անկեղծությունն ու հայերի երախափագիրությունը» աշխափության ««Այ-արարական բարեկամություն» ելեթազիտում հագրուկ անդրադարձ է կարստում արար կանանց, ովքեր վերցրել ու խնամել են հայ որբերին. «Արար կանայք հայ որբերին աջակցելու հարցում մեծ ներդրում ունեն. նրանք փորձել են թեթևացնել որբերի ցավը և պարահական չեն, որ շաբ հայ երեխաներ արար կանաց «մայրիկ» են անվանել»:¹⁴⁵

Նայ որբերի համար որբանոց է հիմնվել նաև արաբական կողմի ջանքերով. Սիրիայի կրոնավոր, շեյխ Արդալիա Մուսային չորս ամսվա ընթացքում ծնողազուրկ հայ երեխաների համար որբանոց է կառուցել Սիրիայի Համա քաղաքում՝ իր վրա վերցնելով ծախսերի հետ կապված ողջ դժվարությունները:¹⁴⁶

¹⁴³ «Արձագանգ Փարիզի», 10.06.1916:

¹⁴⁴ Զիլինսկիրեան Եղիշե եպիսկ., նշվ. աշխ., էջ 32-33:

¹⁴⁵ صالح زهر الدين، أصلة العرب والوفاء الارمني، ص 246

Սալեհ Զահր Աղ-Դին, Արարների անկեղծությունն ու..., էջ 246:

¹⁴⁶ Նշվ. աշխ., էջ 245:

Հայկ Թորոյեանն¹⁴⁷ իր հուշերում անդրադարձել է արաբների ընդվզք-մանը. «Իրենց մեծամեծները ... բուռն կերպով բողոքեցին Հալէպի կառավարութեան և 70 մասուկներու ոճրագործը ծերրակալելով, յանձնեցին դափարան, որ այդ հրէշը կախաղան բարձրացուց Արաբներու սպիտակին վրայ»:¹⁴⁸ Վլսպես որ, արաբները ոչ միայն օգնություն էին ցուցաբերում հայ գարագիրներին, այլ հարկ եղած դեպքում փորձում էին կանխել թուրքական դաժանությունները կամ էլ վերջիններիս պարասիանալիքության ենթարկել:

Ներցեղասպանության ողջ ընթացքում արաբները բազմաթիվ անգամ-ներ աջակցել են հայ գարագիրներին: Ասկածի ապացույցը արաբների կողմից փրկված երեխաններն էին:¹⁴⁹

Շվեյցարացի միսիոներ Յ. Կյունցերը, ով Հալեպում հայանպաստ գործունեություն է ծավալել, հիշաբակում է իր կոնջ մուսուլման-արաբ ընկերութիւններին և գրում. «Նրանց մեջ կային մեծահոգի անձինք, ինչպես օրինակ մի արաբ, ով մի կույր մարդու և չորս երեխանների իր դանն էր պահում, որոնց կերակրելու գումարն ինքն էր վասպակում»: Բացի այդ նա փեղի կադիին¹⁵⁰ է օրինակ թերում ու ընդգծում. «Կադիի նման շաք մուսուլման-ներ կային, ովքեր գույք մարդկային կարեկցությունից ելնելով, փրկում էին հայերին»:¹⁵¹

Տարկ է նշել, որ հանդիպում են նաև արաբների բացասական վերաբերմունքը փասդող վկայություններ, որոնք թերևս սակավաթիվ են, բայց

¹⁴⁷ Հայկ Թորոյեանը հալեպցի հայ զինվոր էր, ով գերմանացի սպա Էլլմասի հետ ծառայության թերումով ճամփորդել է Եփրամի երկայնքով՝ հասնելով Բաղդադ: Կարողացել է թուրքական բանակից փախչել Թեհրան, հետո Կովկաս: Նա 1916թ. Թիֆլիսի հայ թերթերի միջոցով փեղենացրել է. Թուրքահայաստանի նահանգների ողբերգության մակարանասները: Պարերազմի ավարտից հետո նա ծպված վերադարձն է Միջազգեական կազմակերպելու հայ գարագիրների փրկության գործը:

¹⁴⁸ 1915. Աղեկ եւ վերածնուն, էջ 60:

¹⁴⁹ Կարմոնցի Հռվիաննես Մութաֆյանը պատմում է, որ Ամենա անունով արաբ մի սպիկան Դեյր է.զ.-Զորում հաճախ օգնել է հայերին փախչել բարավաններից, մի քանի անգամ նրանց փրկել է ավազակների հարձակումներից: Վեզամ վաճառելու նպատակով բերված ցանկացած բան սարդիկանը վերցրել ու բաժանել է հայերին, դեռ Տէր-Զօր, նշվ. աշխ., էջ 84: Վերապող Մարիամ Գարիկյանը պատմում է, որ Դեյր է.զ.-Զորում արաբները երեմն «հաց կամ կերակոր կը բերէին և կը բաժանէին իրենց մեռեներուն հոգոյն համար»: Տե՛ս նոյն փեղում, էջ 192:

¹⁵⁰ Կադի՝ Շարիաթի դարավոր, ով Ղուրանի և Սուննայի ինքնուրույն մեկնարանությունների հիման վրա ընդունում է որոշումներ: Իր կարգավիճակով նա համարվում է այդ բաղադրի կամ շշանի գիշավոր մուսուլմանը:

¹⁵¹ Künzler J., Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918), Zürich, 1999, s. 110.

իրականություն։¹⁵²

Վշմ անդրադառնանք դրաբագիր կանանց խնդրին: Կանանց փրկելու խնդիրը ցեղասպանությունից հետո նոյնպես բավականին լուրջ էր: Ի դրաբերություն որբերի, որոնք վաղ հասակում հայրներով արարական միջավայրում, ասպիճանաբար համակերպվում էին իրենց նոր կենցաղին, գիտակցական մակարդակով չեր կարարվում, իսկ կանայք սովոր էին ընկանածիրի զարափարին. երբեմն ինքնակամ էին գնում դրան, երբեմն՝ բոնի կերպով:

Ժ. Թաութելս իր վկայություններում նշում է, որ գարագիրները չեն կարող երկար մնալ Դեյր էգ-Զօրի խևամ ընակիչների գումարում թուրքական իշխանությունների խիստ հսկողության պարբռով. որի հետևանքով «յիշեալ կիններուն մօտ 4 հազար գախուսաք դրուա և ապաստանեցաւ պետեիններու աշիրէններուն»:¹⁵³

Չնայած հարկ է նշել, որ կանանց խնդրում երիտրուրբական կառավարության հետքնողականությունը մի քի թուլանում էր, բանի որ կրանց հետքագ գործունեությունը հիմնականում կննդրունանում է. երեխանների վրա. իսկ կանայք պարերազմի դարիններին. հիմնականում, օգտագործվում էին որպես աշխափուժ:

Հայ ազգային ինքնություննը վերականգնելու խնդիրը բոլորին այլ էր հայ կանանց ու աղքակների պարագայում: Այդ կանայք չեն գանձանում լրել իրենց արար ամուսիններին զանազան պարբռություն՝ որոշ կանայք ինչոր չափով բարվոր կյանք էին կարողացել ապահովել իրենց համար. մյուսներին արաբները փրկել էին թուրք ուստիկանների ձնոքից. ոմանք իրենց արար ամուսիններից արդեն երեխաններ ունեին ու չեն ուզում նրանց լրել: Ինչպես որբերի, նոյնպես և կանանց ազատագրման և ապաստան դրալու

¹⁵² Հայեպում գերմանական վարժարանի ավագ ոստիցի, ազգությամբ գերմանցի Մ. Նիպագեն 1916թ. գրում է. «Որոշ արաբներ հայրաբարում են. որ իրենք են սպանել հայերին՝ կառավարության հրամանով»: Տե՛ս The Horrors of Aleppo. Seen by a German eyewitness, London, 1917, p. 12. Դրան զուգահեռ կարելի է նշել, որ Մ. Նիպագենի վկայություններում կան արաբների բարյացակամ վերաբերմունք փաստող վկայություններ. «...մուսուլման արաբները թափահարում էին իրենց գործիչները ի նշան անհամաձայնության և չեն կարողանում զաքել իրենց արցունքները՝ գուսնելով դրաբագիրների անցնող բարավանները»: Տե՛ս նոյն փեղում, լո 7-8: Արաբների կողմից հայ որբերի ու կանանց նկարմամբ մեծամաշչդրար, դաշտան վերաբերմունքի եզակի օրինակներից և հայերի դրաբագրումն իրականացնող Արդարական Փաշա անունով արար պաշտոնայի արարքը: Վերջինիս Դեյր էգ-Զօրում հանձնարարվել էր 1500 որբերի վելափոխություն. որուց ևս քշում է. Մարաքի անապատը. մի մասին քարանձավում ծխախտեղ է, ատում. մի մասին՝ պայթեցնում: Մնացածն էլ, որոնք վկար էին, հիվանդ, չոր խորով ծածկում է, ու խորով այրում: Հայ որբերի այս բազմությունից կենդանին են մնան միայն Ռուբարոյի Օնիկս ու Շապին Կարահիսարի Անսան: Տե՛ս Ազարեան Լ., եղվ. աշխ., հ. 1, լո 87:

¹⁵³ Տէր-Զօրի դէպերը պարերազմի ժամանակ, դրեն «Ազգակ», 24.04.2004, լո 54:

հարցերում իրենց մեծ ներդրումն ունեն Էմիր Ֆեյսալն ու նրա կողմնակիցները, ովքեր գեղերում համակարգում ու կազմակերպում էին հայ կանանց հավաքագրման աշխատանքները: 1918թ. Ֆեյսալը Հալեպի և ահանձի ռազմական ուստիկան Զաֆար Ալ-Վարդիին կարգադրել էր հայերի ցուցումներով վերջնել բոլոր իսլամացաններին, նոյնիսկ «նիբահով»՝ այսինքն պաշտոնական-կրոնական ամուսնությամբ արաբների հետ ամուսնացած և երեխաներ ունեցող կանանց: Ֆեյսալի առաջարկով որոշվել էր նման կանանց հանձնել «չեզոք գուներին»:¹⁵⁴ Սիրիայում նշված շրջանում գործում էին հափոկ Նշանակության «չեզոք գուներ»՝ երեխաների ու կանանց համար: Երեխային հանձնում էին դվյալ շրջանի ֆրանսիացի կառավարչին: Եթե որևէ կասկած չէր լինում երեխայի քրիստոնյա ծագման հարցում, երեխան գեղավորվում էր որրանցում, հակառակ պարագայում երեխան գարվում էր «չեզոք գուն», որը մնում էր առավելագույնը մեկ շաբաթ:¹⁵⁵

Նշենք, որ 1919թ. սեպտեմբերին Դամասկոսում իսլամ ընդառնիքներից հավաքված կանայք ու երեխաները կազմում էին միայն 10 դրույթ նոյն գարածքում իսլամ ընդառնիքներում պահպողների թվի համեմատությամբ:¹⁵⁶ Վրաբներին շաբ հաճախ զայրացնում էր այն փասդը, երբ ազադագրված այս կանայք իրենց իսլամ ամուսնություններից ծնված երեխաներին ուզում էին իրենց հետ գանձել:

1919թ. փետրվարին Հալեպում նման կանանց համար ապաստարան է սկսել գումար, որի նյութական ապահովածությունը և ղեկավարությունը 1920թ. փետրվարից ստանձնում է ՀԲԸՄ-ը: Նմանօրինակ ապաստարան էր հիմնվել Դամասկոսում դեռևս 1919թ. հունվարին: Ապաստարանն ապահով վայր էր, որ ընդունվող հայ կանայք վարահ էին, որ դեղի իսլամ ընդառնիքները չէին կարող իրենց կրկին առնանձել: Բայց այս դեղի իսլամ երկկողմանի էր, կարեի է ասել նաև եռակողմ. կանանց դուրս բերումը խլամական միջավայրից, կնոջ ցանկությունը հայությանը վերադառնալու և երրորդ ու ամենալուրջ խնդիրը՝ արդյոք համաձայն էր հայությունը նրան ընդունել: Եղել են բազմաթիվ օրինակներ, երբ հայ կանայք, չկարողանալով

¹⁵⁴ «Կիլիկիա», 27.06. 1919:

¹⁵⁵ Այս դաս կառավարիչն ուներ հայ և թուրք օգնականներ: Եթե մեկ շաբաթվա ընթացքում երեխայի քրիստոնյա ինքնությունը չէր հաստարվում, ևս հանձնվում էր իսլամ ընդառնիքին: «Չեզոք գուներ» գործում էր նաև կանանց, հարդկապես «նիբահով» ամուսնացանների համար: Որոշվել էր այդախիսներին պահել «եզոք գուն»՝ 15 օրից մինչև մեկ ամիս, որից հետո նրանք պետք է հսկակ որոշեին՝ ցանկանում են վերադառնալ իրենց հայութեակիցների մոտ, թե՝ ոչ:

¹⁵⁶ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը բնես «Երթ», հ. 2, էջ 168:

համակերպվել իրենց նոր կարգավիճակին և պայմաններին. որոշել են դուրս գալ ապաստարանից ու վերադառնալ իրենց խլամ ամուսինների մով:

Շար ու շար հայեր անպարփություն էին համարում նման կանանց հավաքագրել և, հարց էր ծագում, կարիք կար. որ այդ կանայք վերադառնալ կամ ինչ դեր կարող էին նրանք ունենալ հայ ազգի վերակերպման հարցում: Կարելի է ենթադրել, որ կար այն համոզմութքը, որ բռնի սամուստություններն այդ կանանցից խլել էին ազգային ինքնության ամեն մի զգացում: Ահա այսպես նկարում ենք որոշ սկզբունքային հակասություններ՝ հայ որբերին ու կանանց վերադառնելու խնդրում: Այս առանձնաշնորհ վերաբերմութքը, որ փածվում էր որբերին վերադառնելու համար, կանանց պարագայում վերապահությամբ էր կարարվում: Նոյն գրամարանությամբ նրանք համոզված էին, որ այն, ինչ հենարավոր է կերպել որբերի ճանապարհով, անհնար է հասնել հայ կանանց պարագայում: Այսպիսի մրածելակերպ նկարում ենք Մ. Նաթանյանի մով. ով 1919թ. հունիսի թվակիր նամակում անդրադառնում է հայ կանանց հավաքագրման հարցին. «Աղջկանց մնանքը եւ կիսերը եթե կ'ուզեն գալ, խնդիր չկայ: Իսկ եթե չեն գար, խնդիր չկայ նորէն, աղեկ կ'ընեն փեղերնին կրկին մնալով: Անոնցմ, ալ օգուր չկայ մեզ»:¹⁵⁷

Այս գրեսակ կանանց նկարմամբ անհանդուրժող վերաբերմունք նկարում ենք նաև դասիացի միսիոներ Կ. Եփփիի գործունեության ընթացքում: Նա նման գրեսակեփ է արդահայքում Հալենի առաջնորդ Ա. Սյուրմեյանին գրած նամակում. «Մրացայ ձեր նամակը Երամիկ կոչվուող կնոջ մասին: Կը ցախմ Ձեզի յայգիներու, որ կրրականապես կ'մերժեմ ընդունի իշխան Երեխանները... զուր հայկական գրեսանկինեւ, չեմ կրնար ընդունի այս խառնածին Երեխանները»:¹⁵⁸

Կարեն Եփփեն և նրա գաղափարակիցները մրավախություն ունեին. որ այդ երեխանների թուրք, արար և քուրդ հայրերն ինչ-որ մի ժամանակ կպահանջեին իրենց զավակներին:

Կա ևս մեկ դեպք, երբ «կիրուած երեսներով Նուրիցան» արար ամուսնու մորից փախչում է իր հարազարֆների մով՝ Քեսար, բայց «ասոր կիրուածները, շարժուձեները ահազին մեկնարանութեանց եւ քաշքուկի գնդիք կու դրային»: Հասարակության համար նա արդեն «կիրուած երեսներով կին էր, պետեւիի աւելուցք»:¹⁵⁹ Նրա նման շարերը չեն կարողանում հետ վերադառնալ հայությանը:

¹⁵⁷ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը ..., տե՛ս «Երթ», հ. 2, էջ 189:

¹⁵⁸ Նշվ. աշխ., էջ 190:

¹⁵⁹ Արեւեան Գ., Ցեղան նահարակութիւն, Այնար, 2005, էջ 174:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած սկզբնական դժվարություններին՝ հայ կանանց չհանձնելու, նրանց հայոթյանը վերադառնալու առաջարկի մերժմանը, շարժերն են անցել այդ ճանապարհով, կարողացել են ինքնահասպատվել ու շարունակել իրենց կյանքը հայոթյան մեջ:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ հայ գարագիրների մի զանգված, ապրելով արարական միջավայրում, սովորում էր նրանց կենցաւին: Եղել են դեպքեր, երբ Սիրիայի կառավարության, հայկական, ֆրանսիական կողմերի պահանջներով հայերին հանձնելու հրաման է դրվել, հայերն իրենք չեն ուզել կրկին վերադառնալ, անզամ փախչել են: Մնալով անապահություն, ոմանք կրոնափոխ են լինում: Նրանք ժամանակի ընթացքում համակերպում ևն իրենց ներկային ու միզուցն վերադարձի պարագայում ապագայի անորոշությունից դրդված մնում են՝ գևահարելով արդեն իրենց ունեցած ծեռքբերումը: Նման հայ կանայք բազմիցս նշել են. «Չենք կրեար ուրանակ, մենք հայուիիներս որ մեծաւ մասամբ վայելեցինք արարներու վեհանձնությունը և բարիքներ...իբր գործունեայ գանդիկիններ արժանացանք իրենց գևահարպականին»:¹⁶⁰

Արարների կողմից հայերին փրկելն ազգային գրեսանկյունից մի քանի մեկսարանություն ունի: Բնականարար, հայ ժողովրդի ինքնության պահպանական համար առավել ցանկալի լրաբերակն այն էր, որ արարները, փրկելով հայերին, որպես պարբաղիք պայման նրանց հանձներին, սակայն, որոշ դեպքեր ցոյց են դաշին, որ նրանց միշտ չէ, որ վերադարձել են, իսկ ցավալին այն է, որ հայերը իրենք չեն ցանկացել վերադառնայ: Այսպիսով, հայոթյան այդ շերտը կորցրել է իր ազգային ինքնությունը՝ դադարելով պարկանել իր էթնիկ խմբին:

Արարների կողմից որքահավաք կազմակերպելով, հայ երեխաներին օգնություն ցուցաբերելով մի քանի մակարդակներով էր իրականանում: Արարները հաճախ օգնություն են ցուցաբերել հայ գարագիրներին՝ իրենց իսկ շահերից ենթարկվ: Որդեգրելով հայ երեխաներին ու կանանց՝ նոր աշխարող ծեռք էին ավելացնում, մյուս կողմից՝ կարող էին գումար վասփակել՝ հեգուազյում նրանց վաճառություն: Սակայն առավել համապարան բնույթ է, ունեցել հայ որրերի ու կանանց հավաքագրման աշխարհանքներում արարների բարյացակամ վերաբերմունքը: Արար բնակչությունը և Ֆեյսալի կառավարությունը հեգուողական բաղարականություն են վարել, ինչն ապահովել է հեարավորինս շագ երեխաների ու կանանց վերադարձ հայկական միջավայր: Աշխագության շրջանակներում ըրված արարների օգնության բազմաթիվ փասթերն արժեվորում են արար ժողովրդի բարեկամական մոփեցումը հայերի նկարմամբ:

¹⁶⁰ Տեր-Զօր, Աղլիլի վերապրոդներ, էջ 146:

Այսպիսով, նշված ողջ ժամանակահավածում արարևերի օգնությունը փիրապելող է եղել, իհարկե, գրանցվել են որոշակի վայրիվերումներ. որոնք պայմանավորված են եղել քաղաքական խնդիրներով: Մինչև 1918թ. գիրող տովի մթեռողոքն արար ընկանիքներին հևարավորություն չէր տալիս երկար ժամանակ հյուրընկալել գաղթականներին, բայց կար ավելի լորջ պարճառ՝ իշխանությունների հաղածանքը. փորձերը խոչընդունելու ցանկացած մարդասիրական նախաձեռնություն: Այնուհենքն՝ Ֆևսադի իշխանության գործիք ընդունված որոշումներն ու հեքեռդականությունները. իսկ ֆրանսիական մալտակային իշխանությունների գործիքներին կարծես ամփոփում ու ի մի լին բերվում այդ աշխափանքները, շեշտը դրվում էր երեխանների գեղավորման ու որբանոցներում երանց կյանքի ապահովության խնդիրների վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՌՈՇՈՒՄԸ ՀԱՅ
ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՖ,
ԷՄԻՐ ԱԼ-ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

2.1 ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՖ, ԷՄԻՐ ԱԼ-ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ. ԱՆԴՐԱՇԱՐՋ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻՆ

Սիրիայի արաբ ժողովրդի օգնությունն ակնհայք էր ցեղասպանության առաջին փարիներից նեթ, երբ հայ փարազիրները հասնում են սիրիական անապատները, ուր «նրանց անխուսափելի մահն էր սպասում»¹⁶¹ ու «մարդկային ուրվականների նման քայլում էին Միջազգեպքի անապատներվ»:¹⁶² Հայ փարազիրները կարճ ժամանակում կարողանում են արաբների բարյացակամ վերաբերմունքին արժանանալ, որին նպաստում էր երկու ժողովուրդների՝ թուրքական քաղաքականության զոհը լինելու գիտակցությունը: Այս գաղափարը հանդիպում ենք մի շարք արաբ պատմաբանների աշխափանքներում, համաձայն որի՝ հայերն ու արաբները թրացման ու կովորածների զոհ են եղել:¹⁶³

Այս գիտում փորձ է կագարգում քննարկել Մեքքայի հոգևոր առաջնորդ շերիֆ Հուսեյն իր Ալիի դիրքորոշումը հայ փարազիրների նկարմամբ: Որպես խլամական հասարակություն՝ արաբների համար որոշչ էր իրենց հոգևոր և աշխարհիկ առաջնորդի կարծիքը: Իսկ այս պարագայում վերջինս անմիջական ազդեցություն ուներ Սիրիայի արաբ ժողովրդի վրա՝ հաշվի առնելով ժամանակի քաղաքական անկայուն իրավիճակն ու նրա որդու՝ Ֆեյսալի, փյուլ փարածաշրջանում ունեցած ներակարարությունը:

Նշված ժամանակահարվածում արաբ ժողովրդի բարեկամական վերաբերմունքն ավելի հասպատուն է դառնում և նրանց օգնությունն ավելի պաշփռնական քննության մեջ է սպասում Մեքքայի շերիֆ ու նմիր Հուսեյն իրն

¹⁶¹ Саид А., Восстание арабов в XX веке, Москва, 1964, стр. 79.

¹⁶² محمد رفت الإمام، القضية الارمنية في الدولة العثمانية 1923-1878 ، القاهرة، 2002، ص. 66.

¹⁶³ Մուհամմադ Ռիֆայ Ալ-Խմամ, Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում 1878-1923թթ., Կահիրե, 2002, էջ 66:

صالح زهر الدين، أصلة العرب والوفاء الارمني، ص 245.

Սալիհ Զահր Ալ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 245:

نعم البافى، مجازر الارمن و موقف الرأى العام العربى منه، ص 76.

Նայիմ Ալ-Ցաֆի، Հայերի ցեղասպանությունն ու..., էջ 76:

Ալիի 1916թ. հունիսի 26-ի և 1917թ. մարտի ուղերձներից հետո:¹⁶⁴ Բացի այս երկու ուղերձներից Շերիֆը 1918թ. ապրիլին /հիջրայով՝ Ռաշար 18. 1336թ./ հափոկ ուղերձ-հրովարդակ¹⁶⁵ է, գրել Եմիր Ֆեյսալին և Վրդ Ալ-Ազիզ Ալ-Զարբային, որ պարզաբն է օգնել ու աջակցել հայերին: Հարկապես վերջին ուղերձ-պարգամբ հայ գարագիրների համար բացառիկ կարևորություն ունեցող փաստաթուղթ է, քանի որ այս իր ժամանակի համար օրենքի ուժ է ունեցել և հայ գարագիրների փրկության գործում մեծ դեր է կատարել:

Նշված ժամանակահարվածն ավելի հսկակ պարկերացներու համար հարկ է անդրադառնայ երիտրութքական բաղաքական վարքարանությանը. որն իր ծրագրերի իրականացման համար չէ. բայց խորշում նաև կրոնական գործունի շահարկումից, ժայած արարտերը միշտ խայան իրենց մնացնորդին և նա համարել՝ իմանվելով այս փասփի վրա, որ Մուհամմադին Ղուրանն արարենով է փրկել՝ որպես Ալլահի հավերժական ու անփոփոխ խոսք: Հարկ է նշել նաև այս փասփը, որ գրեթե բոլոր արար պատմաբաններն իրենց աշխափություններում հսկակ գանում են զաղափարական այս գիծը. թե խսան ու թուրանականությունն անհամագրելիքի են: Վրար մորավորականությունը համոզված էր, որ խայանը մի ուղղություն է. խկ թուրանականությունը՝ մեկ այլ, որն ամենակի կապ չունի խսանի խսանի հետ:¹⁶⁶

Ֆայեզ Ալ-Ղուսեյնը «Զարդերը Հայասպանում»¹⁶⁷ գրքի վերջաբանում գրում է. «Ես հասքապում եմ, որ հայերի հետ կագաղաքածր միայն «Միությունն և առաջադիմություն» կուսակցության պատճառով է. եղել: Նրանք այդպես են վարքել հայերի հետ՝ ենթելով իրենց ազգային Փանափիզմից ու նրանց նկարմամբ արելությունից: Խայանը չի արդարացնում նրանց գործողությունները»:¹⁶⁸ «Եղինակը կոչ է ամում բոլոր մուսուլմաններին ընդունել երիտրութքական կառավարությանը, այլապես նրանք էլ մաս-

¹⁶⁴ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، بيروت، 1988، ص 22-26.

Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ. Բևրութ. 1988, էջ 11-26:

¹⁶⁵ مروان المدوار، الارمن عبر التاريخ، بيروت، 1982، ص 657.

Մարութ Ալ-Մուհամմադ, Խշվ., էջ 657:

¹⁶⁶ نعيم اليافي، خليل الموسى، نضال العرب ، ص 67-68.

Նայիմ ալ Ֆաֆի, Խայիլ ալ Մուսա, Արաբների ու հայերի պայքարն.... էջ 67-68:

¹⁶⁷ فائز الغصين، المذابح في أرمينيا، حلب، 1991:

Գիրքը առաջին անգամ լույս է դրեսել 1917թ. Կահինեում: Գիրքը թարգմանվել և փառագրվել է Ֆրանսերեն, անգլերեն /Սյունիք, 1918թ./, գերմաներեն /Ցյուրիխ, 1918թ./ և հայերեն /Նոր Ջուղա, 1920/:

¹⁶⁸ فائز الغصين، المذابح في أرمينيا، ص 58.

Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Զարդերը Հայասպանում, էջ 58:

նակիցը կդառնան այդ ոճրագործությանը, որի հավասարը չկա պարմության մեջ: Ֆայէգ Ալ-Ղուսեյնը իր հուշերն ավարտում է հետևյալ միքով. «Մի կառավարություն, որը գործում է նման ձևով, չի կարող իսլամական համարվել, ոչ էլ իրավունք ունի դրան հավակնելու»:¹⁶⁹ Նրա կարծիքով Երիտրուրքական կառավարության ոճրագործությունները չեն կարող համարվել ոչ կրոնական ֆանաֆիզմի, ոչ էլ իսլամական արմագականության դրսերման ձև:

Միաժամանակ հարկ է եղել, որ Երիտրուրքական կուսակցության վերնախավի գերակշիռ հավաքածն ամենաին կրոնականացված չէր: Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Շ. Մորգենթաուուն Թալեաթի հետ իր անձնական շփումների հիման վրա հավասփացնում է. «Թալեաթի համար լրիվ միևնույն էր իսլամը, քանի որ կուսակցության առաջնորդների մեծամասնությունը ծաղյում էր բոլոր կրոնները»:¹⁷⁰ Այսինքն՝ Երիտրուրքերը վկայակոչում և օգտագործում էին իսլամը, եթեն դա համապատասխանում էր իրենց շահերին: Իրականում, աթեիստ լինելով հանդերձ, Երիտրուրքերն «ընդունեցին Երկրի կառավարման ինսփրուուցիոն իսլամի փարբերակր. և նրանց նման մոփեցումը բացարկվում է նրանով, որ այս կերպ կարող էին իսլամը՝ որպես գործիք օգտագործել»:¹⁷¹

Երիտրուրքերի կարգադրությունների ու իսլամի սկզբունքների հակասությանն անդրադառնում էին ժամանակի քաղաքական գործիքներ, պարմարաններ, իրավաբարություններ և արքուն մամուլում: «Օսմանյան կայսրությունը դուրս էր եկել անզամ թեոկրափիայի սահմաններից: Նրա քաղաքականությունը հավասարապես ուղղված էր հավաքացյաների ու անհավաքների դեմ: Նրանք իշխում էին ավելությամբ, թշնամանքով ու դրանք ամբողջությամբ ճաշակեցին քրիստոնյաները, հավաքապես, հյա ժողովուրդը»:¹⁷²

«Ալ-Մուսաքաբբար» թերթի 1916թ. մարտ 17-ի համարում կարդում ենք. «Թուրքերը կեղծիքով ուզում են իսլամի մաս կազմել, իսլամը մեղավոր չեն նրանց գործերի համար. նրանք ուզում են իսլամն անպատճել նման ոճիրներով»:¹⁷³

¹⁶⁹ فائز الغصين، المذايق في أرمينيا، ص. 62.

Ֆայէգ Ալ-Ղուսեյն, Զարդերը Հայաստանում, էջ 62:

¹⁷⁰ Dadrian V., Խշվ. աշխ., էջ 5:

¹⁷¹ Նոյն գեղում:

Հնա սعيد الحاج، العلاقات الإسلامية الأرمنية منذ الفتح العربي حتى اليوم، بيروت، 1997، ص 224.

Հանեսա Սահի Ալ-Խաջ, Հայ-իսլամական հարաբերություններն արաքնական նվաճումներից միևն մեր օրերը, Բեյրութ, 1996, էջ 224:

¹⁷³ Արևիտ Նորա, ճամանակակից արաքնական հարաբերությունները, 1930-1877, Բեյրութ, 2004, 288:

Արքիսյան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 288:

1914թ. նոյեմբերին Օսմանյան կայսրության սուլթան¹⁷⁴ Մեհմետ V-ը սրբազն պատերազմի՝ ջիհադի¹⁷⁵ որոշում է կայացրել «անհավաքների ու հավափի թշնամիների դեմ», իսկ Շեյխ ուլ-Խոլամ¹⁷⁶ Հայրի Լժենդին հինգ ֆեթվայով¹⁷⁷ հասպափել է Անդանփի պետքությունների դևմ հայրարարված սրբազն պատերազմը:¹⁷⁸ Ջիհադի կոչն այս է. «Անեն մահմետական աշխարհի որ մասի մէջն ալ ընակվի. թող հանդիսավոր երրում թնէ, որ զինք շրջապատող քրիստոնյաներեն պիտի սպասէ, առնվազն երեք կամ չորս հագր, քանզի անոնք Ալլահի թշնամիներն են: Թող ձեզմէ, ամսն մէկը գիտեսա, որ իր վարձքը պիտի կրկնապատկուի Ասքույ կողմէն»:¹⁷⁹ Մեհմետ V-ի հրովարդակն ուղղակի կոչ էր անում պայքարելու «սրբկացված իսլամի ազագագրման համար և պաշտպանելու վիճանգի ենթարկված Օսմանյան կայսրությանը»:¹⁸⁰

Երիտրութեական կառավարության կողմից կրոնական մոլեուանդությունը օգնագործվում էր «ընդեմ քրիստոնյա հայրակների, և առաջին հերթին՝ ընդեմ հայերի»:¹⁸¹ Երիտրութեական կառավարությունը շահարկում էր կրոնի գործոնը, թնդ որում՝ պետական մակարդակով: Կայսրու-

¹⁷⁴ Սուլթան՝ Օսմանյան կայսրության բարձրագույն քաղաքական առաջնորդ, միաժամանակ կրել է Խայիֆի փիզոնը՝ հանդիսանալով նաև կայսրության գերազույն հոգևոր առաջնորդը:

¹⁷⁵ Ջիհադ արաբերնեից թարգմանաբար նշանակում է ջանք, նուան գործադրել: Ակզրնական շրջանում ջիհադ համակցությունն ունեցել է. միայն խամամի համար պայքարելու և գրաբածելու իմաստ: Խամամու գոյություն ունի փոքր ջիհադ, որ ներադրում է. ջանք գործադրել անհավաքներին ճշնարիփ հավագրին՝ խամամի բերելուն: Փոքր ջիհադը ճանապարհ է հարթում մեծ ջիհադին հասնելու ճանապարհին: Վերջինս բարյական ջանքն է և ենթադրում է յուրաքանչյուր մուսուլմանի Ալրիին հոգևոր պայքար՝ ինքնամարզվելու և Ալլահին ավելի մոք լինելու համար:

¹⁷⁶ Շեյխ Ուլ-Խոլամ՝ երկրի բարձրագույն հոգևոր առաջնորդ: 16-դ դարի առաջին կեսերից Շեյխ ուլ-Խոլամը ոչ միայն հոգևոր առաջնորդն էր, այլ պետքության երկրորդ կարևոր դեմքը, ով ֆեթվաների միջոցով մեկնաբանում էր Սուլթանի բաղարական ու սոցիալական որոշումները:

¹⁷⁷ Ֆեթվա արաբերնեից թարգմանաբար նշանակում է՝ բացապրություն: Մոտավորական կրոնա-իրավական համակարգում նշանակում է, հոգևոր բարձրագույն անձի՝ Շեյխ Ուլ-Խոլամի վճիռ, որը գալիս է մեկնաբանելու կամ գործնական կիրառության մեջ դնելու Շարիաթի որևէ գրվածք: Օսմանյան կայսրությունում Սուլթան-խայիֆի բոլոր կարևոր որոշումները պետք է հասպավվեն Շեյխ Ուլ-Խոլամի կողմից: 1909թ. Շեյխ Ուլ-Խոլամը ֆեթվա էր հրապարակել 1909թ. Աղանայի կոփորածներն օրինական ճանաչելու մասին:

¹⁷⁸ Բայրության Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 649:

¹⁷⁹ Զարևանի, Միացեալ անկախ Թուրքական, Պատրըն, 1926, լ.ջ 135-136:

¹⁸⁰ Hovhannisyan N., The Armenian Genocide, Yervan, 2009, p. 446.

¹⁸¹ فؤاد حسن حافظ تاريخ الشعب الارمني منذ البداية حتى اليوم، القاهرة، 1986، ص 301 .

Ֆուադ Հասան Հաֆեզ, Խվ. աշխ., էջ 301:

թյան ռազմական նախարար Էնվերի՝ 1914թ. հոկտեմբերի 9-ի հեռագրի բնագրում նշվում է. «Մարտել երկիրը անբաղադրիներէն, անհաւափներու արինը անսարծէք է, արկէ աւելի բարի գործ չկա»:¹⁸²

Խալամական այն գաղափարը, որ մուսուլմանները հայերին սպանելով կապարում էին իրենց կրոնական պարփքը գուցե և որոշումներ ընդունող-ների մակարդակում շարժադիր չէր, բայց կարևոր գործոն էր 1915թ. ցեղասպանություն իրավործողների համար:¹⁸³

Երիդարութական կառավարությունն այդ հարցում համագործակցում էր նաև կրոնական բարձրագույն իշխանությունների հետ: 1915թ. Հայրի Էֆենջիին փոխարինած նոր Շեյխ ուլ-Խալամը՝ նոր ֆեթվա է հրապարակել աշխարհի բոլոր մուսուլմանների համար, որով իրավական հիմք էր սպեհծվում Օսմանյան կայսրությունում ու Արևմտյան Հայաստանում հայերի կորորածների հարցում: Դրանում նշված էր. «հաշվի չեն առնվելու ծերունիները, երեխանները, կանայք, հաշմանդամներն ու տկարները. բոլորը սպանվելու կամ ոչնչացվելու են»: Նման դեպքերում ֆեթվայի ընդհանուր բանաձևն է. «Թույլագրվում է սպանել անհավաքներին ու տիրել նրանց ունեցվածքին»:¹⁸⁴

Դարկ է նշել, որ խալամական սկզբունքների համաձայն Դար ուլ-Խալամի գրածքների նկարմամբ ցանկացած ովնաճություն կամ հարձակում թույլ է գալիս մուսուլմաններին ջիհադ հայրարկել հարձակվողների դեմ:¹⁸⁵

Երիդարութական կառավարությունը կարողանում է ճիշդ պահին ու ճիշդ ձևով շահարկել իսլամի գործոնը՝ հասարակության լայն զանգվածներին ուղղորդելով իր ցանկացած ուղղությամբ. որի հետևանքով էլ իրականանում է Հայոց ցեղասպանությունը: Պրոֆեսոր Լեռնարդ Գիլկի կարծիքով անկախ թուրքերի կրոնական համոզմութքներից, թուրք ոճրագրութերն իսլամը դիմարկում էին իրենց հավաքական ինքնության բաղկացուցիչ գործը, միաժամանակ քրիստոնությունը հավասարաշափ կարևոր գործը էր նրանց գոհերի ինքնության մեջ: Հայկական հարցն ուներ կրոնական և էթնիկ հետք:¹⁸⁶

¹⁸² Ղազարյան Ռ., Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 27:

¹⁸³ Akçam T., Աշվ. աշխ., էջ 34-35:

¹⁸⁴ Гуайта Дж., Шейх Файез эль-Гусейн о геноциде армян, Ислам непричастен к их действиям, Москва, ФАМ, 2007, с. 53.

¹⁸⁵ Lüdke T. Jihad made in Germany, Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First Word War, Münster, 2005, p. 33.

¹⁸⁶ Glick L. B., Religion and Genocide, The Widening Circle of Genocide. Genocide: A Critical Bibliographic Review, vol. 3, Edited by Israel W. Charney, Transaction Publishers, USA, 1994, p. 54.

Փաստորեն, ջիհադի հիմնական նպատակը Ռուսական կայսրությունում թնակվող մուսուլմանների շրջանում հակառական հոգումների հրահրումն էր, որը պետք է հեջփազներ թուրքական բանակի առաջխաղացումը կովկասյան ռազմաճակարում, սակայն հոչակված ջիհադը հմգորեն օգտագործվում է նաև Հայոց ցեղասպանության իրականացման թագաքում:

Ջիհադի հայփարարումն անմիջական կապ ուներ արաբների հետ՝ որպես մուսուլմանների: Երիգուրքերի դեկավարությունը հսկակ գիփակցում էր, որ ջիհադը կարող է հաջողության հասնել, եթե դրան միանան նաև արաբները: Երիգուրքական կառավարությունը հաշվարկներ ուներ նաև այս ուղղությամբ. կրոնական գեսանկունից դրդել արաբներին սիրիական անապատներում Վերջնական լուծում գրայ հայկական հարցին: Բայց այսպես նրանց հաշվարկները լիովին չեն իրականանում. քանի որ արաբական կողմը՝ Դուսեյն իրն Ալիի գլխավորությամբ այլ քաղաքական ծրագրեր ուներ:

Կարկ է նշել, որ ներս 1914թ. նոյեմբերից Դուսեյնը մի քանի անգամ մերժել էր թուրքական կառավարության՝ ջիհադ հայփարարելու պահանջները. հակառակ Օսմանյան կայսրության Շեյխ Ուլ-Խուամի՝ ջիհադի Վերարերյալ գրված համաձայնության: Դրանից հետո թուրքական կառավարությունը նզկիթների և մամուլի միջոցով հայփարարել էր. թե իրը Դուսեյնն օրինել է ջիհադը:¹⁸⁷ Դուսեյնի՝ շերիֆի պարգևոր գիրդուր,¹⁸⁸ նրան ուղղված ջիհադ հայփարարելու պահանջը վկայում են նրա հոգևոր և քաղաքական հեղինակության մասին:

Նշանակահայպվածում բարդ էր Սիրիայի և, ընդհանրապես. Օսմանյան կայսրության գիրապետության վակ գվեսկող արաբների իրավիճակը: Ակսված Առաջին համաշխարհային պատերազմը, ջիհադի հայփարարումը, Սիրիայում Զեմալ փաշայի վարած քաղաքականությունն ասպիճանաբար ժողովրդի մովք ընդվելու դրամադրությունը էին առաջացնում: Վերջինիս համար արաբ գործիչ Ասադ Մուֆլահ

¹⁸⁷ Лазарев М. С., Крушение турецкого господства на Арабском востоке 1914-1918. Москва, 1960, с. 96-97.

¹⁸⁸ Դուսեյնը կրում էր շերիֆ գիրդովը. քանի որ Հաջիմյան գեղից էր աւրում ու համարվում էր Մուհամմադ մարգարեի անմիջական ժառանգելիք: Երիգուրքական կառավարությունը, նպարակ ունենալով նրան օգտագործել իր ծրագրերի իրականացման համար, 1908թ. Դուսեյնին նշանակել է Ֆիազի՝ մուտությանների համար կարևոր այդ նահանգի կառավարիչ՝ Եմիր: Նախքան այդ արաբական աշխարհում հոգևոր հարգանք վայելող առաջնորդը, Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հրամանով. իր չորս որդիների հետ միասին, սրբաված էր թնակվել Կ.Պոլսում:

Դաղիքը¹⁸⁹ բերում է երկու պատճառ՝ կրոնական և ազգային:¹⁹⁰

Արաբների ապարամբության գաղափարի ամրապնդմանը նպաստում է Զեմալ փաշայի վարած քաղաքականությունը: Դեպքերի ականափես և մասնակից Ֆայել Ալ-Ղուսեյն իր «Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում» գրքի «Սիրիացիների կախաղանները և նրանց ոչնչացումը» գլխում գրում է. «Թուրքական կառավարության որոշումը՝ Ժիզել ցամկացած ազգային օգացմունք, ոչ թուրք ժողովորդների մեջ տարբեր ծներով է իր դրսնորումները սրբանում: Տայերին ֆիզիկական ոչնչացմամբ, արաբների պարագայում նրանք ոճի բազմազանությունը հիմք ընդունեցին»;¹⁹¹ Թուրքական կառավարությունն արար գինվորներին հնարավորինս հեռու փեղեր էր զորակոչում, ժողովրդին սովի էր մաքնում, հայքնի ու անվանի ընդունիչներին Անապոլիայի խորդերն էր ուղարկում: Սովի մաքնելով Սիրիայի և Լիբանանի բնակչությանը, Զեմալ փաշան հայփարարել է մամուլում. «Զկա սով Սիրիայում», իսկ Կ. Պոլիս կադարած իր վերջին այցի ժամանակ հայփարարել է. «Ովք բողոքի, թե Սիրիայում ուգելիքի պակաս կա, նա սրբախու է, և քանի դեռ իրենց որդիներին չեն ուփում, ուրեմն լավ կացության մեջ են»:¹⁹²

Իսկ ավելի դաժան է նա վարվում արար ազգային-ազարագրական գործիքների հենք՝ վերջիններին 1916թ. մայիսին Դամասկոսի և Բեյրութի հրապարակներում կախաղան բարձրացնելով:¹⁹³ «Զեմալ փաշան... կախաղան բարձրացուց քանի մը տասնյակ հայրենասէրներու: Վգիկա կարծես ազդանշան եղաւ Դիւտէյի կողմէ ծրագրուած ապարամբութեան»:¹⁹⁴

Առաջին համաշխարհային պատերազմի վարիներին Ռուսեյնը, ակընկալելով Մեծ Բրիտանիայի ռազմական օգնությունը, նամակագրական կապ է հասպարում Կահիրեաում Բրիտանական գլխավոր հանձնակապար և Եգիպտոսի փաստացի կառավարիչ Քիթչիների, իսկ 1915թ. նրան

¹⁸⁹ Ասադ Մուֆլահ Դաղիքը եղել է օսմանյան քիրապենության դեմ ուղղված արաբական ազարագրական շարժման ակդիմ մասնակից: Նրա «Արաբների ապարամբությունը» ուսումնասիրությունն առաջին անգամ լույս է դրեսել Եգիպտոսում, 1916թ.: Այս աշխատության մեջ մնալ փեղ է հարկացված նաև Դայկական հարցին:

¹⁹⁰ .188-189، ثورة العرب، حلب، 1989، ص 188-189:

Ասադ Մուֆլահ Դաղիքը. Արաբների հեղափոխությունը, Հալեպ, 1989, էջ 188-189:

¹⁹¹ فائز الغصين، المظالم في سوريا و العراق و الخazar، (العقبة، 1918)، ص 41.

¹⁹² Ֆայել Ալ-Ղուսեյն, Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում, 1918, էջ 41:

¹⁹³ Ֆայել Ալ-Ղուսեյն, Բռնություններ Սիրիայում, Իրաքում և ..., էջ 81:

¹⁹⁴ Ազարանեան Ցովհաննես, Արաբական ազգային ազարագրական զարթօնքը, Պէյրուր, 1959, էջ 25:

փոխարինած Մակ-Մահոնի հետ:¹⁹⁵ Մինչդեռ Բրիտանիան, Հուսեյնի հետ բանակցելուց բացի, գրեթե միաժամանակ բանակցում էր Բեյրութում Փրանսիական գլխավոր հյուպագոս Ժորժ Պիկոյի հետ /1915թ. նոյեմբերից մինչև 1916թ. փեքրքար/¹⁹⁶ նախապարասպելով Անգլիան իր ներկայի միջև արարական երկրների բաժանման ծրագիրը:

Տեղյակ ցիններով Սայրս-Պիկոյի պայմանագրի¹⁹⁷ մասին, որը բացահայտ հակասում էր արարաներին գրքած Անգլիայի խոսքումներին, անզամ վերջիններին կողմից չստանալով որևէ փաստաթուղթ՝ Հուսեյնը 1916թ. հունիսի 5-ին գինված ապագամբության կոչ է անում՝ հայրարարելով. «Ապագամբության նպագակը ոչ թե մի գիրապետության փոխարինումն է մյուսով, այլ արարական երկրների ազագագրումը. արար կառավարության սպեղծումը, որը կվերականգնի մեր նախնիների փառքը»:¹⁹⁷

Այդ օրը Հուսեյնի որդիներ Ալին ու Ֆեյսալը Մեղինայի մոտ Հուսեյնի անունից հոչակում են արարաների անկախությունը: Ապագամբները սպեղծում են երեք բանակ՝ Ֆեյսալի, Աբդալլահի ու Ալիի գլխավորությամբ. և համագործակցելով անգլիական զորքի հետ, սպիտում թուրքերին 1916թ. երկրորդ կեսից բոլոր ճակագրներում անցնել պաշտպանության: 1916թ. հունիսի 27-ին պաշտոնապես արարական գրասաններն անկախ են հոչակվում: «Բարեգութ ու զքասիրկ Ասքծո անունով հայրարարում ենք, որ նա է մեզ առիթ շնորհել ապագամբելու, իր իշխանությամբ ու հղորությամբ օգնել անկախություն ձեռք բերել և նրա ջանքերը պսակվեցին կապարյալ հաղթանակով»:¹⁹⁸

¹⁹⁵ Վերջինս Լուսդոնից սպազված հաեծնարարականի վրա հրաւագրակայսործն հասպագում է, որ Մեծ Բրիտանիան պարտապ է. ճանաչել Արարական թերակղզին՝ որպես անկախ պետություն՝ Մեքքայի և Մեղինայի վրա գրասանվող ինքնիշխանությամբ: Հուսեյն թագավորը համաձայնում է արարական երկների անկախության ձևոր թերման ու արարական խալիֆայության վերաբերման պայմանով համագործակցել անգլիացիների հետ՝ Օսմանյան կայսրություն դեռև բերել և նրա ջանքերը պսակվեցին կապարյալ հաղթանակով»:

¹⁹⁶ Սայրս-Պիկոյի պայմանագրի /մայիս, 1916թ./ համաձայն արարական երկրները բաժանվում են մի բանի գորիսների: «Ա» գորիս, որի մեջ մտնում էր Արևելյան Սիրիան և Հյուսիսային Իրաքը, համարվում էր Ֆրանսիայի ազդեցության գորի: Վայրիդ, ինչպես նաև «Բ» գորում Անգլիան և Ֆրանսիան պարտրասր իին ճանաչել և պաշտպանել արարական «անկախ» պետությունը կամ պետությունների կոնֆեներացիան. որը ձեր կարող դուրս գալ նրանց ազդեցության ոլորտից: «Կապույտ գորու» մեջ մտնում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Մարդինը, Ուրֆան, Բերեզիկը, Դիրաքիրը և Հարարին, որն անցնում էր Ֆրանսիայի լիիրակ գիրապետության տրակ: Մակարանան գտն Հովհաննեսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում, /1917-1946/, Երևան, 1975, էջ 24:

¹⁹⁷ Սամ Ա., սկզ. սոչ., շ. 61.

¹⁹⁸ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 21 .

Արարական աղբյուրները..., էջ 21:

«Ռուսեյն իրև Ալին՝ իր առաջին՝ 1916թ. հունիսի 27-ի ուղերձում, հիմնավորել է խլամի և երիտրուրքերի գործողությունների հակասությունների դժուակելոր՝ բազմից հիշադրակելով. «Նրանց կառավարությանը մթությունն է պատել», «ոչնչացնելով անմեղ ժողովրդին՝ նրանք չեն վախճենում պատժից» կամ «նման վարչակարգն իսլամական հասարակության մեջ չի ունեցել իր նախադեպը»:¹⁹⁹ Ուղերձներում շեշտը դրվում էր իսլամական գործունի վրա: Նշվում էր, որ թուրքերը լրիվ շենքել են ճշմարիք խլամից, հերկնարար, նրանց գործողությունները չեն համապարփախանում խլամի սկզբունքներին: Իսկ երբ բրիգանացիների աջակցությամբ արաբները սկսում են ապստամբությունը, պարզ է դառնում, որ «պանխական դոկտրինն այլևս արժեք չուներ»:²⁰⁰

Խոսերով թուրքական կառավարության քաղաքականության մասին, Ռուսեյն իրև Ալին անդրադառնում է Միջազգեգիքի անապատներ հասած անօգնական հայ ժողովրդին. «Նրանք իրականացրեցին հայ տղամարդկանց, կանանց, երեխաների ոչնչացումը՝ կենդանի թողելով նրանց մեկ դասությունը մասը: Ասքծո Մարգարեն ասում է. «Ով ցավ պարճառի մուսուլմանների հովանավորության վակ գվնովող գիմնիսներին,²⁰¹ ես երաթշնամին կդառնամ»:²⁰² «...Ահեղ Դադասպանի օրը նրանք պարասխան կրան մուսուլմանների ու զիմնիսների սպանությունների համար՝ առանց կողմնակի դափի ու դադավորների»:²⁰³

«Ռուսեյնը, հայերի հետ պարահած որպես նախադեպ ընդունելով, գգուշացնում էր արաբներին՝ խուսափել նոյն ճակարտագրից. «Նրանց ափելությունը մեզ է հասել»:²⁰⁴ Որպես կրվան բերվում էր 1915թ. մայիսի 6-ին արաբ ազ-

¹⁹⁹ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 12-13.

Արաբական աղբյուրները...., էջ 12-13:

²⁰⁰ Melson R., Եշվ. աշխ., էջ 164:

²⁰¹ Այս ալ-զիմմա՝ թարգմանարար էջանակում է հովանավորյալներ: Դրանք այն այլարարականներն էին, ովքեր ընդունել էին մուսուլմանների իշխանությունը և ջիզե /զիխահարկ/ վճարել: Վերջինս դիմաց սրբանալով մուսուլմանների հովանավորությունը՝ թշնամիներից պաշտպանվելու, անձի և գոյրի անձեռնմխելիության հարցերում: Զիմնիսների վերաբերյալ Մուհամմադ մարգարեն ասել է. «Ով երանցից թեկուզ մի պարան վերցնի, ես երա հակառակորդ կիհնեմ Դադասպանի օրը»: Զիմնի համարվող համայնքներին թույլադրվում էր կարգավորել իրենց սոցիալական և կրոնական կյանքը, սակայն քրեական խնդիրներում պարզապես էին ենթարկվել իսլամական կանոններին: Օսմանյան կայսությունում մուսուլման և ոչ մուսուլման ժողովրդների հարաբերությունների մասին նախամասն գեն և առ Ակշամ T., A Shameful Act, p. 7-8.

²⁰² المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 14.

Արաբական աղբյուրները...., էջ 14:

²⁰³ Եշվ. աշխ., էջ 13:

²⁰⁴ Եշվ. աշխ., էջ 18:

զային գործիչներին մահապարժի ենթարկելու փաստը: «Անխիղճ մարդիկ չեն կարող բոլով դառնել այսքան կյանք մի հարվածով, եթե անզամ նրանք գազաններ լինեին»:²⁰⁵ Նշանավոր ցեղասպանագնդ Ռ. Մելսոնի կարծիքով արաբների անջապումը հարվածում էր Օսմանյան կայսրության հեղինակության ու հզորությունը, մինչդեռ «Տայասպանի անջապումը Թուրքիայի համար կործանում /մահ/ էր նշանակում»:²⁰⁶

Բացի Հուսեյնի վերոնշյալ ուղերձներից, որպես անդրադարձ է կապարվել հայ գրագիրներին. առավել կարևոր է 1918թ. ապրիլի Հուսեյնի իր Ալիի պարզաբանը, որը սիրիական անապատներում հայ գրագիրների վերապրելու կարևոր գրավական է համարվում: Այս փաստաթուղթն արդեն պաշտոնական հիմքի վրա է դնում արաբ ժողովրդի օգնությունը: Նա կոչ է անում մուտույան աշխարհին բարյացակամ ու հոգափար լինել հայ ազգի նկարմանը, հասպարակամորեն պահանջում է. արաբական գլեղական իշխանավորներից իրնեաց նահանգներում հայունված հայ գրագիրներին պաշտպանել, հովանավորել և ամեն գրեսակ մարդկային օգնություն ցույց փալ: Մեքքայի առաջնորդն իր ուղերձում է.միր Ֆեյսալին ու Ալ-Զազահիրին հսկակ պարգամել է. «Խնդրում ենք Ձեզ՝ պաշտպանել և հոգ դրանել ձեր գրադրեների սահմանենրում և ցեղերի մեջ ապրող Հակոբիլյան»²⁰⁷ հայ համայնքի յուրաքանչյուր անդամի. օգնել երանց իրենց բոլոր գործերում և պաշտպանել երանց այնպես. ինչպես կանեք ինքներդ ձեզ, ձեր ուսեցվածքի ու երեխաների համար, դառն երանց այլ ամենը. ինչի կարիքը նրանք կունենան, աևկախ երանից, թե երանք կմնան եռյև գլեղում, թե կգնան գլեղից գեղ, քանի որ երանք մուտույանների պաշտպանության դառն անուանում, գիմնի են համարվում:²⁰⁸ Սա ամենակարևորը է, որ խնդրում եմ անել և հուսով եմ, որ կանեք՝ նկատի ունենալով Ձեր վեհանձնությունն ու հասպարակամությունը»:²⁰⁹

Շերիֆի այս ուղերձն առաջին հերթին հայ գրագիրներին պաշտպանելու և օգնություն ցուցաբերելու կոչ էր, իսկ մյուս կողմից իր մեջ ուներ

²⁰⁵ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 15-16.

Արաբական աղբյուրները...., էջ 15-16:

²⁰⁶ Melson R., Խվ. աշխ. էջ 11:

²⁰⁷ Հակոբիլյան աևկանածեր, հավաեաքար. զալիս է Երուսաղեմի Սուրբ Հակոբ վանքի արաբերեն Տեղ Յակով աևկանումից:

²⁰⁸ Հարկ է կեն. որ հայերը, Ակի ազ-զիմմա լինելուց բացի, համարվում էին եան Ակի ալ-Քիթաք՝ այսինքն՝ Սուրբ Գիրք ունեցող ժողովուրդ, որի մեջ մտեսում էին քրիստոնյաներն ու իրեաները: Այս երկու պարագայում էլ հայերը մուտույան ժողովուրդների կողմից խամամի սկզբունքներից ենելով հովանավորյալ ժողովուրդ էին համարվում:

²⁰⁹ نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، ص 68 .

Նայիմ Ալ-Ճաֆի, Հայերի կորորածները.... էջ 68:

ներքին կոչ՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարի դուրս գալու, քանի որ նրանք, բայց Շերիֆի, իսլամի անվան տակ ոճրագործություններ էին կափարում: Չնայած Նիջազի կառավարիչը նշել էր, որ ինքը թուրքերի դեմ պատերազմ է հայքարարել «ոչ միայն արաբներուն, այլև նաև Հայ ազգին համար ալ»,²¹⁰ բայց մի փաստ անհերքելի է, որ արաբների կողմից հայերին պաշտպանելու պատճառներից մեկն այն էր, որ արաբները, ի դեմ հայերի, դաշնակից էին փեսում ընդհանուր թշնամով՝ թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում:

Այնուամենայնիվ, այս փաստը որևէ կերպ չի խանգարում ըստ արժանավույն գևահարել Շերիֆ Ռուսեյնի հայանպաստ գործը: Նա չի զլանում մարդասիրական մովեցում ցուցաբերել հայ ազգի փարազիր զավակներին, երբեք չի անդեսում նրանց ազգային արժանիքները, քանի որ նրա մով «մարդկային գործոնը բարձր էր կանգնած ցանկացած ազդեցությունից»:²¹¹

Նման բարդ իրավիճակում ինչ դիրքորոշում պետք է ունենային հայերը: Այդ ժամանակ հայ փարազիրների սոցիալական ծանր վիճակին գումարվում էին նաև քաղաքական բարդությունները: Այսպես իրար էին բախվում արաբների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի շահերը, քանի որ յուրաքանչյուրը ցանկանում էր իր դիրքերն ամրապնդել փարածաշրջանում: Ֆրանսիան ու Բրիտանիան մրցում էին Սիրիայում իրենց դիրքի ամրապնդման համար, Թուրքիան պատերազմում նահանջում էր, Ռուսեյնը, իմանվելով Բրիտանիայի դրվագ խոսքումների վրա, ազարագրական պայքարի կոչ էր անում, մինչեղու արաբները լիովին համախմբված չէին ապստամբության հարցում: Կային շատ արաբական ցեղախմբեր, որոնք իրենց դիրքերն անսասան պահելու համար նախօրոք պայմանավորվածություն էին ձեռք բերել անզիյական և ֆրանսիական զինվորական բարձրաստիճան անձանց հետ՝ նրանց աջակցելու պայմանով: Ահա այս բարդ քաղաքական իրադրության մեջ թուրքական կառավարության քաղաքականության հետևանքով հայ փարազիրները հայդանվում են բարդ իրականության մեջ. «Մեր միջիններու դիակների մէջն չէինք կրնար մեր դահիճ Թուրքերու ծեռքը սեղմել, իսկ Շերիֆը՝ թէպէս չփորձուած բաղդ, սակայն կրնար մեզի օգբակար դառնալ, քանի որ նախ՝ իր փունն էինք, երկրորդ՝ Շերիֆի եփեր կար «մեր դափի պաշտպան Քրիստոնեայ» Անզիյան, երրորդ, բոլորովին նոր փորձանքի մը առջել էինք, այլևս հայ-քրիստոնեաներ չէինք, այլ «փալամացած հայեր», հե-

²¹⁰ «Հայ ծայս», 29.11.1918:

²¹¹ صالح زهر الدين، أصلان العرب والوفاء الارمني، ص 255.

Սայեհ Զահր Աղ-Դին, Արաբների անկեղծությունն..., էջ 255:

փետարար մենք մեզմէ մեկուսացած և մեր միջավայրին անհարազագ»:²¹²

Հայերի մեծամասնությունը. որն արդեն ականափես էր եղել արարեն-րի դրական վերաբերմունքին, ավելի հակված էր արարական կողմի հետ համագործակցելուն:

Հուսեյն թագավորի ուղերձը լայն արձագանք է գրել արարական աշխար-հում: Տեղի կառավարիչները, աշխարհների առաջնորդները, սրբանալով Հու-սեյնի ուղերձը, օգնության ձեռք և մեկնել հայերին: Վրարական «Ալ-Աֆրար» թերթն անդրադարձել է, արարերի ցուցաբերած օգնությանը և 1918թ. հունիսի 22-ի «Հայերը խաղաղությամբ են ապրում Սիրիայում» խորագրում գրում է. «Թուրքերը հայածել են հայ ազգի շաբ զավակների, ջարդել են ուժ պատահի. շաբերը փախել են անապատներում թակովով թղթինների մով: Վերջիններս նրանց ազգակել են թուրքերի ճիրաններից ու ապաստան դպեկ»:²¹³

1918թ. հոկտեմբերի 16-ին Սիրիայի բոլոր ազգերի հոգևոր առաջնորդ-ների ու ավագանու սպորագրությամբ ու կնիքով Հուսեյն թագավորին ուղերձ է ուղարկվում, որը հայփեսում են, որ գեղի ժողովուրդը հավաքարիմ ու պարրասպ է կապարելու քաղաքացիական բոլոր պարտականությունները: Այս ուղերձի գաղաքական կողմի ներկայացուցիչ սպորագրել է նաև արք. Ե. Չիլինկիրյանը:²¹⁴

Հուսեյնը նամակագրական կապ է պահպանվ արք. Չիլինկիրյանի հետ. հետքարքրդովել հայ գրապիտների դրությամբ: 1918թ. Հուսեյնը հետքեայ նա-մակն է ուղարկել Չիլինկիրյանին. «Առարիսի Հայրապետ. Յեփ ողջունի յայք առնեն զարգացումն գրութեան Ձերոյ. և թէ, ազեի զգագնունք ցուցեալ ի նմա՝ մաս մի եւեթ են շնորհաց Ձերոց. մինչ Դուք առաւելոր օժգիւայ գրանիք» /10 շաբաթ, 1342, Ամման/:²¹⁵

«Երազայում» 1924թ. հունվարին. Հուսեյնն այցելել է Ամման, որպես կրկին հանդիպումներ է ունեցել արք. Չիլինկիրյանի և S. Աշուր Վարդապե-փի, ասորի և դպի եկեղեցականների հետ: Հանդիպման ժամանակ Շերի-ֆը մեկ անգամ ևս իր համակրանքն է հայութել հայ ժողովրդի նկագմամբ: Հուսեյնն, ի նշան գրիուսակության, անկախության երկրորդ ասքիճան և շնորհել արք. Չիլինկիրյանին, իսկ Հայր Աշուրին՝ չորրորդ: Այս իրադար-ձության մասին գրել են նաև արարական թերթերը:²¹⁶

²¹² Գալֆանան քահ. Կ., Աշվ. աշխ., Էջ 419:

²¹³ أريبيان نورا، أحد ألاباء الارمنية في الصحافة السورية ، ص 269-270.

Արիայան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները.... 269-270:

²¹⁴ Չիլինկիրեան Եղիշէ Եախսկ., Աշվ. աշխ., Էջ 66:

²¹⁵ Նույն դեղուում:

²¹⁶ Աշվ. աշխ., Էջ 69:

Ռուսեյն թագավորի ուղերձի դրույթները հայերին պաշտպանելու վերաբերյալ Սիրիայում սկսել է իրականացնել նրա որդի Ֆեյսալ՝ ամենայն պատրաստածանակությամբ և հեգուողականությամբ վերաբերվել հայ գրագիրների փրկության և վերապրելու խնդրին: Վերջինիս կարարած աշխագանքը հանգանակայի կներկայացվի հաջորդ գիշում:

Այսպիսով, Հուսեյն իրև Ալիի գիշավորած ապստամրության արդյունքում 1918թ. Սիրիայի ձեռքբերված անկախությունը մի կողմից նշանակում էր Սիրիայում և Լիբանանում օսմանյան դարավոր փիրապետության վախճանը, մյուս կողմից արաբների համար սկզբանավորվում էր պայքարի մի նոր և նույնքան լարված շրջան: Այդ նոր իրադրության մեջ էին դասավորվելու հայ-արաբական հարաբերությունները, վճռվելու էր հայ գրագիրների հետագա ճակարտագիրը: Այս պարագայում, Հուսեյն իրև Ալիի ուղերձները, նրա հայուկ պարզամը եղակի ու շատ կարևոր փաստաթուղթ են հայ գրագիրների վերապրելու խնդրում: Սա ևս մեկ վկայություն է հայ-արաբական հարաբերությունների կայացած ու բարիդրացիական փասլու արձանագրելու համար: Անգամ եթե Հուսեյնը քաղաքական որոշակի դիրքորություններ ունենար հայերի նկարմանք, միևնույն է, դա ևս բխում էր հայ գրագիրների շահերից: Այնպես որ, հայ գրագիրների վերապրելու հարցում Հուսեյն իրև Ալիի դերը բավականաչափ մեծ է:

2.2 ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սիրիայում հայ տարագիրներին օգնություն ցուցաբերելու խնդրին անդրադառնալիս պետք է հափուկ ուշադրություն դարձնել արարական ցեղախմբերի՝ աշխարհների ունեցած դիրքորոշմանը. քանի որ 1915-1916թթ. առաջինը նրանց հետ շփվում են անապատարևակ արարները:

Հայ տարագիրներին իրենց հնարավոր օգնությունն են ցուցաբերելու գեղի բեղվիններն ու նրանց ցեղապետերը: Արարական անապատային աշխարհը միավորականություն չուներ, զրագիրություններ կրկու անձի մննաշնորհին եր շեյխի ու ցեղապետի: Ցեղի ոգին. միանականության բարձր գիրակցությունը. մեծահոգությունը. երախտագիրությունը և հապարփությունը. շափ բարձր էին գնահատվում արարական աշխարհներում:²¹⁷

Սկզբնական շրջանում հայերի նկարմամբ թուրքերի իրականացրած գործողությունները տարակուածեք էին առաջ բերում արարների մով: Հաուրանի շրջանի արարական Սալթի ցեղախմբի ազդյացիկ ներկայացուցիչ Սեյֆ Աղ-Դինը տարակուասում է. «Եթև վաղը պատերազմի վերջանայ. Թուրքիա իր այսքան զուրումներուն համար ի՞նչ պարասխան պիտի փայ»:²¹⁸

Կարճ ժամանակ անց արար ցեղապետերը. գիրակցելով իրավիճակի բարդությունը և հայերին համարելով ինչ-որ չափով բախտակիցներ. հսկակեցրել են իրենց դիրքորոշումը վերջիններիս նկարմամբ: Այսպես, իհարկե, շափ կարևոր է արարական աշխարհներում հոգևոր հեղինակություն վայելող Հուսեյն իր Ալիի ուղերձները, որոնք արար ցեղապետերի համար պարզամից առավել էին:

Սիրիական ցեղախմբերում չեին համարձակվում հայերին սպանել. յր-նայած թուրքական կառավարության հսկողությանը և սպանեալիքներին: Ցեղախմբերում հայդարարվել էր. «Հանուն իսլամի, հանուն խալիֆայության, հայասպանության համար նրանք կզրկին Ասպծո ողորմածությունից»:²¹⁹ Արևմտահայ գրող Ե. Օփյանը. արարական միջավայրում

²¹⁷ نورس مرعي حسن، «منطقة اللجاة الوعرة، دراسة تاريجية اثرية 2005 ، ص 128.

Նաուրաս Մըրքի Հասան, Լաջարի անջրդի տարածաշրջանը, 2005. էջ 128:

²¹⁸ «Սուլթանական տարեցոյց», Գահիկը, Ա տարի. 1924. էջ 288:

²¹⁹ هاني خليل، سوسيلو جيا العلاقات العربية السورية - الآخر منها، ص 207

أر اراد ، عدد خاص، مجازر الارمن، صرخة دائمة في وجه الصندر العالمي ، بيروت، 1995،

Հանի հայի, Արարա-սիրիական-հայկական հարաբերությունների սողովորդիան. էջ 207, գին «Արարադ. բացառիկ», Հայոց ցեղասպանություն. հավերժական կոչ՝ ողոված համաշխարհայի խոճին. Բևյորդ, 1995:

ապրելով, անապատաբնակ արաբների մասին գրում է. «Գիտէի՝ ամենքն այ աւագակ էին. բայց մարդ չէին սպաններ, թէ իրենց վրանը գացողը կը հիւրընկալեին, կը կերակրեին»:²²⁰

Ուշագրավ է Սիրիայի հյուսիս-արևելյան շրջանների ցեղապետների վերաբերմունքը հայ գարագիրների նկարմամբ: Ելեղով իրենց ունեցած ազդեցությունից և հեղինակությունից, վայելելով փվալ գյուտի կամ շրջանի ընակչության հարգանքը՝ նրանք կարողացել են փրկել հայերին վերահաս կորուրածներից ու ապաստան գալ: 1918թ. Մեքքայի էմիր ու շերիֆ Շուսեյն իրն Ալիի ուղերձը սփացել են Ալ-Զարբա ցեղի առաջնորդները: Նրանց հրահանգվել էր օգնել գարագիր հայերին: Նրանց առաջնորդն էր Դահիամ Ալ-Նադին: Սիրիահայ պատմաբան Ն. Արիսյանն անձամբ հանդիպել ու հարցազրույց է ունեցել նրա որդի՝ Շամիդ Ալ-Զարբայի հետ. ով լավագեղյակ լինելով փեղի ունեցած դեպքերին՝ մանրամասներ է հաղորդել իրենց աշիրաթում հայ գարագիրներին ցուցաբերված օգնության վերաբերյալ: «Նայրս նեղացել էր, որ Շուսեյն թագավորը նամակ է ուղարկել հայերին օգնելու համար: Մենք գիտենք մեր պարտականությունները, այնպես որ մեզ հանձնարարելու կարիք չկար: Նա, ով հարձակվեր հայերի վրա, մեր դափաստանից չէր կարող փախչել, ով ուզում էր լիներ՝ արար, բոլոր»:²²¹ Նա նշում է, որ հայերի ջարդերի ժամանակ Սիրիայի հյուսիսային շրջանում բոլոր աշիրաթներն օգնել են հայերին, ինչով կարողացել են: Այդ աշիրաթներում յուրահափոկ մեխանիզմ էր մշակվել հայ գարագիրներին օգնություն ցուցաբերելու համար. «Քանի որ մենք մովք էինք սահմանին և հզոր իշխանություն ունեինք, այս հայերը, որոնք մեր սահմանում հայրենիքին, փրկվեցին անխուսափելի մահից: Նայերի մեծ մասը զալիս էր Մերդինից... Նայրս նրանց բաժանում էր ընդունակությունների մեջ, որոնց գրվում էր ապահով ընակավայր և ապրուսք»:²²²

Շեյխ Շամիդ Ալ-Զարբան հասկապում է, որ Կամիշլիի և սահմանակից գարածքի բոլոր ցեղերը՝ Տայ, Ալ-Զարուր, Ալ-Բակկառա և ույնպես փրկել են հայերին, առաջարկել են իրենց օգնությունը:

Կեսարիացի Միսակ Մարտիրոսյանին 8 գրաբեկանում փրկել են արաբները, դրանից հետո նա ապրել է բեղդիների վրանի դակարան Կոչվող անապատային գյուղում:²²³

«Եփաբրբական է նաև Արամ Քերիկյանի դեպքը: Նա փրկվել է բեղ-

²²⁰ Օդեան Ե., նշվ. աշխ., էջ 300:

²²¹ أرسيلان نوراء، غوانل الارمن في الفكر السوري، ص 91.

Արիսյան Ն., Հայկական սարսափեները սիրիական միքում..., էջ 91:

²²² Նշվ. աշխ., էջ 92:

²²³ Տիր-Զօր, Աղեգուս վերապրողներ, էջ 214:

Վինների կողմից՝ վերանվանվելով Սալման Ալ-Դրբ, հետագայում դարձել է անապատում Համրա գյուղի աշխարհապետ. որը գտնվում է.թ Հասաբեի շրջանում:²²⁴

Ալ-Զարուր²²⁵ ցեղախմբից շափերև են հետևել իրենց առաջնորդի հրամաններին: Արուշ Մութաֆյանին. ում բարեկան է արաբական Խալիֆ անունը, որդեգրել է Զարուր ցեղի արար մի կիս: Ենթագայում. երբ հայդնվել է Նրա խսկական հայ մայրը, ևա շաբ դժվարությամբ է, թողել արար մորք: Նա պատմում է, որ պատերազմը վերջանալուց հետո անզիհացիները սկսում են հայերին վերցնել արարների մովքից և նրան հանձնում են իր մորք և չնայած հայ մոր վերաբերունքին, ևա փորձ է արել կրկին փախչել անապատներում բնակվելու: «Վրանարևակի ազադ կեանքին վարժուած գան մէջ չէի ուղեր ընակուի և ... մեր ցեղախմութէն արարներու հետ հասայ արար մօրս քով...».²²⁶ Բայց կրկին պահանջել են իրեն հանձնել: Ալ-Զարուր ցեղի արարների վերաբերյալ դեպքերի աւետուն ականաբեսն²²⁷ իր վկայություններում նշում է. «Զարուր ցեղի մարդիկ բարեհամրույր էին, պայրարում էին հայերին սպանել ցանկացողների դեմ, օգնում փախուստի դիմել, խարուր գեղին անցնելու»:²²⁸

Հայերի նկարմամբ բարյացակամ վերաբերմունք է, ցուցաբերել Ռազբայի Զարիթ աշխարհի առաջնորդ շեյխ Ֆայջի Ալ-Ֆատուաքը: Նրա որդին՝ Մուհամմադ Ամինի Ֆայուազը իր հոր մասին Ն. Արիսյանի հետ հարցագրույցում պարմել է, որ ցեղասպանության գարդիներին հայրը գարագրյալների հարցերով գրադադար պաշտոնյա էր՝ «աքսորի հսկիչ»: Նա իր վրա է վերցրել հայերին պաշտպանելու պատասխանակիրությունը, խորհրդութել է Թուրքական կառավարությանն իրականացնել իր դաժան գործողությունները՝ օգտագործելով Ռազբայի կայսերական մեջ հետք ունեցած կապերը: «Եթի հայերը մեր գանն էին, ոչ-ոք չէր համարձակվում նրանց նեղություն գալ: Մահվան ճիրաներից գրիվածները մեզ մոտ մնում էին ամսիներ, անզամ գարիներ շարունակ, այսուհետք անցնում Հայեա, Բեյրութ, բայց երեխաները, հադ-

²²⁴ Արէեան Գ., նշվ. աշխ., էջ 11:

²²⁵ Ցեղախումբի բնակավայրը Ցեղահամն է.թ, ցեղապետը՝ Շեյխ Մուալաթը:

²²⁶ Տէր-Զօր, Աղետին վերապողներ, էջ 108-109:

²²⁷ «Քրիստոնյաների աղետների ամփոփումը. /ականաբեսի վկայություններ/» գրքի հեղինակը ծննդեղով Մարդուից Լ. քաղղիսակի կրոնագոր: Անցնելով գարագրության ճանապարհ՝ նա իր 1914-1919թթ. հուշերը մասնամասն գրի է, առել, որը դպրագմելի է ամենայն հավանակնությամբ մինչև 1925 թվականը: Ենինակը Խակակ Արմայն է, սակայն անոնք գրի վրա նշված չէ:

²²⁸ الْصَّارِي فِي نَكَاتِ النَّصَارَى، 1919-1914، بِقَمْ شَاهِد عَيْنَ، ص 365.

Քրիստոնյաների աղետների անփոփումը, 1914-1919, /ականաբեսի վկայություններ/, էջ 365:

կապես, աղջիկները մնում էին մեզ մով, ոմանք փոխում էին կրոնը. եղել են դեպքեր. երբ վերադարձել են հայերի մով»:²²⁹ Միայն իր տան շրջակայքում 50 որք հայ երեխաններ են ապաստանել: Վյուպիտվ, նա հսկայական շանք էր գործադրում՝ պաշտպանելու տարագիրներին կողորդածներից ու ջարդերից:²³⁰

Սարհան Աղ-Դին Ալ-Բաթրաջին հայերի նկարմամբ իր հոր ունեցած վերաբերմունքի մասին պատմում է. «Սով էր, երբ նկան հայ գաղթականները: Նայր Սարիսա տարածաշրջանի կառավարիչն էր: Նա իր վնօրինության շրջանում օգոստոս ամսին արգելեց որևէ բոնություն թե՛ բնակչության, թե՛ դեղի բեղվինների կամ զորքի կողմից: Բացի իրենից եղան Եփրափի շրջանի շաբ բնակիչներ, որոնք հայերին բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեցին»:²³¹ Դիշում է, որ ջարդերի ժամանակ հայրն արգելել էր հարձակումներ գործել հայերի վրա, չնայած թուրքական իշխանությունների կողմից հրաման էր սպացել նվազեցնել վերջիններիս թիվը:

Սաադ Զաղլուլ Ալ-Քաուաթիիին²³² հիշում է, որ իր պապը՝ շեյխ Արդ Ալ-Նամիդ Ալ-Զարարին, լուսի անունով մի օրիորդի էր ապաստան գվել տանը և Հայեպում սրբեղծված համապատասխան կոմիտեի միջոցով նրա ծնողների հետ կապվելուց հետո միայն նրան թույլ է տվել Ամերիկա մնենել:²³³ Արքահամ Ղուփությանը, ով հետքագյում եղել է Թել Ալ-Բրափի՝ Վարի գյուղի ցուղայելու վրկվել է արաբական խաթուն ցեղի արաբների շնորհիվ:²³⁴

Ինչ վերաբերում է Ռաֆքայի շրջանում բնակվող Ալ-Ազեյի ընտանիքին, նրանք նույնպես բարյացակամ են եղել հայ տարագրյալների նկարմամբ: Ալուաշ Ազեյիին այդ երկրամասի կառավարիչն էր և տարագիրների հսկիչը. Արդ Աս-Սալամ Ալ-Ազեյիին իր «Ռաֆքան և նրա հասարակական կյանքը» գրքում նշում է. «Բազմաթիվ հայեր 1915թ. Ռաֆքա ենկան՝ փախչելով հայածանքից, ջարդերից, որոնք թուրքերն էին կազմակերպել: Ազեյիիների ընտանիքի հովանավորության տակ անցավ մոտ 150 ընդանիք»: Այդ մեծ ընդանիքի որդիներից շաբերն ամուսնացան հայերի հետ: Նրանք բարձր

²²⁹ أريبيان نورا، غواص الارمن في الفكر السوري ، ص 144.

Արիստան Ն., Հայկական սարսափեները սիրիական նվազում..., էջ 144:

²³⁰ Նոյն գեղում:

²³¹ Նշվ. աշխ., Լշ112-113:

²³² «Հայեաի հետագական բնկերության» կազմակերպության գլխավոր քարտուղար, գրող, բանասեր, դադավոր:

²³³ صالح زهر الدين، أصلة العرب والوفاء الارمني ، ص 402.

Սալեհ Զահր Աղ-Դին, Արաբների անկեղծությունն..., էջ 402:

²³⁴ Ծղլյան Հ., Սրբվերում մնացած կյանք, Երևան, 1991, էջ 60:

Են պահում Ալ-Ազեյլիի անունը և Ալ-Ալուաշ Ալ-Ազեյլիի հիշապակը:²³⁵

Արաբական ցեղախմբերի դրական դիրքորոշումն է. փասփել նաև Ֆայյեզ Ալ-Ղուսեյնը. «...երբ մուտքեցա Դիարբեքիրին, եղա մի քանի արաբական ցեղախմբերում ու գրեսա. որ այնքեզ շապ հայ կանայք. երեխաներ ու դղամարդիկ կան, և արաբները բարյացակամ են նրանց նկավմամբ. չնայած կառավարությունն այսքեղ զգուշացրել էր հայերին սպանելու իրենց պարտականության մասին, բայց նև երբեք չսնցի, որ արաբական ցեղերում որևէ հայի են սպանել»:²³⁶ «Արաբական աշիրաթները և հայերը ենթագիխում գրում են. «Անզամ մի քանի արաբներ հայերին հանել կին ջրհորներից, բժշկել ու այսպիսով փրկվել»:²³⁷

Մեծ հետքաբրդություն է. ներկայացնում Փարիզի «Արծագանգ» թերթում մի խումբ արար շնչիսերի՝ 1916թ. հունվարի նամակն՝ ուղղված քրիստոնյա աշխարհին, որդեռ նկարագրում են Միջազգային անապատներում հայերի իրական վիճակը. «...կր գեղեկագրենք այս կողմներու Հայոց սուկալի կացութեան մասին հետքեալ աճքառու խնդիրները: Կր գրենք Ձեզի. իրեն Քրիստոնեայ Քաղաքակիրթ ներկայացուցի մը... Կր գրաբկուսիք, թէ անոնք կրնան ապրի այս կացութեան մէջ, օգնեցիք անոնց. եթե ոչ անոնք կորսուած են. ... պատմութիւնը պիտ արձանագրի. Ձեր անոնք ոսկի տառերով»:

Նամակը վերջանում է. հետքեալ կերպ. «Մենք կր հասպատենք վերոհիշեալ գրութիւնների ճշմարգութիւնը և կր սպորազրենք իրեն Շնչիները ... նահանգի և գեղահովվիր շնչիս... Փոխիրամանաւարար ոսկիկան գրուաց շնչիս...»²³⁸

Անոնները նշված են. կարելի է. ենթադրել միայն, որ վերոնշյալ արար շնչիները բավականին ազդեցիկ են եղել՝ հաջփ առնելով այս փասփը. որ նրանց նամակը դեռ է հասել, դեռ ավելին՝ գրապարվել մամուլում 1916թ. հունիսին:

Արար թեղվինները հայերին օգնել են հենարավոր ամեն ձևով՝ հազուսպ են վպել, սնունդ, թաքրել են իրենց վրանեներում: Վյո ամենն ամփոփված է արաբների և հայերի կողմից գրված հոլովագրություններում և վկայություններում: Իհարկե, այս գործըթացում շապ են եղել դմվարությունները, թուրքական իշխանությունների կողմից հայդարերվելու և պատմվելու միավախությունը:

Այսպիսով, Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում, նաև Ռաքքայում

²³⁵ أريبيان نورا، غواص الارمن في الفكر السوري ، ص 121.

Արիայան Ն., Հայկական սարսափեները սիրիական միքում.... Լ.9 121:

²³⁶ فائز الغصين، المذايحة في أرمينيا ، ص 88.

Ֆայյեզ Ալ-Ղուսեյն, Զարդենը Հայասպանում, Լ.9 88:

²³⁷ Նշվ. աշխ., Լ.9 55:

²³⁸ «Արծագանգ Փարիզի» 10.06.1916:

ապրող արաբական ցեղերը, նրանց առաջնորդները, կարողացել են հայերին փրկել կուրորածներից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ցեղասպեկտերի ազդեցիկ ու հեղինակավոր լինելու փասբը հաշվի առնելով, թուրք զինվորները չեն համարձակվել մոդենալ նրանց մոդ ապաստանած հայերին:

Նայիմ Ալ-Յաֆիին մեջքերում է հեգիսյալ փասբը: Երբ Զևսել փաշան 1916թ. փետրվարին՝ իր Դեյր Էզ-Զօր կապարած այցի ընթացքում արաբներից պահանջում է, որ արաբական աշխրաթները գրադաւուն հայերի ոչխացմամբ, արաբները «մերժում են նրան, անզամ իրենց մոդակայքում հայերին բնակության գեն են դայխու»:²³⁹

Շար են վկայություններն ու փասբերն այն մասին, որ հայ գարագիրների ամենասրբագր զանգվածն ապաստանել է Անազեն և Շամմար ցեղախմբերի մոդը:²⁴⁰

Ցեղասպանությունը վերապրած ու անազեն ցեղախմբի արաբների մոդ ապաստանած հայերի հուշերում կարդում ենք. «Ձուրբական կառավարության կողմից հեգիսյան փողով քրիստոնյա հայերի ու մեզ հովանավորող մուսուլման արաբների մեջ կար փոխադարձ համակրանք: Հարկ եղած դեպքում ներկայանում էինք նրանց անուններով ու ապրում ինչպես եղբայրներ»:²⁴¹ Վկայությունները փասբում են, որ անապատի ցեղերում, հաւրկապես Անազեն և Շամմար ցեղախմբերում, առնվազը 5 հազար հայ բնդվիխներ են եղել:²⁴²

Փասբորեն, հայ գարագիրները հաճախ արաբական աշխրաթներում էին հայվանում իրենց հյու կամքով, քանի որ այլընդունակ չունեին, որի արդյունքում նրանք արագ էին համակերպվում, ինքեզրվում արաբական կենցաղին: Չնայած եղել են նաև այնպիսինները, որոնց համար դժվար էր համակերպվել վրանաբնակների օրենքներին: Դժգոհները, հիմնականում, դրաներ էին, քանի որ նրանց աշխատանքն ավկլի ծանր էր ու իրենց գարիքին ոչ այնքան համապատասխան: Վյնուիեքը այդ դրաները, որոնք հեգագայում որբանցներում էին հայվանում, ամեն փեսակ աշխատանքից, անզամ՝ ծանրագույն, չեն խուսափում: Չնայած դրան զուգահեռ «ասպեկտականութիւնը՝ իր անապատային առումով, մանչ որբերու մեջ դիրքուած շար ցայդուն յափկանիշ մըն էր»:²⁴³

Աղջիկների պարագայում բնդվիխների հետ ամուսնության փասբը

²³⁹ نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، ص 76.

Նայիմ Ալ-Յաֆի, Շայերի ցեղասպանությունը և ... , էջ 76:

²⁴⁰ Սիրմէեան արք. Ա., Պարմութիւն..., հ. Ա, էջ 501:

²⁴¹ Սարաֆյան Գ., Եփրատիկ Ռիդ Դն Լա Պլատա, Երևան, 2002, էջ 18:

²⁴² Տէր-Զօր, Աղետքն վերապրուներ, էջ 29:

²⁴³ Սիրմէեան արք. Ա., Պարմութիւն..., հ. Ա, էջ 506:

նպաստում էր, որպեսզի նրանք ավելի հեշտ հարմարվեն վերջիններիս կենցաղին: Մուշեղ Սերոբյանն ականավոր էր իր հուշերում անդրադարձն և Անազե ցեղախմբի շեյխ Ֆեկեդի հետ իրենց ունեցած հաւատիպնակեր, որի նպագրակը եղել է հայ կանանց ու աղջիկներին վերադարձնելը: Նագօրյա բանակցություններից հետո շեյխը ներկայացրել է միայն հինգ կանանց, ընդ որում, միայն նրանց, ում նկարմամբ բացարձակ վարահիւյուն է ունեցել, որ պիտի մերժեն իրենց հայրենակիցների առաջարկը: Նայկական կողմին աշակցող անգիտական գիտակուներն իրենց հարաբերություններն արարեների հետ չսրելու նպագրակով չեն խուզարկել վրանները: Նոյնակը գրում է. «Կր գենակցինք աւտոց հետ, բայց կ'ուրանան հայ ըլլալին... պահ մը կը համոզուին. յեփոյ կը դրժնե»:²⁴⁴

Նման դեպքերին ականաբեն լինելուց հետո ավելի պարզաբանված է թվում հայ և օպարերկրյա որբահավաք մարմինների՝ արաբների հետ ամուսնացած հայ կանանց վերադարձի խնդրին խիստ մովքեցում ցուցաբերելը: Շաբերը չեն վերադառնում թեղվինների վրաններից, և նրանց հսկակ թիվը հնարավոր չէ ճշգել: Ցեղասպանությունը վերապրած Փառանձեմ Պալանը գրում է. «Միայն Տէր Զօր քաղաքին մեջ արարենք ու հետ ամուսնացած մօք հազար հայ կանայք կային»:²⁴⁵ Իսկ Դէյր Էգ-Զօրի արար մի ոսպիկան, ում մայրը հայ է, հայրնել է. «Մեր նման 750 ըստանիք հաշուած ենք»:²⁴⁶

1924թ. Աշխարհանքի միջազգային գրասենյակը 1916թ. ջարդերից փրկված երեխանների վերաբերյալ կարարված ուսումնասիրության մեջ երկու եզրակացության է հանգել: Ըստ առաջինի՝ երեխանների թիվը Զագիրեի Ռւա ու Այսի ցեղախմբերում 2000-ից ավելի էր, և երկրորդ, որ մնա դժվարություններ ու բարդություններ էին գրանցվում այդ ցեղախմբերում որդեգրված երեխաններին վերադարձնելու ժամանակ, մանավանդ. երբ երանք արդեն ժամանակի ընթացքում չափահաս էին դարձել, շաբերն արդեն ամուսնացել ու երեխաններ ունեին: Անզամ նշվում է, որ նրանք շրջակա միջավայրին այնքան էին ադապտացվել, որ դժվար էր նրանց արաբներից գրաբերելը»:²⁴⁷

Արաբները համագործակցել են հայահավաք աշխատանքներ իրականացնող հայկական և միջազգային կազմակերպության ներկայացուցիչների հետ: Արյունավետ համագործակցության օրինակ է հայ գրագիրների գեղագրության ու օգնության հարցերով գրադպու դասիացի միտիոներ Կա-

²⁴⁴ Սերոբյան Մ., Հիփումներ և դադար օրագրել. Պէյրութ. 1932. էջ 115:

²⁴⁵ Տէր-Զօր, Աղեգուն վերապրողներ. էջ 29:

²⁴⁶ Նոյն տեղում:

²⁴⁷ جان شرف، القضية الارمنية في السلطة العثمانية، بيروت، 1997، ص 211-212 .

Ճարֆ Զան, Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում. Բևրութ, 1997, էջ 211-212:

թեն Եփիեի օրինակը: Նա հայահավաք աշխատանքներն իրականացնում էր՝ համագործակցելով «Հայերի դանիացի բարեկամներ», «Դանիացի տիկնանց միություն» և «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպությունների, ինչպես նաև սիրիական իշխանությունների, արար ցեղապետերի և շեյխերի հետ:

Արար ցեղապետերի հետ ծանոթանալու և նրանց հետ կապ հասկագելու և համագործակցելու դժվարին գործը սփանձնել էր Եփիեի որդեգիր Միսակը: Նրա առաջին հանդիպումը Հայեափի մզկիթի շեյխի հետ էր, ով իր հերթին մի շաբթ այլ շեյխերի անուններ է բայիս՝ խոսքանալով անձամբ բարեխոսել նրանց հետ՝ «այս ասրվածահաճ գործն անարգել շարունակելու համար»:²⁴⁸ Նշվածների թվում էին նաև Նազրմ, Մրջիեմ, Հաջեմ²⁴⁹ փաշաները: 1921թ. Դյուսիսային Սիրիայի ցեղախմբի գլխավոր շեյխ Նազրմը համաձայնում է օգբակար լինել և իր աջակցությունը բերել հայահավաք գործին:

Դյուսիսային Սիրիայի Նադիդի, Բակլարա և Անազե ցեղախմբերի առաջնորդները նույնպես բարյացակամ էին Վրամադրված այս գործին, «առանց անոնց կամեցողութեան եւ գործակցութեան ազարագրման գործը դժուարին ըլլալով մէկփեղ առաւել Վրանգաւոր պիտի րլար»:²⁵⁰ Ծանոթանալով հուշագրություններին ու վկայություններին՝ կարելի է փաստել, որ նրանք ապրել են բարիդրացիական հարաբերություններով, իհարկե, պեսք է նշել, որ հայ փարազիրները եղել են ցեղապետերի ուշադրության, երբեմն է՝ հսկողության դրակ:

Միսակն ամեն կերպ սիրաշահում էր Հաշեմ և Մրջիեմ փաշաներին, դեղական և ֆրանսիական իշխանության ներկայացուցիչներին՝ վրանախըմբերում խուզարկություններ էր կազմակերպում, հայկնաբերում արաբների, քրերի մոլոր գլխավոր հայ երեխաններին և խոսքով, սպառնալիքով կամ դրամով վերադարձնում նրանց:

Հայերի գեղավորումն, ըստ Եփիեի վկայության, իրականանում էր սիրիական իշխանության նպաստավոր կեցվածքի շնորհիվ, որը «Գեղաւորման եւ զարգացման նեցու եղաւ: Բայց առանց Հաշեմ պեյի ներկայութեան երբեք իրականացած պիտի ըլլար, ինչ որ հիմա գոյութիւն ունի»:²⁵¹ Նա իր ցեղակիցներին հայրարարում էր, որ հայերին վնաս չհասցնեն, նրանց կենդանիներին չսպանեն:

²⁴⁸ Չոյարեան Յ., Քարեն Եփիեի հայ գողգոթային եւ վերածունդին հետ, Հալեպ, 2001, էջ 53:

²⁴⁹ Որոշ հեղինակների մոլոր հանդիպում ենք նաև Հաշեմ գրելաձևին:

²⁵⁰ Չոյարեան Յ., Աշխ., էջ 53:

²⁵¹ Նշվ. աշխ., էջ 124:

Կ. Եփիեն կողմնակից էր հայ գարագիրներին գյուղական վայրերում վերաբնակեցնելու ծրագրին, քանի որ կածում էր, որ քաղաքներում բնակվելու կիանզեցնի նրանց դեգրադացիային, մշակույթի և կրոնի կորսպիքի:²⁵²

Անգլիացի Յոզեֆ Բարթը²⁵³ իր շրջազայռության ժամանակ եղել է Կ. Եփիեն ջանքերով հիմնադրված Թել Ալ-Վրման և Թել Աս-Միմն գյուղերում, որ բնակվել են շուրջ 270 հայեր, որոնք գրադարձել են երկրագործությամբ, անգամ ամբարտակ են կառուցել, որն այդ ժամանակներում անապատներում հազվադեպ հանդիպող երևոյթ էր: Ամբարտակի շինության համար Հաջեմ փաշան որոշակի գումար է դրամադրել:

«Հաջըմ փաշայի բարի կամքը, արաբների բարեկամությունը, հայերի երկրագործական հմտությունները, որին ավելանում էին Եփիեն և ախսաձեռնությունները և Ֆրանսիական իշխանությունների դրական վերաբերմունքը, այս ամենը միասին դառնում էին «Հայաստանի» վերականգնման բարդ խնդրի լուսավոր կերպերը»:²⁵⁴

Այսպես պես է հաշվի առնել այս հանգամանքը, որ հայերի հասկագործը Հաջեմ և Մրջիեմ զարմիկների գարագիրներում երկուստեք շահավետ էր, քանի որ վերջիններս գլուխական դժվար կացության մեջ էին: Նրանք դաշնակիցներ էին վիճակում՝ պաշտպանվելու Ֆրանսիական իշխանություններից և այլ բեղվին ցեղախմբերից, որոնք կարող էին Ռաքայի շրջանի իրենց հողագործությունները խլել: Այսպիսով, նրանք հակված էին իրենց հողերի վրա հայերին բնակեցնելով բնակչության թիվս ավելացնել, ի դեմս հայերի հուսայի հենարան ունենալ և, ինչու չեն, նաև արաբներին էլ երկրագործություն սովորեցնել: Եփիեն և Հաջեմ փաշան հայ գարագիրների մեջ գենանում էին այս ներուժը, որը կսպասվեր արաբների շրջանում նորամուծություններ հասդարձելուն, անապատի արաբներին նսփակյաց կյանքին սովորեցնելուն»:²⁵⁵

²⁵² Bjørnlund M., Karen Jeppe, Age Meyer Benedictsen, and The Ottoman Armenians: National survival in Imperial and colonial Settings. Տե՛ս «Հայկագևան Հայագիրական Հանդէս», հ. Ի.Ը. Պեյրութ, 2008, էջ 30:

²⁵³ Յոզեֆ Բարթը բիրգանական "Friends of Armenia" հայանպատր կազմակերպության հանձնարարականուով հերազդություն է իրականացրել հայարևակ կենքրուսներում՝ վերջիններին մասին համապարփակ գեկոյց կազմելու համար: Վյոլ նպագակով նա 1920-ականների սկզբներին իր շրջազայռությունը սկսել է. Վթենքից, այնուհետեւ նոյն Սալոնիկում, Կ.Պոլսում, Զյուրիխայում, Գիպրոսում, Լիբանանում, Սիրիայում ու Երուսաղեմում: Ականաբերսի իր հուշերում նա կարևոր փասթեր և թվական գվյալներ է հաղորդում նաև Սիրիայի հայ գարագիրների վերաբերյալ:

²⁵⁴ Burtt J., Խշվ. աշխ., էջ 117:

²⁵⁵ Bjørnlund M., Խշվ. աշխ., էջ 30:

Կ. Եփիեն պատրաստ էր աշխատել ցանկացած վարչակարգի ու անհարի հետ, որն իրեն թույլ կտար շարունակել իր գործունեությունը հայերի շրջանում:²⁵⁶

Այսպիսով, շատ հայ կանայք ու երեխաներ կարողացել են վերադառնալ իրենց հայրենակիցների մով, ինչը որոշ դեպքերում հնարավոր է դարձել արաբների բարի կամքի դրսնորման, որոշ դեպքերում՝ փրկազնի շնորհիվ, իսկ որոշ դեպքերում է՝ ուժի կիրառմամբ: «Հալեպի Դանիական ընկերության» գրվածների համաձայև ազարագրվածների 50 գոկոսր, եթե ոչ ավելին, վեճագետ և ծանմար ցեղախմբերից են եղեն: Կարեն Եփիենի պարագայում հայահավաք գործին առանձնակի նպաստել է նրա համագործակցությունն արաբական ցեղերի առաջնորդների հետ, որին եկել է լրացնելու նրա՝ Ազգերի լիզայում ունեցած լիազոր ներկայացուցչի պաշտոնը, որով Եփիեն ձեռք է բերել գործելու ազարություն, նյութական միջոցներ և քաղաքական կշիռ: Դրան գումարվել է նաև նրա նվիրվածությունն ու փրկազնի սահմանված մեկ օսմանյան ուսկին: Այս ամենն ամբողջապես օգտագործվել է ի նպաստ Սիրիայում ապահովանած հայության: Չնայած նման մեծածավալ գործունեությանը, 1923թ. սեպտեմբերին Բյուստեի համալսարանում Կ. Եփիեն բանախոսել է «Քրիստոնյա կնոջ դրությունն իսլամ Արևելքում» թեմայով՝ հայուներով, որ իրեն հաջողվել է հարեմներից փրկել 400 հայուհու, ինչպես նաև նշել է, որ դեռևս հազարավորները շարունակում են ապրել անապահություն: Եփիեն ջանքերով փրկված կանանց թիվը հասնում է մոտք երկու հազարի:²⁵⁷

Արաբների հետ համագործակցում էին նաև ամեադ հայեր, ովքեր անապահություն որբահավաք աշխարհանքներով էին զբաղվում: Որբահավաք գործունեություն ծավալող հայերից կարելի է առանձնացնել Ռուբեն Ներյամին, ով արաբների շրջանում հայունի էր որպես Մուֆաթեշ Ալ-Արման /հայերի հերթական/:

Հայագավանի Ազգային Արխիվում Ռ. Ներյանի անվանական ֆոնդում պահպանվել են նրա՝ Դեյր էղ-Զորից գրված ձեռագիր նամակները, իրեն ուղղված նամակները, Դեյր էղ-Զորի շրջանում հայ երեխաների, հիմնականում, աղջիկների ու կանանց ցուցակները, որդեղ նշված են երեխայի դարձությունը, անունը, արաբական անունը, և ամենակարևորը՝ ցեղի և այն անձի անունը, ում մոտք գտնվում էր երեխան: Օրինակ՝ «Խարուրի Պարա զյուղում՝ Համմեդ Ալ-Նեֆիի մոտ է զբնվում 8 տարեկան աղջիկ, Մուհամմադ Ալ-Հաջիի մոտ՝ 19 տարեկան աղջիկ, Աբդ Ալ-Շակիրի մոտ՝ 8

²⁵⁶ Եյթունուն Մ., Եղվ. աշխ., էջ 33:

²⁵⁷ Բախչիսայն Ա., Հայությունը մկանադինավյան երկրներում Հայ-սկանդինավյան պատմանշակութային առնչություններ/, Երևան, 2010, էջ 160:

փարեկան, Մազհար Ալ-Մխթարի մով՝ «16 փարեկան» և այսպես ցուցակը շարունակվում է:²⁵⁸

Նա Միջագեղքի հայ փարագիրների «Պաշտպան մարմնի» անդամ էր և նոյն ժամանակ նշանակվել էր Որբահավաք խմբի պատրասխանագործությունը: 1919թ. հուլիսի 19-ին Դեյր էգ-Զորից գրել է. «...ոճրագործ քաղաքացի կր գվանուիմ... հոս շագ գործ կա, փակախն հարիրաւոր որբեր կաև արաբներու մօվ և ասոնց ազագործիլը, բայց իս ամենայն մեծ աշխատասիրութիւնն է»:²⁵⁹ Նա գործում էր գաղփնի, հայութեած երեխաններին միանգամից չեր բացահայտում հաշվի առենով այն փասդը, որ միանգամից վերջիւներիս արաբներից պահանջելը կարող էր վրանզ սփեղծել երեխանների համար: «... ծրագիրս շագ խոչոր է... պիտի ջանամ բոլոր աշիրաթները պիտել և հաւաքել ինչքան կարելի ըլլայ... չնայած ոյր շագ փար է, բայց նպագակը անչափ բարձր է»:²⁶⁰

1919թ. նոյեմբերի 22-ին ՀԲԸՄ-ի կենդրունական վարչությունը Ռ. Շերյանին ուղղված նամակում գրում է. «Անապատի հարեմներու մեջէն ազագելու նպագրակաւ հայ որբեր, աղջկներ, կիներ, եւ Կեդր. Վարչ. ժողովականները նկագելով, որ դուք կը գրադուիք այնքան անձնութիւննամք, որոշեց ձեր փրամադրութեան փակ դնել 250 եզիապական ուսկի»:²⁶¹

Նրան Կ. Պոլսի Ազգային խնամագրարության կենդրունական վարչությունից հոկտեմբերի 11-ին նամակ է հասցեագրված՝ «հարգելի որբախույզ» դիմելածնով, և նամակում ներկայացված են Հալեպի, Մոսուլի և Դեյր էգ-Զորի շրջաններում գտնվող 20 որբերի հասցեներ՝ նրանց փրկելու և հայությանը վերադարձնելու ակնկալիքով:²⁶²

Հալեպի հայ որբահավաք հանձնախմբի կողմից Ռ. Շերյանին էին հասցեագրվում գրություններ, որդեռ անուն, ազգանուններով ներկայացվում են որոնման մեջ գտնվող փարագիր հայերի ցուցակները: Հարագագիրները դիմում-խնդրանքներով դիմում են Շերյանին՝ իրենց հարազարդներին գրնելու համար կամ խնդրում են փեղեկություններ հայութել նրանց մասին»:²⁶³ Երբեմն հայություն էին նրանց անունները, գտնվելու վայրը: Օրինակ՝ 1919թ. դեկտեմբերի 8-ին Շերյանին հայութում են, որ 13-ամյա Ժագուի Մասհյանը գտնվում է Դեյր էգ-Զորի փասգարան Նուրի Լֆևսդիի

²⁵⁸ ՀԱԱ, ֆ. 420, գ. 65, գ. 35, թ. 7:

²⁵⁹ ՀԱԱ, ֆ. 420, գ. 65, գ. 2, թ. 20:

²⁶⁰ Նոյն դեղում:

²⁶¹ ՀԱԱ, ֆ. 420, գ. 65, գ. 33, թ. 1:

²⁶² Նոյն դեղում:

²⁶³ ՀԱԱ, ֆ. 420, գ. 65, գ. 35, թ. 3:

փանը:²⁶⁴ Այսպեղից ենթադրվում է, որ արաբների մոտ նա հեղինակություն ուներ. այս պարագայում միայն նա կարող էր արաբների՝ տվյալ դեպքում՝ փաստարանի մոդից վերցնել երեխային: Նրա ջանքերով մոտ 800 արաբացած որբեր են փրկվել:

Եղել են անհավներ, որոնք շրջել են անապատներով ու գրանցել հայ երեխաներին: Զեյթունցի վերապրող Փառնակ Շիշիլյակը՝ Ահմեդ Ալ-Ջազզա անունը ժառանգել է իրեն պահող արար ընդանիքից, որը հայրնի ընդանիք է եղել: Այդ աշխրաթում նա ամենազբագեստ մարդն էր համարվում և ցեղախմբի բոլոր անդամները կարդալու, գրելու հարցերով միշտ նրան էին դիմում:

Փառնակը՝ որպես ուղիւրի հովիվ հաճախ է հանդիպել փարբեր վայրերի արաբների հետ, առանձնահավուու ծիրք է ունեցել հայերին փարբերակելու: Նրա ցուցակագրած հայերի թիվը հասել է մի քանի հարյուրի: Այդ ցուցակներն ու աշխրաթների հավանական ընակավայրերի քարտեզներն ուղարկել է Հայեպ, որդեռ Ազգային միության և Սիրիայի կառավարության միացյալ հանձնաժողով է սփեղծվել, որն անմիջապես գործի է անցել:²⁶⁵ Հայ որբերի որոնման հանձնաժողովի նիստում որոշվել է ցուցակում եղած անուն-ազգանունների ցուցակը բազմացնել և փակցնել եկեղեցիների, հայկական թաղամասների, հայկական հիմնարկների դռներին: Հաջորդ օրն իսկ սփացվել են բազմաթիվ դիմում-խնդրանքներ. «Մենք պահանջում ենք մեր հարազարդներին, պարտասր ենք ամեն ինչով ապահովել նրանց: Կվճարենք հանձնաժողովի կարգարած բոլոր ծախսերը, կանենք նվիրաբերություններ»:²⁶⁶

Փառնակի ցուցակներով Հայեպի ազգային խորհրդի և կառավարության միացյալ հանձնաժողովը սկսել են աշխատել անապատներում՝ արար ցեղապետերին ևս մասնակից դարձնելով որբերի հավաքագրմանը: Վրաբների մոտ օրենք էր, որ որբերի դիմաց վճարեն այսպես կոչված կաթի փող. ամեն անձի համար 5 ուկի: Սա այդ ժամանակներում բավականին մեծ գումար էր, բայց Հայեպի ազգային ֆոնդը զգալի միջոցներ էր ձեռք բերել հանգանակությունների և նվիրաբերությունների շնորհիվ: Ցեղի մարդը, ով սպասում էր այդ գումարը, մեկ ուկին պետք է տար իր ցեղապետին: Բացի այդ հանձնախումբն իր հերթին երկու ուկի է պետք է վճարեր ցեղապետին:

Վրանաբնակ արաբների մոտ ապաստանած կանանց ու աղջկների մասին խոսելիս պետք է անդրադառնալ այն փարբերակիչ նշանին, որով հայ կանայք ու աղջկները առանձնանում էին մյուսներից: Համաձայն «Դասիական ընկերության» գեղեկությունների՝ վրանաբնակների մոդից

²⁶⁴ ՏԱԱ, ֆ. 420, գ. 65, գ. 35, թ. 3:

²⁶⁵ Ազգաբեան Լ., կշվ. աշխ., հ. 1, էջ 150:

²⁶⁶ Ծղյան Ն., կշվ. աշխ., էջ 22:

հետ բերված հայերի 60 փոկոսը փղաներ էին, 40 փոկոսն աղջիկներ ու կանայք, ովքեր, գրեթե առանց բացառության դաշվածքներ են ունեցել դեմքին, ձեռքերին, անզամ կրծքին: Տղա ևրևսաների քթի ծայրերին ու աջ ձեռքերին նոյսնպես եղել է այդ կապոյթ նշանը:²⁶⁷

«Թշվառութեան բոլոր վիճակները գիտնող այս պէտքիացած հայերով ու մասաւանդ հայուհիներով լեցուն է Հալէպի ու այդ զարհուրդելի կապոյթը այլեւս դաշվակնիք մըն է կարծէք անցնցելի, իրենց ցեղին վիճակուած նղեռնին ու առոնք պիտի մնան ու ապրին այսպէս, մինչև որ մահի օր մը ջնջէ, այդ ահավոր դաշվակնիքը»:²⁶⁸

Արարական ցեղախմբերուն հայերին ցուցաբերված օգնության մասին խոսեիս, հարկ է նշել, որ դրան զուգահեռ հանդիպում ենք այսպիսի վկայություններ, որոնք հակառակն են հասպարում. արարները հարձակվել են հայ տարագիրների վրա, կողոպատել են նրանց, առանձին կանանց, ավելի հազվադեպ՝ եղել են դեպքեր. երբ արարները սպանել են հայ տարագիրներին:²⁶⁹

Վերապրող Հռվիաննես Սարաֆյանը վկայում է. «Արարներն այ կը կողոպեին մեզ... եւ այս տարապանքներուն ենթարկուողները միայն մնեք չեինք, այլ մեր նախորդ եւ յաջորդ կարաւաններն այ միեւնոյն վիճակին ենթարկուած էին»:²⁷⁰

Մեսքենեի մողակայքում բնդիարում են ունեցել Անազե ցեղի մարդկանց հետ, որոնք ցանկացել են նրանց կողոպատել. բայց ժամանակների՝ կրակ բացելուց հետո փախուստի են դիմել:՝²⁷¹

Դեյր է-գ-Զոր հասած Հակոբ Սիմոնյանը պարզում է, որ ‘Դեյր է-գ-Զորի անապատներում’ Անազե անապատի մեջ, «ուր ժողովորդը կը քալէ, անքնդիափ...յանկարծ արարները կը յարձակին. կը կողոպատեն, կը մերկացնեն, երեխանները կը յափշտակեն»: ²⁷²

Հայ տարագիրների նկարմամբ արարների բացասական վերաբերմունքի փաստերն ուսումնասիրելիս մի շարք դեպքերի ենք հանդիպում: Ցնդասպա-

²⁶⁷ Կապոյթ դաշվածքը արարական հասարակության մնջ գլուխ նախախլամական ժամանակաշրջանից նկող տպիրություն է. Երբ բնդինները իրենց երեխային ծնվելուց առևվազն մնկ տրավիս բնդացրում երան դրշմում էին՝ մահվան և չար աչքի դև: Իհարկ հայ երեխանների ու կանանց դաշտում բնավ էլ չըր արվում այդ նպագակով: Այսպես այլ միբում էր Ակաբրվում՝ երեխացայում երանց տարրերակելու համար:

²⁶⁸ Սիրիմնեան արք. Ա., ‘Պատմութիւն... հ. Ա. Էջ 506:

²⁶⁹ Տէր-Զօր, Աղեգու վերապրողներ. Էջ 362:

²⁷⁰ Նոյն գլուխում. Էջ 114:

²⁷¹ Տոնիկեան Կ., Ա. Միլիկեցի/ Կենաքիս Յուշերը՝ 1900 -1972, Պեյրութ. 2004, Էջ 41:

²⁷² 1915. Աղեգ և վերածնունդ. Էջ 255-256:

նությունը վերապրած, հետագայում բեղվին արար դարձած Շուքրին ականափես է եղել, թե ինչպես են բեղվինների հարձակվել մահացածների վրա, պատրիկ նրանց փորուրիքը՝ ուսկա իրեր գտնելու մրա-դրությամբ։ Այս Վրդու Ռահման անունով մի արար փրկել է նրան մի ուրիշ արարի հարձակումից ու որդեգրել։²⁷³

Վերապրող Մարտիրոս Սասունցին իր հուշերում գրում է, որ արաբների կողմից ենթարկվել է բռնությունների, անզամ կոչ է արև իր հայրենակիցներին՝ արաբներից պաշտպանել իրենց աղջիկներին։²⁷⁴ Վերոնշյալ դեպքերը հետաքրքրական են. նոյն անսապափարնակների կողմից նրանք մի անզամ կողոպտվել, հարձակման են ենթարկվել, իսկ մեկ ուրիշ անզամ արաբների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ փրկվել են թուրքերի հետապնդումներից։²⁷⁵ Կարելի է եղանակացնել, որ բռնությունների կիրառման դեպքեր եղել են, սակայն, հիմնականում դրանք ունեցել են մասնավոր բնույթ։

Մի ուշագրավ դեպք նոյնապես: Վերապրող Վ. Տափրյանը, տարագրության սկզբնական ժամանակահարփածի համար արաբների՝ հայերի նկարմամբ ունեցած վերաբերմունքի մասին իր հուշերում գրում է. «Ամէն Դայու հետ, որ կը դեսնուինք, կ'իմանաք նոյն գանգապը՝ դեղացի ժողովուրդին Դայոց հանդեպ ցոյց գործած թշնամական վերաբերմունքին մասին, վերաբերմունք մը, որ արդարանալի եւ ոչ մէկ հիմք ունի»։²⁷⁶ Արդեն 1916թ. սեպտեմբերի համար հեղինակն արձանագրում է. «Նրանք, որ ամիս մը առաջ մեր գիտեն մեր հեռացունք կը պահանջեին, մինչդեռ այժմ երբ կը զգան թէ Վրասնգը կը սպառնայ իրենց ինչքին ու կենաքին, կ'ընդունինք թէ հայերն ալ կարևոր են՝ ընդհանուր ազգաբնակչութեան պաշտպանութեան գիտակցիւն»։²⁷⁷ Այսուհետև սշում է, որ ճերեշում, որը «պարիկ զյուղ մըն էր ցածր ու փլուած փներով», հայ տարագիրների գալուց հետո այն վերածվում է վաճառաշահ զյուղաքաղաքի. հեռավոր զյուղերից այսպես էին զալիս հարյուրափոր Ֆելահիներ ու պէտուներ։ Դայերն այսպեղ կառուցում են ջրաղացներ, սփեղծում բանջարանցներ, բացում մոտք քառասուն խանութներ, արհեստանոցներ։²⁷⁸

Արաբների նման վերաբերմունքը կարելի է բացապրել նաև այն հանգա-

²⁷³ Ազգագետան Լ., Խշվ. աշխ., հ. 3, էջ 128:

²⁷⁴ Սասունցի Մ., Խշվ. աշխ., էջ 193:

²⁷⁵ Խշվ. աշխ., էջ 202:

²⁷⁶ Տափրեան Վ., Դէպի անսապափ /փրկուած էջեր օրագրէս/, Նիւ Եղրը, 1945, էջ 164:

²⁷⁷ Խշվ. աշխ., էջ 224:

²⁷⁸ Տափրեան Վ., Խշվ. աշխ., էջ 165:

մանքով, որ Երիքթուրքական իշխանությունները փորձել են արար բևակչության որոշակի հարգվածի մոտ առաջացնել հակահայկական դրամադրություններ՝ շահարկելով վերջիններիս կրոնական զգացմունքները. իսկ այս պարագայում վկայակոչելով նաև հայութարված ցիհադը:

Մինչդեռ Երիքթուրքերի ծրագրերի ճախողման մասին է, փաստում անապահներում վերսապրոյ հայ գրարագիրների սրբար զանգվածը: Ցեղասպանությունը վերապրող Բ. Զամբազյանն, ով գրարագրության ճանապարհին մի քանի անգամ ականափես է եղել արարների բարեկամական վերաբերմունքին, վկայում է. «Վրարները թուրքին նման զազան րլային. մեկ հայ չէր կրնար վերադառնալ անապարէն»:²⁷⁹

Այսպիսով, հայ գրարագիրների՝ Սիրիայում հայփնվելու առաջին փուլը կապված է սիրիական անապահների հետ, որը արար բեղվինները փորձում էին օգնել հայերին: Վրաբական ցեղապետների և, ըստհանրապես, անապատարնակ արարների աջակցությունը հայ գրարագիրների փրկության հարցում պետք է դիմարկել Երկու համագերակում: Առաջինն. ինչպես նշվեց, անմիջական օգնությունն էր՝ ցեղապետի հրամանով կրանք փրկել են հայերին վերահաս մահվանից. ապաստան ու սնունդ փուլ: Երկրորդ՝ միջնորդավորված գրարերակը, երր արար բեղվինները, դեղյակ լինելով գրեղանքին ու հայ գրարագիրների գվնվելու վայրերին. օգնում էին այն մարդկանց, ովքեր զբաղվում էին հայ գրարագիրներին հայփնարելելու ու հայկական միջավայր վերադառնելու գործով: Բացի այդ, արարները համագործակցել են նաև այդ աշխատանքներով գրաղվող հայկական և միսիոներական կազմակերպությունների ու անհապների հետ:

²⁷⁹ Տեր-Զօր, Աղէփէն վերապրողներ. Լ.9 363:

2.3 ԱՐԱԲ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Հայոց ցեղասպանության հետքեանքով Սիրիայում հաստափված հայերի հետքագա գործունեությունը կապվում է արաբների հետ հետքագա հարաբերությունների հաստափման և դրանց զարգացման խնդրի հետ: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ «թուրքերը որոշակի հույսեր ունեին, որ արաբները կսպանեին կենդանի մնացածներին, բայց նրանք սխալվեցին, քանի որ արաբները մեծ համակրանք դրսերեցին հայերի հանդեպ»:²⁸⁰

Սիրիայի փարբեր քաղաքներում և շրջաններում բազմաթիվ արաբ քաղաքացիներ, զինվորներ, պաշտոնյաներ օգնության ձեռք են մեկնել հայ գաղթականներին՝ շատ հաճախ վլրանգելով իրենց կյանքը:

Այս ենթագիխում փորձ է արվում ամրողական պարկերացում փակ Սիրիայում ապաստանած հայ փարագիրների և դեղի արաբ ժողովրդի փոխհարաբերությունների մասին, վերջիններին ցուցաբերած հսկայածավալ աջակցության մասին, որի արդյունքում ասդիմանաբար դրական դեղաշարժեր են կարգավորվում հայ փարագիրների սոցիալական կարգավիճակում: Առանձնակի շեշտադրում է կարգավորվում անհագ գործիչների հայանպասար գործունեության վրա, ոյի դրա կամ անհագ գործիչների հայերի նկատմամբ փարված քաղաքականության առանձնահավաքությունները: Դարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահարվածում քաղաքական փոփոխություններն իրենք էին պայմանավորում ցուցաբերվող օգնության իրականացման ձևերը, չափերն ու մեթոդները:

Արաբ պատմաբան Նայիմ Ալ-Յաֆին հայերի նկարմամբ արաբների դիրքորոշման մասին խոսելիս վերջինս բաժանում է երկու մակարդակի՝ արաբական կառավարական և ժողովրդական:²⁸¹ Առաջինի համար հեղինակը դրախտ է հետքեայլ բնորոշումը. «Պայքարի մթնոլորդ էր փիրում, որին հայերն ակամայից են ներգրավվում»:²⁸²

Շեղինակը կարևորում է նաև ժողովրդական մակարդակը, քանի որ այս համագործակցությունը են իրականանում նոյն իշխանությունների որոշումները, այս մակարդակում է, որ օգնությունը դրվում է իրական հիմքի վրա և գործնական

²⁸⁰ Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, Երևան, 2002, h. 2, q. 4, էջ 350:

²⁸¹ نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، ص 65.

Նայիմ Ալ-Յաֆին, Հայերի ցեղասպանությունը և..., էջ 65:

²⁸² Նոյն դեղում:

կիրառում սպանում:²⁸³ Անդրադառնալով արար հասարակության դիրքորոշման այս երկու մակարդակներին. կարող ենք փաստել, որ Ֆեյսալի օրոք շարունակվում է հայերի նկարմամբ ցուցաբերվող օգնությունը, որը Հուսեյն իրև Ալիի պարզամներից հետո դրվում է պաշտոնական հիմքի վրա:

Իհարկե, փարագրության վայրերում, դեղահանության ճանապարհներին հայերին օգնության փորձեր են նախաձեռնել նաև գեղի կառավարիչները, աքսորի հսկիչները, անզամ Հայեալի նահանգապետք. բայց դրանք կարճաժամկետ բնույթ են կրել: Բացի այդ, թուրքական կառավարությունը, հաջի առենկով արար պաշտոնական կառավարիչների՝ հայ փարագիրներին օգնելու հետ կապված բազմաթիվ փաստեր, խուսափում էր արարներին պաշտոնաներ փրամադրել՝ որպես կանոն փեղերում նշանակենով թուրքերի: Ամեն դեպքում բացառություններ լինում էին, բայց թուրքական կառավարությունը շաբ արագ ուղղում էր իր «սխալները»:

Հայ փարագիրներին օգնություն ցույց փուած արար պաշտոնական երից հարկ և հիշապակել Դեյր էգ-Զորի կառավարիչ Ալի Սուայդ բեյին, ով չի իրականացրել Հայեալի դեպի Ռաս ուլ-Այն զաղթականների փոխադրման հրահանգը և Թալեաթ փաշային ուղղված պարախան նամակում գրում է. «Բոլորին փեղահանելու համար փոխադրության միջոցները չեն բավականացնում, իսկ եթե Ձեր հետապնդած նվազակար նրանց սպանելու է, ապա այդ բանը չեմ կարողանա անել, ոչ էլ կարող եմ անել փայ»:²⁸⁴ Դեռ ավելին, նա աքսորված փասլայակ հազարավոր հայերի օգնության ձեռք և մեկնել՝ աշխատելու հետապնդություն փալով: 1000 հայ որը մասնակների ապասպան է փեկ եենց այդ նապատակով կառուցված շենքում:

Սուայդ բեյը հայերին վրաններ է, դրամադրել պարսպարվելու համար և կարծ ժամանակ անց հայերի աքսորավայրը վերածվել էր մեծ վրանաքաղաքի՝ կոչվելով Վերջինիս անունով «սուայդիյա»,²⁸⁵ որին հայերը բացել են դերձակի, կոչկակարի, նպարավաճառի խանութներ և փուեր:²⁸⁶ Ալի Սուայդ բեյի բարյացակամ վերաբերմունքը հայերի հանդեպ դատավում և նրա պաշտոնանկության պարճառը: Վերջինիս փոխարինած Զեքի բեյն անվերապահորեն կողմնակից էր հայերի բնածնչմանը և ջանք չեր խնայում նրանց Դեյր էգ-Զորում կուրորելու համար:

²⁸³ نعيم اليافي، مجازر الارمن و موقف الرأي العام العربي منها، ص 74.

Նայիմ Ալ-Զաֆֆի, Հայերի ցեղապահությունը և..., էջ 74:

²⁸⁴ مروان المدوار، الارمن عبر التاريخ ، ص 408.

Մարութան Ալ-Մուտավար, նշվ. աշխ., էջ 408:

²⁸⁵ يامبو كيان ي، شهادة الارمن، انطلياس 1985، ص 32.

Փամբուկյան Ե., Հայերի մարդիրուսությունը. Անթիլիաս, 1985, էջ 32:

²⁸⁶ Անդրեյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

Թիկունքի հրամանափար, արար զինվորական Սայիդ Շամիդ բեյի ջանքերով Դեյր էզ-Զորում զինվորական աշխատանոց էր հիմնվել, որը «ճշմարիկ բարիք մըն էր 400-ի մօք Նայ կիներու և այթերու համար»:²⁸⁷ Նա ցանկացած հայ երեխայի խնդրանք՝ Աշխատանոցում գտնավորելու հարցում չէր մերժում: «Տեր Զորի մեջ հայերը երբեք դժգոհության պատճառ մը չունեցան իրմէ. միշտ անոր պաշտպանութիւնը վայելեցին»:²⁸⁸

Նամակոսի վայի թահսին բեյը նույնպես բարյացակամ էր հայերի նկարմամբ: «Բովանդակ կուսակալութեան մէջ հայութիւնը կ'օրինելու գմահսին պէյ»: Եղիշե Զիլինսկիրյանի շնորհակալական խոսքերին նա պատասխանել է, որ «խորձի ճայնին անսալով մարդասիրական պարտականութիւնը նեթ կը կապարէ»:²⁸⁹

Համայում հայերի նկարմամբ բոնությունները որոշ չափով սահմանափակվում են սեղի քաղաքաբեկ Նաջմ Աղ-Դինի շնորհիվ: Վերջինս թուրք ուստիկանների հեգապնդումներից ազարում է Ռուրեն անունով մի հայի, ում թարգմանչի պաշտոնն է վստահում քաղաքապետարանում: Աշխատանքի ընթացքում Ռուրենն ականաբեսն է լինում քաղաքապետի գործերին. «Նրանք փրկեցին բազմաթիվ հայ երիտասարդների: Նաջմ Աղ-Դին բեյի նախաձեռնությամբ քաղաքում կազմված բարեգործական միությունը մեծապես օգնել է սովամահ լինելուն դարպապարփակ հարյուրավոր հայ արսորյալների»:²⁹⁰

Համայի Տեր Ներսես քահանա Թավուգճյանը նամակ է գրել «Հայ ճայն»-ի խմբագրություն՝ փեղեկացնելով, որ այնքեղ կազմվել է «Հայկական միություն» և ի նպաստ զաղթականների 150 ոսկի է հավաքվել: Նա միության գործունեության համար կարևորում է. «Միութիւնը կը վայելէ փեղական կառավարութեան համակրանքը»:²⁹¹

Ինչ վերաբերում է սեղի արար բնակչությանը, ապա նրանք գրեթե միշտ օգնել են հայ տարագիրներին, որի մասին վկայում են հայկական, արաբական, անզիհական, գերմանական և այլ աղբյուրներ:

Համա քաղաքի արևելյան կողմում գրիսվող Սալամիյե ավանի արար բնակչությունն արբակարգ հոգածություն է ցուցաբերել հայ տարագիրների նկարմամբ: Նովհաննես Զափիկյանը բոնազաղթի տարիներին ընդունի-

²⁸⁷ Օպեան Ե., Աշվ., էջ 334:

²⁸⁸ Նշվ. աշխ., էջ 386:

²⁸⁹ Զիլինսկիրեան Եղիշե Եպիսկ., Աշվ. աշխ., էջ 25:

²⁹⁰ كيغارت ، المؤلف روبيرت جبه جيان ، حلب، الكتاب السادس ، 2002 ، ص . 63 .

«Գեղարդ», Հայեա, 2002, հ. 6, էջ 63:

²⁹¹ «Հայ ճայն», 02.12.1918:

թով փեղահանվում է Այնթափից և հասնում Համա, որպեղից հինգ հայկական ընդամենքների հետ՝ Սալամիյե: Արարներին այսպես արդակարգ ընդունելություն են ցուցաբերում. «Մեզ շրջապատեցին և ամեն կերպ ջանացին օգնել ու փեղաւորել: Այսուհետեւ Սելսմի: հասան ուրիշ հայ փարագիրներ, բոլորն ալ արժանացան եղբայրական նոյն ջերմ վերաբերմունքին»:²⁹²

«Կաթապահայ հայովի թիշկ Ռ. ճեպեճյանի հորաքրոջ և հորեղբոր ընդամենքները նոյնպես նոյն ճակարտագրին են արժանացել: Նրա զարմիկ Լուսը միշտ գովասանքով էր խոսում Սալամինի արարների մասին. «Անոնք մեզ դիմաւորեցին արդակարգ համակրանքով: Կերակրեցին եւ հոգացին... մեր կեցութեան ընթացքին մեզ հետք վարուեցան որպէս պահապան հրեշտակներ... Մեր կեանքը կը պարփինք իրենց»:²⁹³

«Այ փարագիրները գաղթակայանց թաքուն դուրս էին գալիս, փարբեր միջոցներով ուրեմնիք ձեռք բերելով. կրկին հավաքակայան մփեռում: Այս պարագայում նոյնպես արարներն օգնում էին հայերին. «Վալերախի գություն կիններ չիշխափակել արարների ազնվությունն այս հարցում, չնայած կախաղանի սպառնալիքով արգելված էր գաղթակայանների հետք շփումը, մեզ հետք առևորուր անող ոչ մի արարի կողմից մեզ մարդնելու փորձ կամ դեպք տեղի չունեցավ, իմանալով հանդերձ, որ նրանք նոյնպես մեզ հետք հավասարաշափ վիանքում կին իրենց կյանքը»:²⁹⁴

«Այ փարագիրների նկարմամբ բարյացակամ վերաբերմունք է, փածել Աքրուկ Ղանի Ալ-Զուուրին: Նա պատերազմից առաջ վարել է Հայեափի կրթական հարցերով գրաղվող կառույցի գրսորների պաշտոնը. Առաջին համաշխարհային պատերազմի փարիններին ծառայել և օսմանյան բանակում՝ որպես սպա: Նրան էր հանձնարարվել սիրիական անապագում հայ գաղթականների քարավաններից մեկի թևաժնջւկու գործը: Նրա օգնությամբ է փրկվել արևմտահայ գրող Երվանդ Օփյանը: Հակառակ իրեն գրված հրահանքի՝ Զուուրին փարագիր հայերից շափերին ուղարկել է Սալամիյե. մյուսներին էլ հանձնել Դեյր էղ-Զորի արար ցեղախմբերին»:²⁹⁵ Իր հուշերում՝ «Ալ-Քիթար Ալ-Ֆիդդա» /«Արծաթյա գիրք»/ վերևագրով. մակրամասն նկարագրել է թուրքական գինվորականների կափարած դաժանությունները:

«Հայանպատակ գործունեություն է ծավալել Մուսափաֆա Զալարին: Նա Կ. Պոլսում բժշկական կրթություն սպանալուց հետո վերադառնում է. Հայեափ և

²⁹² Ազարեան Լ., Խշվ. աշխ., հ. 2, էջ 224:

²⁹³ Նոյն փեղում:

²⁹⁴ Դիշդիջյան Հ., Դեյր Զորի անապատներում, Երևան, 2006, լ. 72:

²⁹⁵ كيغارت ، المؤلف روبيرت جيه جيان، حلبي، الكتاب السادس ، ص 42

«Գեղարդ», կազմող՝ Ռ. ճեպեճյան, Հայեափ, 2002, հ. 6, լ. 42:

աշխափում Խան Զարրայում՝ որպես ակնաբռոյժ: 1914թ. պատերազմն սկսելուն պես զորակոչվել է օսմանյան բանակ որպես սպա և նշանակվել Բիթլիսի գիևվորական հիվանդանոցի պես: Տեսնելով Բիթլիսի բնակչության նկարմամբ իրականացվող դաժանությունները՝ նա հավաքում է քաղաքի փողոցներից իրեն հանդիպած մոտ 40 հայ որք աղջիկների և դեռափի կանանց և աշխափանք գոախիս հիվանդանոցում: 1916թ. երբ ուսները Բիթլիս են մփնում, Նրան թուրքական համազգեսպով գրեսնելով ցանկանում են սպանել, բայց իր փրկած աղջիկներն ընդդիմանում են: Իր հայանպաստ գործի համար Զօրավար Ալեյրանիկից ևա հափուկ պատվոզիր է ստուգել:²⁹⁶

Զամիլ Քեննեն Առաջին համաշխարհային պատերազմի դարիներին եղել է Եփրափի մակույկաշինության բանակային ծեռնարկության վերակացուն: Այս գործարակը ներգրավված էր օսմանյան Դիւզերորդ բանակի մարտակարաման գործում: Հակառակ թուրքական իշխանությունների սպառնալիքներին՝ նա հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկում էր հայ գարագիրների վիճակը բարեկավելու համար: Զամիլ Քեննեն գաղթականներին ընդունում էր իր ձեռնարկությունում՝ որպես վարպետներ և աշխափավորներ, իսկ Կարմիր խաչի նպաստներից պարեն, դեղորայք էր հափկացնում կանանց, երեխաններին և ծերերին: Նա օգնում է փախափական հայ գիևվորներին ու գերիներին: Բազմաթիվ աղբյուրներ են վկայում, որ արաբ բանվորները պարագանականություն են դրսորել, հայերին օգնելու գործում նրանցից ոմանք հայ գարագիրների հետ կիսել են իրենց սննդի բաժինը:²⁹⁷

Ծափա Վրու Ռիշահր զաղթի գարիներին եղել է Մամրուշ և Խալի գյուղերի կայմակամը: Չնայած ունեցած պաշտոնին, նա միշտ ընդդիմացել է Օսմանյան կառավարության՝ հպատակ ժողովուրդների նկարմամբ ցուցաբերած ճնշիչ միջոցառումներին: Նայ գարագիրներին օգնելու համար, ի վերջո, ամբասփանվել է և Զիլլե աքսորվել: Նոա դուստրը հոր մասին պարմում է. «Նա քարայրների մեջ ապասփանած հայ գաղթականներին գաղփնի օգնություն և ուրեմնիք էր ուղարկում: Ամեն ինչ անում էր հայ գաղթականներին ի վեսա գրված հրահանգները շրջանցելու համար, ապահովել է շատ գաղթականների երկաթուղով գեղափոխումը, թուրք գիևվորների ձեռքից խլել է հայ գաղթականներից կողոպտված թանկարժեք իրերը և հայերին վերադարձել»:²⁹⁸

²⁹⁶ كيغارت ، المؤلف روبيرت جيه جيان، حلب، الكتاب السادس ، ص 38

«Գեղարդ», կազմող՝ Ռ. Ճեպեճյան, Հայեալ, 2002, հ. 6, էջ 42: էջ 38:

²⁹⁷Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական Հարցի և..., հ. 2, զ. 4, էջ 283:

«Կիգارت»، մասնակի գույքը ապասփանած հայությունը, իրավունքը գաղթականների համար կազմակերպությունը գործում էր 1915-1916 թվականներին:

²⁹⁸ «Գեղարդ», Հայեալ, 2002, հ. 6, էջ 58-59:

Առաջին համաշխարհային պատերազմի փարիներին Արքաշն Պողոսյանը²⁹⁹ /1890-1954/ սրանձնել էր Երկրորդ, Երրորդ, Չորրորդ բանակների մարտակարարման հարցերը: Օգտագործելով իր պաշտոնը՝ նա կարողացել է փրկել 1500 հայ երիտասարդների՝ նրանց զգալի մասին վեղափոխությունը:

Նա պատերազմի ընթացքում կարողացել է պետական պաշտոնյաների հետ ունեցած կապերի շնորհիվ փրկել իր հայրենակիցներից շաբերին՝ փալով նրանց կեցության հնարավորություն, թերթացրել է զաղթի հետ կապված որոշ դժվարություններ: Նա համագործակցել է շեյխ Ահմադ բեյ Ռաֆայի և Շեյխ Ռիզաքի հետ, ովքեր Բարի մոդակայքում՝ Դալեպի հյուսիսում, իրենց գյուղերը գրամադրել են հայ փարագիրներին և աջակցել նրանց աշխատանք և սնունդ հայրայթելու գործում:³⁰⁰

Պատերազմից հետո նա առաջիններից էր, ով սկսում է գործել ազգային ոլորտում: «Ալ-Զումհուր Ալ-Արարի» թերթն իր 1954թ. սեպտեմբերի 13-ի համարում նրա մասին գրել է. «Նա միջնորդ է եղել Սիրիայի փեղի բնակչության և իր հայրենակիցների միջն ծագած հարցերն ու հակասությունները հարթելու գործում»:³⁰¹

Ցեղասպանությունը վերապրողներից շաբերն իրենց հուշերում գնահատել են արարների ցուցաբերած օգնությունը: Շաքքայում քրոջ հետ դեգերող Շ. Դիշտիշյանը մեծ երախտագիրությամբ է հիշում արար կոնջը, ով անվարձահապույց, երկար ժամանակ հաց է փեղել նրանց: Ականավետն իր հիշողություններում գրում է. «Շապ անզամներ եմ վերլուծել այդ կոնջ վերաբերմունքը մեր նկարմամբ, և հերքագայում, փասնյակ անզամ ավելի բարի գործերի ականաբետը լինելով, եկել եմ այն եղրակացության, որ իր ազգի բացառիկ զավակը չէր այդ կինը. նրա նման շաբերը կային և կարող եմ ասել, Միջազգեստի ժողովուրդներին բնորոշ էին բարի գործերը, օգնությունը, մարդկայնությունը»:³⁰²

Դեյր էգ-Զորի մոդակայքի ճամբարներում եղել են հսկիչ արար պաշտոնյաներ, որոնց մասին փարագիրները շաբ դրական են արփահայդվել: Չնայած սպառնալիքներին, նրանք թույլ են դրվել արարներին ուրեմնք բերել փարագիրների համար. «Բոլորն օրինում էին արար ազգին՝ մեզ՝ փառապյալներին, անսպասելի օգնություն ցուցաբերելու համար, չնայած

²⁹⁹ Արքաշն Պողոսյանը 1925թ. մասնակցել է նաև Սիրիական մեծ հեղափոխությանը: Եղել է սիրիացի ազգային հերոս Խքահիմ Դանաւոյի օգնականն ու համախոհը: 1937թ. ընկրովել է պարզամավոր:

³⁰⁰ Նշվ. աշխ., էջ 151:

³⁰¹ Նշվ. աշխ., էջ 154:

³⁰² Դիշտիշյան Շ., նշվ. աշխ., էջ 40:

այն հանգամանքին, որ շաբաթների տարրերությամբ նրանք մահվան դադարվելու ու ուժին ոճագործ թուրքական կառավարության գազանացած խմբակի կողմից»:³⁰³

Արար շաբ գործիչների և անհարմների ծավալած հայանպաստ գործունեությունն արդահայպվում էր ոչ միայն հայ փարագիրներին վերապրելու հնարավորություն, նաև ապաստան, սնունդ տրամադրելով, այլ՝ հասարակական գործունեությամբ: Այս համափեքսրում առանձնանում է Սելիմ Չեմբերթը,³⁰⁴ ով այսպատճել է «Սուրբոյ հիրընկալ ափերուն վրայ ազադ շունչ առնող Հայ գաղթականներուն»:³⁰⁵ Լավ փիրապետելով դրստեսական իրավիճակին՝ իր հոդվածներում նա փաստում է, որ հայերը երկրի դրստեսական ոլորտում դրական փոփոխություններ են կարարել և դա հասդարել է վիճակագրական դրվագներով. «Դիսիսի գանազան երկրներէ եկող գաղթականները այս քաղաքի դրստեսական կեանքին մէջ, հոգ, նեղութիւն և դժվարութիւններ սպեղծած չեն»:³⁰⁶

Տարկ է նշել, որ արաբների դիվանագիտական պարմության մեջ է անցել այն փաստը, որ Արգենտինայում իթթիհաղական թուրքիայի դեսպանը՝ ազգությամբ արար Արաւան Ամինը, ով նախկինում թուրքական հյուպարու է եղել Ֆրանսիայում և Բելգիայում, դարձապարփում է հայերի կուրորածները և հեռանում իր պաշտոնից:³⁰⁷

Հայ փարագիրների իրական վիճակի, նրանց նկարմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության մասին հոդվածներ են փայագըրվել Հայեաի «Աք-Թակաղդում» թերթում, որի խմբագիր Շուքրի Ռիզկալլահ Չնեյդերս իր անկողմնակալ հոդվածների համար ենթարկվել է ճնշումների: Նա գեղական ու ֆրանսիական իշխանությունների շրջանում մեծ հարգանք ուներ: Խմբագիրը միշտ այսպատճել է հայերի իրավունքները, որի համար ֆրանսիական իշխանությունների կողմից սպացել է «Օֆիսի ո՞ւ Ակադեմի» շքանշանը: Հաճախ իրեն ուղղված շնորհակալություններին պարախանել է. «Շապերը իմ գրած յօդվածներէս եզրա-

³⁰³ Հիշողիշան Հ., նշվ. աշխ., էջ 49:

³⁰⁴ Նա 1911թ. նշանակվել է Հայեաի Առևտրական սենյակի խորհրդական-անդամ, հետո ընտրվել է փոխնախագահ: 1919թ. Սելիմ Չեմբերթը՝ որպես Հայեաի պարզամագոր Սիրիայի առաջին կոնֆերանսին մասնակցել է որպես նախագահի օգնական: 1923թ. վերսպին ընտրվել է պարզամագոր և Սիրիայի Դաշնային Խորհրդի անդամ, 1924թ. գրանցերել է Հայեաի գերազանցության սերկայացուցական ժողովի փոխնախագահի պաշտոնը:

³⁰⁵ «Սուրիահայ փարեցոյց», Հալեպ, Բ փարի, 1925, էջ 76:

³⁰⁶ Նշվ. աշխ., էջ 78:

³⁰⁷ Ազարյան Լ., նշվ. աշխ., հ. 2, էջ 174:

կացնելով, կը կարծեն, թե ես հայ եմ, կը սխալին, հայը պաշտպանելով ճշմարդութիւնը, արդարութիւնը հրաժարակած կ'ըլլամ»:³⁰⁸

Հայ փարագիրները Սիրիայում կարողանելու են հաղթահարել առաջին դժվարությունները և ինքեզրման փորձեր են կափարում, որն, իհարկե, միակողմանի չէր կարող դրական արդյունքներ գրանցել: Արաբներն իրենց աջակցությամբ նպասգում էին այդ գործընթացին: Սիրիայի «Պարմական հուշարձաններ» կազմակերպության նախագահ Մուհամմադ Կաջան՝ հայ-արաբական համագետ և արդյունավետ գործունեության համար բերում է Հալեպի օրինակը, որը դարձել է երկու ժողովուրդների բաղադրակրթությունների միավորման մի վայր, որտեղ երանք հնարավորություն են ունեցել ապրել միասին՝ ներդաշնակության, փոխհասկացողության և ապագայի նկարամամբ միևնույն գրեսակենքն ու հեռանկարն ունենալով»:³⁰⁹ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում սիրիացիներն ընդունում են հայերին: Հայերն էլ իրենց հերթին փորձում են բարեկամական հարաբերություններ հասպագետ գեղի քաղաքացիների հետ և ամեն ինչ անում էին համակեցության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծել: Մուհամմադ Կաջան կոչ է անում. «Այն փոխըմբռոնումը, միասնական ոգին, հանդուժողականությունը, որը ցուցաբերեց Հալեպը, պետք է օրինակ դառնա մնացած բոլոր այն քաղաքների համար, որ ապրում են փարքեր մշակույթ ունեցող մարդիկ»:³¹⁰

Նարկ է նշել, որ հայ փարագիրներին օգնություն ցուցաբերելու արաբական միամնական դիրքորոշումը բացադրվում է նաև երանց՝ իսլամական համայնքի՝ ումմայի որոշ հավկություններով. «... Նրանց խորթ էին կապիկալիզմի շափ ու շափ չարիքները, իսկ առանձին վափ արարքներ նրա անդամների կողմից արժանանում էին համայնքի պարսավանքին այն չափով, որ նմանները, հարկադրված լրելով հարազագներին, հեռանում էին հեռավոր գեղեցիք»:³¹¹

«Տառապանքի եղայրներ եղանք և ենք փարիներէ ի վեր... Ընդհանուր պատերազմի արհաւիրքները զմեզ ներդաշնություն ու..., էջ 402:

³⁰⁸ «Սուրիական փարեցույց», Հալեպ, 1925, էջ 118:

³⁰⁹ صالح زهر الدين، أصلية العرب والوفاء الارمني، ص 402

Սալիհ Զահր Աղ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 402:

³¹⁰ Նշվ. աշխ., էջ 403:

³¹¹ Դիշտիշյան Ն., նշվ. աշխ., էջ 40:

³¹² «Եփրադ», 25.06.1928:

Փաստորեն, հայ-արաբական փոխարաբերություններն, ըստ Էռլյան, շրջանցում են երիտրուրբական կառավարության ծրագրերի սահմանները և ընթանում այլ ուղղությամբ: Նայ և արաբ ժողովուրդներին միավորում են նրանց ազգային ընդհանրությունները. երկուսն էլ ունեին պարմություն, քաղաքակրթություն, ազգային պատկանելություն, հայրենիք, մինչդեռ նշվածներից և ոչ մեկը թուրքական կողմը չի ունեցել: Այս պատմական ընդհանրությունները թույլ են դրական հայ դրազիրներին արաբների աջակցությամբ համարել ինքնեզրվել Սիրիայի կյանքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻՐԻԱԿԱՆ ԻՇԽԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ
ԱՐԱԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ /1918-1920 Թ-Թ/

3.1 ԷՄԻՐ ՖԵՅՍԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սիրիայի քաղաքական կյանքում թեկումնային էր 1918 թվականը, երբ վերջ է դրվում Օսմանյան գիրապետությանը: Սիրիայում գեղի ունեցող իրադարձություններն անմիջական ազդեցություն էին ունենում գեղի հայ փարագիրների վրա:

Սիրիայի պատմության այդ ժամանակահարվածի իրադարձություններում Հուսեյնի որդի Ֆեյսալը զգալի դերակարգություն է ունենում: Նրա հետ է կապվում առաջին հերթին Սիրիայի ազադագրումը, նրա դերը մեծ էր նաև հայ փարագիրների վիճակի բարեկավման, կայացման խնդիրներում:

Սիրիայի՝ որպես պետքություն, կազմավորման փաստը շատ քաղաքական գործիչներ այդ ժամանակի համար անհավանական էին համարում. «Անհնար է սփեղծել մաքոր սիրիական բազավորություն՝ նոյնիսկ երևակայական. բազմաթիվ ազգությունների բաժանված Սիրիան քաղաքական գեսանկյունից նման է փոշու»:³¹³ Այսուամենայնիվ, չնայած մժվարություններին ու Սիրիայի պետքության կարճափք գոյություն փաստին, այն կայանում է: 1918թ. սեպտեմբերի 30-ին Մերձավոր Արևելքում անգիտական ուժերի գլխավոր հրամանադրար Ալեքսանդր և Էմիր Ֆեյսալի գորքը մրգնում է Դամասկոս, հոկտեմբերի 6-ին հայկական 3-րդ գումարկակի մասնակցությամբ Ֆեյսալն ազադագրում է Բեյրութը, այսուհետև Հոնսր, Համան և Հալեպը: 1918թ. հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմում է առաջին անկախ կառավարությունը: Այդ կապակցությամբ Ֆեյսալը հայդարարություն է. «Իմ գեր Հուսեյն իբն Ալիի կողմից հայդարարություն եմ Սիրիայում բացարձակ անկախ սահմանադրական արաբական կառավարության սփեղծման մասին, որն ընդգրկում է ողջ Սիրիան»:³¹⁴ Սփեղծվում է օրենսդրական խորհուրդ, հիմնվում են դադարաններ, նշանակվում են նահանգապետեր:

³¹³ Pipes D., Greater Syria, The History of an Ambition, NY, 1992, p. 20.

³¹⁴ Նշվ. աշխ., էջ 23:

Թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանն,³¹⁵ ով իր վեցհազարանոց արաբական զորքով մասնակցել է Դամասկոսի գրավմանը, իր հուշերում գրում է. «Շերիֆ Էմիր Ֆեյսալը քաղաք մրավ ոչ որպես զավթիչ, այլ զուսպ, արժանապարփակ մի մարդ. Նա ուղղվեց դեպի այն հրապարակը, որտեղ թուրք գեներալ Զեմալ փաշան առանց ռազմական արյանի ձևականությունների կախաղան էր բարձրացրել գերված ազնվական արար առաջնորդներին».³¹⁶

Օսմանյան կայսրության փիրապետությունից ազադագրվելու գործընթացում արաբական կողմում ակփիվ մասնակցություն է ունեցել հայ փարագիրներից կազմված Արևելյան լեգեոնը, որի գործունեությանը հարկ ենք համարում համառորդ անդրադառնալ մինչ Ֆեյսալի և իր համախոհների՝ հայ փարագիրների նկարմամբ վարած քաղաքականությանն անցնելը: Արևելյան լեգեոնի գործունեությունը կարելի է համարել հայ-արաբական համագործակցության արդյունավետ դրսուրում:

1916թ. նոյեմբերին³¹⁷ սպեղծվում է Արևելյան լեգեոնը:³¹⁸ Լեգեոնի կազմավորման և կամավորագրության պայմանները Ֆրանսիայի ՎԳՆ-ի կողմից հրապարակվել են դեկտեմբերի 5-ին, ըստ որի Արևելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահապարակ հայերն ու սիրիացիները, որոնք

³¹⁵ Սարգիս Թորոսյանը եղել է Թուրքական բանակի հրեվանային կապիտան և վերահսկի սպա: Դարդանելի պատերազմի ընթացքում ցուցաբերած խիզախության և Կայսերական բանակին բերած հաղթանակի համար արժանացել է Բանակի երախփագիրության ու 1915թ. դեկտեմբերի 6-ին սպացել է կապիտանի կոչում, ինչպես նաև պարզևաբրւի է Օսմանյան կայսերական բանակի Պատերազմի շրանչանվ: Իր հայրենակիցների, մասնավորապես, հարազարքների Ակադմամբ Թուրքական իշխանությունների դաժան բաղադրականությունը նրան դրույմ ևս լրել Թուրքական բանակն միանալ Նորի Յուսուֆի հրամանափարությամբ կովող արարենքին: Դամասկոսի գրավման ժամանակ ևս նորի է վեցհազարանց արաբական հեծելազորի ու դաշնակցային զորքի հրամանաբարը: Եղել է նաև Կիլիկիայում ֆրանսիացիների հրամանափարությամբ գործող Հայկական լեգեոնի սպա: Մահրամասն գիտե՞ն Torossian Sarkis, From Dardanelles to Palestine. A true story of five battle fronts of Turkey and her allies and a harem romance, Boston, Meador Publishing Co., 1947.

³¹⁶ Torossian Sarkis, կշ. աշխ., էջ 197:

³¹⁷ Պարմագրության մեջ լեգեոնի կազմավորման հանգամանքների վերաբերյալ գոյություն ունեն փարերեն գեներալներ: Մահրամասն գիտե՞ն Ս. Պողոսյան, Հայկական Արևելյան լեգեոնի 1916-1920թթ. կազմավորման պատմությունից, «Պարմություն», Երևան, 2002, հ. 1, էջ 116-126:

³¹⁸ 1916թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանով կազմավորվում է Արևելյան լեգեոնը, որի կանոնադրությունը նախարարը հասպարում է նոյեմբերի 26-ի թիվ 7966-9/1 հրամանագրով: Լեզենն Արևելյան է կոչվում հայկական կողմից պահանջով՝ Թուրքերի ուշադրությունը շեղեւու համար: Սիրիացիների թիվը չէր գերազանցում լեգեոնի ընդհանուր թվակազմի 1/5-ը: Արևելյան լեգեոնի կորիզը կազմում են Պորտ Սահյում հասպարփակ 600 մուսալենցի երիտասարդները:

առանձին խմբերի մեջ էին դասավորվելու ըստ ցեղի և կրոնի: Լեզեռնի ծախսերը հոգալու էր ֆրանսիան, Լեզեռնը հաստափելու էր Կիպրոսում և դեկավարվելու էր ֆրանսիացի սպաների կողմից: Նայկական և սիրիական կոմիտեները սպաններու էին կամավորներ հավաքագրելու գործը՝ առանց ֆրանսիական դիվանագետների միջամբության, ծայրահեղ գգուշությամբ և առանց հրապարակային որևէ արլուայլության, որպեսզի խուսափեն թուրքերի ուշադրությունից և վրեժինդրական արարքներից՝ ընդեմ հայերի ու սիրիացիների:³¹⁹ Նայերին անզամ արգունվում էր իրենց դրոշն ունենալ՝ ուղղաձիգ կարմիր, սալիրակ, կապույտ գույներով, վրան գրված՝ «Տէ՛ր, կեցոյ զիայ»:³²⁰

1917թ. ֆրանսիական գեներալ Բայուն գենչական այց է կապարել Արևելյան լեզեռն և առաջարկել է վերջինիս օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակման ընթացքում: 1918թ. սեպտեմբերի 19-ին Արարայի ուղղությամբ ընդհանուր հարձակման ժամանակ Ռաֆաթի բարձունքում հայ լեզեռնականներին հաջողվում է թուրքերին դրս շպրտել բոլոր դիրքերից: Այսպեսից հայ լեզեռնականները շարժվել են հյուսիս՝ Ֆեյսալի գործերի հետ գրավելով Դամասկոսը, Բեյրութը, Հայեաքը՝ վերջ դնելով Օսմանյան 400 գարվա տիրապետությանը: Արար պարմարան Սալեհ Զահր Աղ-Դինը հայ լեզեռնականների մասին գրում է. «Երբ թուրքական կառավարությունը միաձուն էր, որ նրանք գաղթականներ են, նրանք վերածվեցին կազմավորված գործի... այդ գործը պահպանեց իր արժանապատճեցունը և հասկալեց, որ կյանքն արժանի է իրեն, և որ «մահ և ոչչացում» բատերը գոյություն չունեն իրենց բառարանում»:³²¹ Արար գրեթե բոլոր պարմարանները մեծ գովեսփով ու հիացմունքով են խոսել Արևելյան լեզեռնի հայ զինվորների վերաբերյալ:

Ֆեյսալ ի սկզբանե հայ փարագիրների նկարմամբ դրական էր գրամադրված և հայանպաստ քաղաքականությունն իրականացնելու համար իր աջակիցների թվում ունեցել է մի շարք ազդեցիկ դեմքեր, ովքեր հետամուլտ էին լինում հայ փարագիրների խնդիրների լուծմանը:

Դեռևս 1908թ. Օսմանյան խորհրդարանում արարական թերակղզու Զիդղա և Մեքքա բնակավայրերը ներկայացնող Ֆեյսալն ու իր եղբայր Արդալահը հակած էին թուրքակավարակ հայերի բարենորոգչական ծրագրերի իրականացմանը, որի շնորհիվ է Ֆեյսալն «արժանացավ Օսմանյան պառամենդի

³¹⁹ Պոյաճեան Տ. Նայկական Լեզեռնը, Ուօթերթառն, 1965, էջ 14:

³²⁰ Նայկական լեզեռնը 1916-1920, լրեն «Յուշամագետն Նայ յեղափոխական դաշնակցութեան ալբոն-արլաս 1914-1925», Լոս Անձնելս, 2001, էջ 190:

³²¹ صالح زهر الدين، أصلة العرب والوفاء الارمني، ص 243 .

Սալեհ Զահր Աղ-Դին, Արարների անկեղծությունն ու..., էջ 243:

հայ երեսփոխանների համակրանքին»:³²² Մինչև Սիրիայում հայ գրաբագիրների հայոցները՝ 1913թ. հունիսին, Փարիզի արաբական կոնգրեսում ըստունված բանաձի 8-րդ կետում Ֆեյսալն ու իր կողմանակիցները նշում են. «Կոնգրեսը հավանություն է գրախան և իր համակրանքն է արդահայտում Թուրքիայի հայերի պահանջներին, որոնք հիմնված են ապակենաբրոնացման սկզբունքի վրա»:³²³

Ֆեյսալին հայանպաստ քաղաքականությունն իրականացնելու գործում աջակցում էին խորհրդականներ՝ կրթության նախարար Սաֆեհ Ալ-Դուսրին, Ֆեյսալի անձնական քարտուղար, փաստարան Ֆայեք Ալ-Դուսեյնը, Դաւաթի շրջանի կառավարիչ Նշանակված Շուքրի Ալ-Վյուրին, Դամասկոսում հենինակություն վայելող քաղաքական գործիչ Հաջի Ալ-Վթասին.³²⁴ Օմար Ֆախուրին, ով Ֆեյսալի կողմից «Ալ-Ասիմա» պաշտոնաթերթի խմբագրման համար Բեյրութից հրավիրվելով Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում /հագիտական «Ալ-Դակիկա»/ հաճախ է հանդես եկել «Դեմոկրատիական» ծածկանունով՝ հայ գաղթականությանը սրբապնդող և արարերի նկարմամբ հայության բարեկամությունը ամրապնդող հոդվածներով:

Հայ ժողովրդի ճակարտագրի նկարմամբ հեգենողական է եղել Օսմանյան պարզամագրության Ալ-Խուուրին:³²⁵ Նրա դրասքրը՝ Զուեթ Ալ-Խուուրին հոր մասին գրում է. «Օսմանյան պաղամենդում նա հեգեսել է Հայկական հարցին»:³²⁶ Վերջինս հեգարքքրվել է հայ պարզամագրուներ՝ Զոհրաբի, Վարդգեսի ճակարտագրով և այդ մասին հարցելի է անզամ Ձեմալ փաշային: Նա իր հուշերը գրի է առել «Ֆարես Ալ-Խուուրին դժվար կացության մեջ է դնում օսմանյան պարզամագրուներին» վերևագրի վակ:³²⁷ Ֆարես Խուուրին փորձել է պարզել երանց անհետացման պարճառները, սակայն «նրան սպառնացել են ու արգելել Ազգային ժողովի հաջորդ նիստին մաս-

³²² Աղպաշեան Յովիկաննես, Խշվ. աշխ., էջ 14:

³²³ على سلطان ، تاريخ سوريا، نهاية الحكم التركي، 1908 -1918 ، دمشق، 1996، ص 176.

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն /1908-1918/, Դամասկոս, 1996, էջ 176:

³²⁴ Հաջի Ալ-Վթասին մինչև պարերազմը Համեն կայմակամի պաշտոնում և պարերազմի գրադիսներին՝ Պուրդուրի նութասարիթի պաշտոնում հաճախ է ըսդդիմացել հակահայ գործողություններ իրականացնելու երիտրութական կարգադրություններին:

³²⁵ 1914թ. ընդունվել է Օսմանյան խորհրդասեում Դամասկոսի պարզամագրություն: Մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը պետական դավադրության համար ճերակապվել է, հենու արդարացվել: Դասախոսել է իրավունքի ինսպիրուտում: 1919թ. ընդունվել է Արաբական գիտությունների ակադեմիայի անդամ, Ֆինանսների նախարար, 1926թ. եղել կրթության նախարար:

³²⁶ أربستان نور، غواص الارمن في الفكر السوري ، ص 136.

Վրիսյան Ն., Հայկական սարսափերը սիրիական միքրում, էջ 136:

³²⁷ صالح زهر الدين، أصللة العرب والوفاء الارمني، ص 327.

Սալեհ Զահր Ալ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 327:

Նակցել»:³²⁸ Նա այն մարդկանցից էր, ով Ֆեյսալի հետ միասին հիմք է դրել Սիրիական պետությանը:³²⁹

Էմիր Ֆեյսալը դեռևս 1917թ. հունիսի սկզբներին Շորեքում հանդիպել է հայ երիտասարդների հետ: Կարապետ ավագ քահանա Գալֆայանը, ով անցել է գարագրության ողջ ճանապարհը, գրում է. «Ամենքս գացինք, համբուրեցինք իր փլշերը: Անակնակա ընդունելութիւն մը ըրավ մեզի և բավ. «Գիտեմ, որ հայերը ուղիղ կերպով կրնան գնահատել մեր այս շարժումը. որովհետեւ անոնք ալ մեզի պէս թուրք բռնակալութեան դառն լուծ կրած են եւ հիմա իրենց գունէն գրկուած՝ մափսուած են սովի և քաղցի, ուստի ես կը խոսդանամ պաշտպանել հայերը իբրև ազադաւոր մը եւ կը հրաիրեմ զիրենք գործակցութեան»:³³⁰

Պահեստինից, Դրուզների լեռներից, Հասուանից և այլ վայրերից եկող գաղթականները նրանք փափական զգացումով էին պարմում Ֆեյսալի՝ հայերին ցուցաբերած նյութական, դրամական, բարոյական օգնության նասին: Ֆեյսալը Կահիրե մենկնող մի խոմք հայերի առաջարկել է. Դամասկոս գնավ իր հետ: «...թե որ փառք մրայ քաղաք, դուք ալ ինձ հետ փառք կը մրենքք»:³³¹

1916թ. հունիսից Հայեպում ձերբակալվել էր Արածնորդական փոխանորդ Տէր Հարություն ավագ քահանա Եսայանը:³³² Քաղաքական հանցանքի մնադրանքով նրան և 60-ից ավելի հայերի կախաղանի էին դարձապարբեկ: 1918թ. Ֆեյսալի՝ Հայեպը գրավելուց հետո քահանա Եսայանը, հայ բանգարկյաների հետ ազարպում է: Վյշ կապակցությամբ Սահակ կաթողիկոսին նա գրում է. «...բանգարկեալքս ամբողջովին ազար արձակութեամբ: Վերածնութեան մվնողորդ մը. ... 25-30 հազար հայ գաղթականութիւնը ազար շունչ մատնել է շնորհիվ արդարաւոր Արար կառավարութեանը»:³³³

Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պոլոս Նուրար փաշան Ֆեյսալին ուղղված նամակում բարձր 1. գնահարում վերջինիս գործունեությունը. «Սիրիայի հարավում գվինվոր Ձեր խիզախ գինվորների ջանքերի շնորհիվ մեզ մոտ են հասել մեր ազգի գարագրյալ զավակները:

³²⁸ أريبيان نور، غوانل الارمن في الفكر السوري ، ص 136-137.

Արիսյան Ն., Հայեկան սարսափերը սիրիական մտքում, էջ 136-137:

³²⁹ صلاح زهر الدين، أصلانة العرب والوفاء للارمني، ص 327.

Սալեհ Զահր Աղ-Դին, Արաքսերի անկանությունն ու..., էջ 327:

³³⁰ Գալֆանեան քահ. Կ., Խշկ. աշխ., էջ 1.9 421:

³³¹ Ջիլիսկիրեան Եղիշ, Լայիսկ., Խշկ աշխ., էջ 47:

³³² Նրա ջանքերով էր հիմնվել Գաղթականների օգնության վարչությունը, որը գրադիւմ էր որդեր ընդունելով և Հայեան հասած գարագիրներին օրնան դրամադրելով:

³³³ Եղիայեան Բ., Ժամանակակից պարմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 80:

Մենք աղոթում ենք Աստծուն, որ նա օրինի Ձեր զորքը և Ձեր հաղթանակը հարաբն դարձնի: Ձեր գինվորներն ավելացնում են արաբների փառքն ու պարիվը: Յանկացած հայ, ուր էլ որ լինի, արաբների կողմնակիցն է: Ձեր նպարակի արդարացիությունը և ազնիվ մրադրությունն ակնհայր է»:³³⁴ Պողոս Նուրբար փաշայի նամակին պարասխանել է Շերիֆ Դուսեյն իրն Ալին. «Եմիր Ֆեյսալին հողած Ձեր նամակը բարյացակամության և սիրո պարզ ապացույց է ... Իրոք, Եմիր Ֆեյսալի՝ փարագիրներին ցուցաբերած օգնությունը յուրաքանչյուր արաբի կրոնական պարտականությունն է ... հայ և նրա վիճակում գրինվող մյուս բոլոր ժողովուրդները մեր համախոհներն են ուրախության և փիրության պահին: Ամենից առաջ Աստծուց հայցում ենք, որ ուժ գա՞ օգնության ձեռք մենքներու փարագիրներին մինչև ողջ աշխարհին հասանելի լինեն մուսուլմանների իսկական զգացմունքները»:³³⁵

Հայ փարագիրներին օգնելու մի նոր փուլ է Ակսվում Ֆեյսալի իշխանության գալուց հետո, երբ հայ փարագիրներին ցուցաբերվող աջակցությունը դրվում է ամուր հենքի վրա և կարարվում օրենքի և պաշտոնական հրամանների շրջանակներում: 1918թ. հոկտեմբերի 18-ին Դամասկոսի զիսավոր հմբագրագրական Ֆեյսալը մեծ ընդունելություն է կազմակերպել արաբների անկախության փասդը նշելու համար, որին ներկա են եղել Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց միաբանության անդամ Եղիշեն Եպսկ. Զիլինսկիրյանն ու Հալեպի առաջնորդական փոխանորդ Տեր Հարություն քահանա Եսայանը՝ արժանանալով հագուստի և ուշադրության:³³⁶

Ֆեյսալ այսպես հայդարարել է, որ նորահասրադ արաբական իշխանությունը դեռ մի շաբթ թերություններ ունի, սակայն նրանք կարող են հետքին բարեկարգել երկիրը. «Անզիհացոց պէս կամաց-կամաց գործենք, որ կարողանանք լաւ հասպարել կառավարական վարչութիւնը և ամրացնել վարչական կազմը»:³³⁷

1918թ. հոկտեմբերին Սահակ կաթողիկոսը նույնականացնելու համար է ուղարկել Ֆեյսալի հետ՝ նրանից հավաստիացումներ սպանալով հայ փարագիրների հարցում արաբական կողմի հայանպատ դիրության վերաբերյալ և «ուրախութիւնը ունեցած է այդ հովանիին ծանուցումը լսելով Արաբիոյ թե թագավորի և թե ալ վարիչ իշխանութեանց կողմէ»:³³⁸

³³⁴ Ուշագրավ է, որ այս և հաջորդ նամակները բայագրվել են սիրիական մամուլում, «Ալ-Աֆքար», 14.11.1918թ. գիր 271-272: Արևիան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 271-272:

³³⁵ Նոյս գեղում:

³³⁶ Զիլինսկիրեան Եղիշեն Եպսկ., նշվ. աշխ., էջ 47:

³³⁷ Նշվ. աշխ., էջ 67:

³³⁸ Եղիշեան Բ., նշվ. աշխ., էջ 95:

Սահակ կաթողիկոսը հերթական կամ չորս հանդիպում է ունեցել Ֆեյսալի հետ, որին որպես թարգմանիչ մասնակցել է Ե. Չիլին-կիրյանը: Հանդիպումներից մեկի ժամանակ Էմիր Ֆեյսալը պարզմել է, որ 19 փարի Կ. Պոլսում ապրելով «հիացած է Հայոց հանճարին և զարգացումին ու ամեն գործի և արհեստի մեջ անոնց ունեցած ընդունակութեանց վրայ: Իրեն նախընդրուած անկեղծ բարեկամները Հայերը եղած էին Պոլսոյ մեջ: Նոյն իսկ մի անգամ Պոլսէն խուսափելով երբ կը մեկնէր դեպի Մերքեր, ճանապարհին հերթապնդումէ: մը ազարուելու համար Հայու մը գուն ապաստանած էր»:³³⁹

«Աթ-Թակաղուում» թերթում հայերը շնորհակալություն են հայրնել արար ժողովրդին. «Օգբագրօնելով առիթը՝ շնորհակալություն ենք հայրնում Հայւափ բնակիչներին և արար ազևսպարու ժողովրդին, որոնք ամենուրեք բարեգութ վերաբերմունք են ցուցաբերում, չեն մերժում եկած փարագիրներին, այլ օգնում են նրանց՝ դրանով փաստելով իրենց բարոյական արժանիքները: Այսքանից հետո մեր կրողմից լուսաբան ժխտում կլինի»:³⁴⁰

1918թ. նոյեմբերի 11-ին Ֆեյսալն այցելել է Հայեա, հանդիպել քաղաքի պաշտոնագոր անձանց ու փարտեր համայնքների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում նա կարևորել է արաբական միասնության խնդիրը, որի հիմքում պեսք է դրվեր ազգային և ոչ թե կրոնական սկզբունքը:

1918թ. դեկտեմբերի 4-ին Հայեպում կայացել է ցեղասպանությունը վերապարծ հայ փարագիրների հանրահավաքը, որին մասնակցել են մոտ 50 հազար հայեր: Վերջիններս յոթ կետից բարեկացած պահանջագիր են կազմել՝ թուրքական կողմին պաֆմելու և հայ ժողովրդի նկարմամբ պարմական արդարությունը վերականգնելու ակնկալությամբ:³⁴¹ Պահանջագիրը ներկայացվել է Հայ ազգային պարմիքրակությանը: Այսիդե կարևոր է այն փաստը, որ հայ փարագիրները կարողացել են համախմբվել. դա արդեն դրական երևույթ էր, որը խոսում է նրանց կազմակերպվածության մասին և երկրորդ՝ առանց արաբական կողմի թույլտվության հայերը հազիվ թե կարողանային նման հանրահավաք կազմակերպել, ինչը խոսում է արաբական իշխանությունների դրական վերաբերմունքի մասին:

Ֆեյսալ իրն Հուսեյնի աջակիցներից Էմիր Ալի Նասերը, նշանակվելով Հյուսիսային Միրիայի արաբական գործերի ընդհանուր հրամանագոր,

³³⁹ Չիլինկիրեան Եղիշէ եպիսկ., նշվ. աշխ., էջ 49:

³⁴⁰ صفحات و وثائق من جريدة القلم الحليبة ، ص 181-182 .

Հայեաի «Աթ-Թակաղուում» թերթի վավերագիր էջերը.... էջ 181-182:

³⁴¹ Առավել հանգամանուրեն գիւն «Հայ ճայն», 06.12.1918:

իր սպայակույփի պետք Ավի Զևենփի³⁴² ընկերակցությամբ, 1918թ. դեկտեմբերին մեկնում է իր նոր պաշտոնագեղին՝ Շալեա, ուր կազմակերպում է հայ դարապիրներին նյութական միջոցներ գրամադրելու գործը:

Մամրութի հայության ներկայացուցիչ Եզնիկ քահանա Աշճյանն ու Եղիստ քահ. Այվազյանը գեղի հայ գաղթականության անունից այցելել են Ավի Նասերին. «Խիստ բարեացական ընդունելութեունելս մը եփք յայլարարեց՝ ... Հայ Գաղթականները Արար կառավարութեան օթօմութիւներով պիփի հաւաքուին և փոխադրուին Շալեա»:³⁴³ Մամրութի կառավարիչ Հայդար թէյը գեղի հայ դարապիրներին հացահափիկով ապահովելու հրաման է տպել:

Երկրի հյուսիսում գրիրող իրավիճակի լրջությամբ և Ֆեյսալի կարգադրությունների խսպությամբ պետք է բացարկել այն հանգամանքը, որ Շալեաի ընդհանուր կառավարիչ Ավի Ռիզա Առ-Ռիկարին 1918թ. վերջերին և 1919թ. սկզբներին քննարկումների ընթացքում պարբերաբար անդրադառնում էր նաև հայ դարապիրների դրությունը: 1918թ. դեկտեմբերի 20-21-ին Ավի Ռիզան հանդիպումներ է ունեցել հայ համայնքի առաջնորդի հետ և հավասպել, որ արար ժողովուրդը, ինչպես պարբերազմի դարիներին, այնպես էլ այժմ կշարունակի օգնություն գրամադրել հայ ժողովորդին:

Շուրջի թէյն ու Ավի Ռիզան Հարություն Եսայանի հետ հանդիպման ժամանակ ընդգծել են. «Մենք համոզուած ըլլալով, թէ հայր իրաւամբ իրաւունք ունի ապրելու, զգլանանք, ամէն եղայրական պարբականութիւն»: Կուսական անգամ խոսքացել է. «Աւելին ընել, երբ առիթը ներէ»:³⁴⁴

1919թ. հունվարի սկզբին Ավի Ռիզան նորից է հանդիպել հալեպահյա գործիչների հետ: Եղիշե Զիլինկիրյանը գրությամբ դիմել է նրան, որպեսզի հայերենով նույնպես դիմումներ ընդունվեն: Նրա այդ առաջարկը դրական լուծում է սպացել:³⁴⁵

1919թ. հունվարին Էմիր Ֆարիզում հանդիպել է Պողոս Նուբար փաշային՝ նրա հետ քննարկելով Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի հայ գաղթականության վիճակի բարեկավմանն ուղղված միջոցառումները և հայ-արաբական հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր: Փարիզի Հայոց ազգային պարբերակությունը Ֆեյսալին է հանձնել Մանչեսթրի և Մարսելի հայ համայնքների նվիրագրությունները՝ ավելի քան

³⁴² Ավի Զևենփը հայ-արաբական համագործակցությունն ամրապնդելու նպագրակով Կահիրենում սրեղծված «Հայ և արար եղայրություն» ընկերության հիմնադիրներից մեկն է եղել՝ Մուշեղ եպիսկ. Սերոբյանի և Առաքել Նորբարի հետ: Ավի Նասերը նրան նշանակել է Շալեաի արաբական կայագորի հրամանագրա:

³⁴³ «Հայ ձայն», 16.12.1918:

³⁴⁴ «Հայ ձայն», 23.12.1918:

³⁴⁵ Զիլինկիրեան Եղիշե եպիսկ., Եղվ. աշխ., էջ 66:

150 կգ ոսկին, որպեսզի սիրիական իշխանություններն այն օգտագործեն Դամասկոսի, Հալեպի, Բեյրութի հայ փարագիրներին սնունդ և բուժօգնություն դրամադրելու համար:

Տարածաշրջանում սպեղծված այս բարդ իրավիճակում Սիրիայում ընդունվում են կառավարական մի շարք որոշումներ, որոնք իրենց նպաստն են բերում հայ փարագիրների փրկության և հայկական միջավայր վերադարձնալու գործին: Դրանց թվում է 1919թ. հունվարին Ֆեյսալի հրապարակած հրամանը, որը փափարվել է նաև Հալեպի «Աթ-Թակադդում» թերթում. «Նորին գերազանցություն Էմիր Ֆեյսալի հրամանը հայ կանանց և նրանց երեխաներին Վերադարձնելու կապակցությամբ» խորագրի փակ, ուր ասվում է. «Այսօր մենք գրել ենք Հալեպի ուսումնական ղեկավար Զաֆար Փաշային, որ նա հենարավոր միջոցներ ձեռնարկի, թերթերում հայփարարություն փա, որ բոլոր նրանք, ովքեր իրենց մոտ պահում են հայ կանանց, երեխաների, աղջիկների, թաքցնում են նրանց ու չեն վերադարձնում իրենց հարազարդներին կամ կառավարությանը, անմիջապես կենթարկվեն դաժան պափժի: Այս հրահանգի նպագակը նրանց գրնվելու վայրը պարզելն է: Նրանց վերադարձները կարժանանան իմ հարգանքին»:³⁴⁶ Այս հրամանի մասին Ֆեյսալը նամակով գրելեկացրել է նաև Հարություն Քին. Եսայանին:

Հալեպի շրջանի ուսումնական ղեկավար Զաֆար Ալ-Ասքարին, ի պատասխան Ֆեյսալի հրամանի, ուղարկել է հեգույալ գրությունը. «Պատիվ ունեցա վերեկանալու Նորին մեծություն Ֆեյսալի հրահանգին՝ հայ երեխաներին, կանանց, աղջիկներին վերադարձնելու վերաբերյալ: Այդ մասին գրելեկացվել են թերթերը, որոնք էլ կզբաղվեն հրահանգի փարածմամբ»:³⁴⁷

Արար պաշտոնյաներն աշխագում էին կարարել Ֆեյսալ՝ Փարիզից ուղարկած ցուցումները:³⁴⁸ Մեկ այլ հեռագրում նա կարգադրում է Զաֆար Փաշային «հայփարերի արաբների մոտ և աշխարթներում գրնվող հայ որբերին, աղջիկներին ու կանանց և հանձնել հայկական ներկայացուցչական մարմիններին»:³⁴⁹

Ֆեյսալի այս հրամանից հետո լայն թափ են սպանում անապարհներից հայ փարագիրների հավաքագրման աշխատանքները: Ֆեյսալի հագու

³⁴⁶ صفحات و ثائقية من جريدة التقدم الحليبة عن الاحوال الارمنية والعربيّة في الدولة ...، ص 324.

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը.... էջ 324:

³⁴⁷ Նույն գրում:

³⁴⁸ Էմիր Ֆեյսալը 1918թ. նոյեմբերի 21-ին մեկնել էր Եվրոպա, ուր մնացել է մինչև 1919թ. ապրիլի 30-ը:

صفحات و ثائقية من جريدة التقدم الحليبة عن الاحوال الارمنية والعربيّة في الدولة العثمانية، ص 321.

Հալեპի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը.... էջ 321:

հրամանով Ալուն Յոթնեղբայրյանը սիրիական իշխանությունների կողմից պաշտոնապես լիազորվել էր ընդունելու Հառիքանի հայերին և նրանց երկաթուղով փեղափոխել Դամասկոս և Դերա: Ֆեյսախի աջակցությունը մեծապես հեշտացնում է գերենվարպած կանանց և երեխանների որոնումները: Հայեափի և Դամասկոսի կառավարիչները խսիր հրահանգներ էին սպանում՝ հեարավորության հեպքում օժանդակել այս գործն իրականացնող խմբերին: Ֆեյսախի հրամանին են անդրադարձել ժամանակի գրեթե բոլոր հայկական և արաբական պարբերականները: «Կիլիկիա» թերթն անդրադառնում է այդ հարցին: «Նկատելով, որ որոշուած է վերադարձնել հայերը, անոնք, որոնք իրենց տան մէջ հայ գաղթականներ կան, պարփառող են անոնց մասին լոր տրամադրային ոսպիկանութիւն, որպեսզի յափուկ ցուցակի մէջ արձանգրուի անոնց անունները: Անոնք, որոնք այս ազդարարութենէն յեփք իրենց մօք կը պահեն գաղթականներէն մէկը պիփի ենթարկուին օրինական հետապնդութեան»:³⁵⁰

Հայ փարագիրների վիճակը փոքր-ինչ բարելավվում է հայ գեղահանվածներին ամսականներ և սնունդ փալու մասին կառավարության որոշումը. «Նախորդ կառավարության ճնշումների հետքևանքով դուրս քշված 48 հազար զարդարականների համար հենարավոր չէ բյուջեից որևէ հավկացում անել, սակայն կարիքավորների համար հարկավոր է կիրառել ուժեղիք բաժանելու որոշումը և նրանց դրամադրել անհրաժեշտ ամեն ինչ»:³⁵¹

Հայ փարագիրներին սնունդ և ամսականներ փրամադրելուց բացի վերջիններիս սոցիալական վիճակի բարեկավմանն էր ուղղված Ֆեյսալի՝ Հալեպի հայ վաճառականների պարփերի հերթազգման մասին 1919թ. մարտի 26-ի որոշումը,³⁵² որը վավերացվում է «Շուրայի խորհրդաւում» /Խորհրդարանում/:

1. Հայերից պահանջված բոլոր պարզբերն ու պահանջները հետքադրգ-վում են մինչև 1919թ. փարեվերջ և այդ թվականից հետո հարկավոր է վճարումներ անել չորս մասնաբաժններով:

2. Եթե պարփակեր հայերից մեզը ցանկություն ունի այլ երկիր գեղա-
փոխվել, պարփակերն իրավունք ունի պահանջել երաշխավորագիր, որը
չներկայացնելու դեպքում դեղափոխությունն արգելվում է:

³⁵⁰ «Կիյիկիա», 23.5.1919:

³⁵¹ Կատավարության սույն որդոշումը պապագիւելի է սիրիական կառավարության պաշտոնական ապահովաբերության «Ա-Ակիմա»-ի 1919թ. փետրվարի 27-ի համառում:

²⁷ ر. يسنان نور، أصدأ الإيادة الارمنية في الصحافة السورية، ص 354.

Արիսյան Ն., Հայոց գեղասպանության արծագանքները..., էջ 354:

³⁵² Խորհրդարանի տույն որոշումը բացագրել է «Ա-Ա-Ասիմ» -ի 1919թ. ապրիլի 8-ի համարում. լին 356- 358 ած ալած արմենի ուղարկությունը պահպանվում է Հայոց ազգային պատմական թանգարանում:

Արիսյան Ն., Հայոց գեղասպանության արձագանքները..., էջ 356-358:

Սույն հրամանագիրը սպորագրել են նաև Շուրայի խորհրդի նախագահ Ալա Ալ-Դինը, նախարարների խորհրդի նախագահ Ալի Ռիզա Առ-Ռիկաբին և այլ նախարարներ:

Արար Ժողովրդի հանդեպ հայերի երախսրագիրությունը դրսնորվել է հայ հոգևորականների կողմից արված հետքյալ հայքարարության մեջ. «...Մենք՝ Ներքոսպորագրյաներս՝ հոգևոր առաջնորդներս, որոշել ենք հետքյալը. քանի որ սիրիացի ազգը համաձայն է Հուսեյն թագավորի որդի Ֆեյսալին հանձնել Սիրիան՝ իր ընական սահմաններով, մենք Դամասկոսի քաղաքապետարան ենք եկել հավաստելու մեր հսկայրարմությունը»:³⁵³

Այս նամակը սպորագրել են մի շարք հոգևորականներ, այդ թվում նաև Դամասկոսի հոգևոր հովիվ Վասպոր Սարգսյանը, հայ կաթողիկների առաջնորդ Ջիջիսը:

Ֆեյսալն, ինչպես նշեցինք, ազգային փոքրամասնությունների նկարմամբ հաւուկ քաղաքականություն է սկսում վարել, իսկ հայերին աջակցելը դարձնում դրա կարևոր կենտրից մեկը: 1919թ. մայիսի 9-ին, Դամասկոսի կառավարական դպրության արված պաշտոնական հայքարարությունում նա անդրադառնում է փոքրամասնությունների հետ հարաբերություններին.³⁵⁴ «...Սիրիայի կառավարման ժամանակ պեսք է ավելի շատ ուշադրություն դարձնել փոքրամասնությունների իրավունքներին ու պահանջներին, որպեսզի վերանա արելությունը և կրոնական թշնամանքը, որ ստեղծել էին թուրքերը»:³⁵⁵

Դանիականը Ֆեյսալը դրել է մինչև Կոնգրեսի գումարումն իր քաղաքականությանը վստահություն դրայու հարցը: Ներկա գումարությունը բոլորը դրվել են իրենց միահամուր համաձայնությունը:³⁵⁶

Այսուհետեւ, Ֆեյսալը, դիմելով ներկաներին՝ կոչ է արել. «...պարտավոր ենք ցոյց փալ դաշնակիցներին, որ մենք մեր անկախությանը ճգփող ազգ ենք, որ մենք պաշտպանում ենք մեր մերձավորներին և դպրություններին, օգնում ենք ծերերին և երիտասարդներին, հարգում ենք նրանց, ովքեր զայիս են մեր պապենական հարազար այս հողում աշխարելու մեզ համար... Ձեզ եմ դիմում միավորվելու հարուկ խնդրանքով, սա մեր բոլորի պարտակա-

³⁵³ أريبيان نورا، أصد ألايدة الارمنية في الصحافة السورية ، ص .357

Արևիսան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 357:

³⁵⁴ Ալի Սուլթանը Ֆեյսալի հանդիպման համար հիշաբակում է մայիսի 5-ը: Տեքստը ամբողջությամբ թես՝ 431-442 1920 -1918, حكم فصل بن حسين، تاريخ سوريا، علي سلطان، تاریخ سوریة، حکم فصل بن حسین، 1996، էջ 431-442:

³⁵⁵ Նշվ. աշխ., էջ 437:

³⁵⁶ Հովհաննեսիսյան Ն., Սարգսյան Ն., նշվ աշխ., էջ 61:

նությունն է և մեր ապագա ծեռնարկումների միակ հիմնաքարը»:³⁵⁷ Ելույթ է ունեցել նաև հայ եպիսկոպոսը. «Ծնորհակալություն եմ հայոցնում արաբ-ների՝ պատերազմի չորս փարիմների ընթացքում ցուցաբերած օգնության և մարդասիրության համար: Մեր պարմությունն արաբների անունը կգրի ունենալ դաշտերով»:³⁵⁸

Ֆեյսալի այս ելույթը հայ փարագիրների համար բավականին կարևոր փասբ էր, քանի որ դրանում մի քանի առումներով անդրադարձ է կապար-վում հայ փարագիրներին՝ որպես ազգային փոքրամասնություն, զաղթա-կաներ, կրոնական փոքրամասնություն և բոլոր դեպքերում խոսվում է ի օգույթ հայերի: Ֆեյսալն անմիջականորեն ուղղորդում էր գեղական դեկա-վարության՝ հայերի հետ ունեցած հարաբերությունները:

Ֆեյսալը, Հայեափի շրջանի ռազմական կառավարիչ Զաֆար Ալ-Ղսա-րիի ընկերակցությամբ այցելել է նաև Հայեափի հայոց առաջնորդարան:³⁵⁹ Այսպես նրան Սահակ կաթողիկոսը սինոդականներով ու բազմաթիվ քա-հանաներով «փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ»:³⁶⁰

Ֆեյսալը կրկին անդրադարձել է հայ փարագիրների խնդրին: Ներկա գրին վողները հագուստ խնդրանքով դիմել են Ֆեյսալին՝ «բազմաթիվ կիներ, աղջիկներ ու մանչեր կը գրինուին Սուրբոյ և Իրաքի քաղաքաբնակ և վաշ-կագուն արաբների քով... անոնց դարձը ազգին անհրաժեշտ պեսքը մըն է, մարդկային պարագականությին ու անվիճելի իրավունք»:³⁶¹ Նրանք խնդրել են Հուսեյն Ալիի ուղերձն ընդհանուրացնել ու համակարգված միջոցառում-ներ ձեռնարկել. «...Կը խնդրենք, որ այս խնդիրն վերջնականապէս լուծեր ու այդպէսով յատերժացնեք ձեր յիշարակը Ձեր բազմաթիւ բարիքներու մէջ»:³⁶² Ֆեյսալը հանդիպում է ունեցել դեռևս 1918թ. դեկտեմբերի 12-ին Հայեափում սրբության արքաների վրա. Գասպարյանն արաբներով ելույթ է ունեցել ու հասդարել. «ամէն զուլումի, խժիժութեան Հայ ու Արաբ փարրը ձեռք-

³⁵⁷ على سلطان ، تاريخ سوريا، حكم فیصل بن حسين، 1918 - 1920، ص 441- 442

Այի Սուլթան, Սիրիայի պարմություն /1918-1920/, էջ 441-442 :

³⁵⁸ على سلطان ، تاريخ سوريا، حكم فیصل بن حسين، 1918 - 1920، ص 440 .

Այի Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 440:

³⁵⁹ Հայեափի կամ Բերիի թեմը Մեծի Տասն Կիլիկիո կաթողիկոսության երկրորդ մեծ ու հետագույն թեմն էր, առաջնորդանիսքը՝ Հայեափի Ս. Քառասուն մանկունք Եկեղեցին: 1920-ական թվականներին Հայեափը եղել է Կիլիկիո կաթողիկոսության վարչական և հոգևոր կենտրոնը:

³⁶⁰ Զիլինկիրեան Եղիշէ Եպիսկ., Խշկ. աշխ., էջ 49:

³⁶¹ «Կիլիկիա» 27.06.1919:

³⁶² Նոյս գեղում:

ձեռքի փուած կողք-կողքի կոռուցին թշնամու դէմ»:³⁶³ Անդրադարձ է կապարվում նաև 1919թ. փետրվարի 28-ի Հայեաի դեպքերին՝ թուրքական գործակալների հետազա խժությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու առաջարկով։ Այդի ընթացքում Ֆեյսալը այցելել է Հայեաի հայկական որբանոց, որի մասին «Աթ-Թակաղդում» թերթը գրում է. «Խորին շնորհակալություն ևնք հայվնում Նորին գերազանցություն Էմիր Ֆեյսալին՝ հայ որբանոց կափարած այցելության համար (Ուամիթ թաղամասում)։ Նա ընթառեն շոյեց որբերին, գրուցեց մի քանիսի հետ։ Երախփագիրություն ևնք հայվնում նրա դրամական օգնության համար»:³⁶⁴

Ինչպես նշել ենք, սիրիական կառավարությունը սփեղծվել էր դեկտեմբերի, որը սպորագրել էր Ֆեյսալն՝ իր հոր Ռուսեյն իր Ալիի անունից։ Փաստորեն այն չուներ որևէ ներկայացուցական մարմին և սահմանադրական հիմք։ 1919թ. մայիսին անցկացվում են Սիրիական գլխավոր կոնգրեսի /Մութամար Ալ-Սուրի Ալ-Ամմ/ ընդունությունները։ Ռուսիան 2-ին կոնգրեսն ընդունում է. «Դամասկոսի ծրագիրը», որով ազգային-ազադագրական ուժերը պահանջում էին Սիրիայի «բացարձակ քաղաքական անկախությունը»։ Տարածքային առումով Սիրիայի պետությունը պետք է ընդգրկեր ժամանակակից ողջ Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը։ Այս պետությունը պետք է լիներ սահմանադրական միապետություն։ որպես թագավոր առաջարկվում էր Ֆեյսալի թեկնածությունը։ Հայ փարագիրների համար ամենակարևոր թերևն այն կենն էր, ըստ որի այդ պետության սահմաններում պետք է ապահովվեին ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքները։

Ֆեյսալը և նրա կողմնակիցները ցանկանում էին հայ փարագիրների նկարմամբ արաբների դրական վերաբերմունքն է ավելի հսկակեցնել՝ հայ փարագիրների զանգվածն արաբական ազգային ծրագրին հենարան դարձնելու համար, ինչպես նաև ձգբում լին հայ փարագիրներին հեռու պահել ֆրանսիական ազդեցությունից։ Այս քաղաքականության ևսպագակն էր նաև հայ-արաբական հարաբերությունների մերձեցման շնորհիվ հսկողություն հասպարել այն ոլորտներում, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի վերջում հայերի ձեռքում էին գտնվում։ Նշենք, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էլ իրենց հերթին էին փորձում օգտագործել հայ փարագիրներին։

Նարկ է նշել, որ հետպատերազմյան մի կարճ ժամանակահարվածում

³⁶³ «Կիլիկիա» 27.06.1919։

³⁶⁴ صفحات و وثائق من جريدة التقدم الحليفة ...، ص 323.

Հայեաի «Աթ-Թակաղդում» թերթի վավերագիր էօնը.... էջ 323։

փոքրամասնությունների գործոնը հիմնական նշանակություն է ձեռք բերում բրիգանացինների և ֆրանսիացինների՝ գարածաշրջանային ռազմավարության մեջ: Այսպես, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան աշխատում էին սիրաշահել Նախկին կայսրության մաս կազմող մի շարք կրոնական և ազգային փոքրամասնությունների՝ վերջիններիս իրենց նպագակների համար օգտագործելու մրադրությամբ: Բացի այդ, փոքրամասնություններին պաշտպանելու ռազմավարությունը նպագակ ուներ իրար դեմ դուրս բերելու գարածաշրջանի ժողովուրդներին:

Դամասկոսի գրավումից հետո արաբական գիևսորական իշխանությունները սկսում են թուրքական գիևսորական գերինների գարագրության գործնթացը, բայց շուրջով Ֆեյսալի հարուկ հրամանով Նրանց թույլագրվում է մնալ երկրում: Այս իրավիճակում հայերին թուրքերից դարբերելու համար իշխանությունն արաբերեն հարուկ փաստաթուղթ /Վասիթա/ էր դալիս հայերին, որին նշվում էր անձի անունը, ազգանունը, հայրանունն ու ծննդավայրը: Առաջնորդարանն այդ փաստաթուղթը կնրում էր ու սպորագրում: Փաստաթուղթը պարփառիր պետք է նկար ունենար, ինչն ինքնությունը հաստատելու մի յուրագիրների համար:

Թուրքերի ներկայությունը գրկում էր հայերին անվագության գիրակցությունից: Ավագամ, Հալեպի ռազմական ընդհանուր կառավարիչ Շուքրին, անդրադառնալով այդ խնդրին, գրել է. «Արար Ազադ կառավարութիւնն իր թշնամիններուն ներած է և Հալեպ գրնուող թրքաց իր արդարութեան շուրջ փակ ապրելուն որոշած էր՝ նոռանալով անոնց չարիքները ... մինչեն իրենց սովորած խաբերայութիւնները և խոսքմնազանցութիւնը շարունակելու վրայ են»:³⁶⁵ Կարծ ժամանակ անց արաբները նոյնայես համոզվում են, որ հայերի մրավախությունները գեղին էին: Շուքրի փաշան նոր հրաման է դալիս, ըստ որի թուրքերին պարփառվում էր ցուցակագրվել գեղի ոսպիկանագիններում ու պատրաստ լինել՝ նոր հրահանգի դեպքում երկրից հեռանալու համար:³⁶⁶

Ողևորված Ֆեյսալի՝ ազադ մամուլի քաղաքականությամբ³⁶⁷ հայերը

³⁶⁵ «Հայ ծայն», 29.11.1918:

³⁶⁶ «Հայ ծայն», 12.02.1919:

³⁶⁷ 1919թ. Քետրքարի 17-ին «Ալ-Ասիմա» թերթը հոյակելի է սիրիական կառավարության պաշտոնաթերթը: Այսպես փափարվելի են կառավարական օրենքները, պաշտոնական հայրարարությունները: Խերթի խմբագիր հայդրի թղթակից Մուհիմ Աղ-Դին Ալ-Խափիրն էր, ով սկսել է ընդհանուր կարծիք սփեղծել սահմանադրական դեկավարման մասին՝ առաջ քաշելով արաբական միասնության պահանջները: «Ալ-Ասիմա»-ն ունեցել է ներքին ու արդարին լուրերի բաժին, որը հաճախ անդրադան է հայերի թեմային:

խնդրանքով դիմել են Շուքրի Ալ-Վյուրիին, ով աջակցել է կիլիկիահայերի՝ թերթ հրապարակելու նախաձեռնությանը: «Նայ ձայն» լրագիրն իր առաջին համարում գրում է. «Մեր անհուն շնորհակալութիւնը և երախսագիտական զգացումները նորահասարաւ Վրաբական կառավարութեանը: Յայլում ենթ մեր անկեղծ շնորհակալութիւնը գեղական կառավարութեան պաշտոնաներուն, որոնք մնելն մինչեւ փոքր շատ միրայի վերաբերմունք մը ունեցան լրագրին հրապարակութեան հանդեպ հարկ եղած ամեն դիրութիւն ընծայեցին»:³⁶⁸

Թերթն իր գլխավոր նպագակներից էր համարում. «Միշտ համակիր Արար կառավարութեան՝ զօրացնելու աշխափի մեր Վրաք եղբայրներուն և հայերու միջեւ եղած բարեկամական յարաբերութիւնները և համերաշխ ոգի, միշտ հաւաքարիմ մնալ իր անունին «Նայո Զայնի» ճշմարիտ արձագանքը ոլլայ»:³⁶⁹

Նոյն համարում Շուքրի Ալ-Վյուրին իր փոխադարձ շնորհակալությունն է հայունել հայերին՝ արաբների նկարմամբ նման դիրքորոշման համար:

Ֆեյսալի և նրա համախոնների աջակցությանը գուգահեռ հայ գրագիրների վիճակի բարեկապումն իրականացվում էր նաև ազգային, բարեգործական և միսիոններական կազմակերպությունների գործունեության շնորհիվ: Այս ժամանակահարվածում վերակազմվում են արդեն գործող որբահավաք հանձնաժողովները, սփեղնձվում են նորերը, որոնք սկսում են ավելի կենսքրոնացած ու արդյունավելի գործել՝ դուրս գալով շնորհապակյա գործունեությունից:

«Կայ ազգային միությանը հաջողվում է գրագիրների համախմբման և նրանց նկարմամբ ցուցաբերած օգնության հարցերում հաջողությունների հասնել: Միության համար կարևոր էր միության կազմավորման համար առաջին ու կարևոր պայմանը. «Որևէ կուսակցական ու որևէ յարանունական անձնատրութիւն, կը մոռնայ իր պարկանած կուսակցութիւնը կամ յարանուանութիւնը, երբ կը միքնէ Ազգային Միութեան ժողովարակելն ներս ... Կուսակցական հակառակութիւն և գաղափարային գրարակարծութիւն ունեցողները՝ հոն գլուխ-զլիսի դուած, ընդիանուրի, Ազգին շահը կը մըրածեն»:³⁷⁰ Արդեն ակդիկացած ազգային կուսակցությունների գործունեությունը գրագիրների շրջանում երկառակությունների միւրումներ էր առաջ բերում, ուստի շատ կարևոր էր համախմբված գործելը:

«ԲՀԸ-ի գործունեությունը Միրիայում հսկայածավալ էր: Վերջինիս ջանք չէր խնայում իրականացնելու «... անապատին խորքերը բռնագրա-

³⁶⁸ «Նայ ձայն», 9.11.1918:

³⁶⁹ Նոյն գեղում:

³⁷⁰ «Նայ ձայն», 12.01.1919:

ιած կամ թափառական որբերուն ազադագրումի և միաժամանակ դեռագի հայուիններու հարէմներէն ձերբազափումի կենսական ծրագիրը»:³⁷¹ 1920թ. սեպտեմբերի 14-ին ՀԲՀՄ-ի կենսդրոնական գրասենյակից Ռ. Ներյանին նամակով գեղենկացնում են. «Ժողովս որոշած է ձեզի լրջորէն եւ դրականապէս օգորչվիզ կանգնի հայուիններու եւ որբերու ազադագրումի գործի մէջ եւ այդ մրահոգութեամբ Հալեպի մէջ կը հասդարէ ազադագրեալներու համար յափուկ Ապասդարան-Աշխաբանոց: Եթե միջոց ունիք գրադուիլ այդ հարցով, անշուշդ մէծապէս պիտի դիրացնեք Հալեպի Մասնաժողովին աշխաբուրիխնը ձեր օգիրակար թելադրութիւններով»:³⁷²

Որբահավաք աշխաբանքների հրականացման հարցում պետք է կարևորել նաև հայրենակցական միությունների ծավալած գործունեությունը: Վերջիններս վերակազմավորվում են ցեղասպանությունից կարճ ժամանակահավաքած անց: Այսպես, բազմաթիվ կանայք ու երեխաներ հանձնըվում էին նոյն զյուղի, ավանի կամ քաղաքի իրենց հայրենակցական միության հոգածությանը: Ներգագայում, երբ 1919թ. սկսած դաշնակից ուժերը կազմակերպում են հայրենադարձություն դեպի Կիլիկիա, գենուում ենք, որ որդեգրված այս անձիք իրենց հայրենակցների հետ վերադառնում են իրենց բնակավայրերը: Քաղաքային կամ զյուղական յուրաքանչյուր համայնք հոգ էր փանում իր որբերի ու այրինների մասին:³⁷³

Նայ գարագիրների վիճակի բարեկավման համար սրեղծվել էր «Աշխաբանքի գուն» նասնավոր գրասենյակը, որը «վարչական խորհրդով օժգուած քաղաքային հայաշաբ կէղրոն էր»:³⁷⁴ Այս գրասենյակը գրանցում էր բոլոր գործազուրկներին, որոնց հնարավորության դեպքում աշխաբանքի էին գեղասպուրում: Ազգիական գինվորական իշխանությունը պաշտոնական կապ է հասպագում «Աշխաբանքի գան» հետ, որի արդյունքում մոտ ուր հարյուր մարդ աշխաբանք է գրնում: «Աշխաբանքի գունը նախախնամական դեր կարարեց վերապրող հայ գործատոր դասակարգին համար այդ շրջանում»:³⁷⁵

1920-ական թվականներին մեծ գերությունների դիրքորոշումների փոփոխությունները նոր իրարանցումների պայման են դառնում Սիրիայի հայ գարագիրների շրջանում: Ոգևորված Ֆրանսիայի դրական դասակարգին համար այդ շրջանում:

³⁷¹ Մելքոնյան Է., Խշվ. աշխ., էջ 99:

³⁷² ՀԱԱ, Փ. 420, գ. 65, գ. 33, թ. 2:

³⁷³ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը ..., դես «Երբ», հ. 2, էջ 165:

³⁷⁴ Նաճարեան Մ., Յուշագիրք..., էջ 23:

³⁷⁵ Նոյն դեղում:

ները սկսում են վերադառնալ Կիլիկիա: 1919թ. փետրվարի 1-ին գնդապետ Բրեմնը ժամանում է Աղանա և հայքարարում. «Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնամ իրևն երկրին: Մենք կառաջնորդնենք զիրենք, որ աճին, մեծնան, և սկսին ինքնազինքը կառավարենու գործին մեջ հաջողիլ»:³⁷⁶ Գեներալ Ժ. Պիկոն ևս հայքարարել է. «Կիլիկիան հայերու դարավոր հայրենիքն է... Կիլիկիան հայուն պիտի ըլլայ»:³⁷⁷ Հավագալով այս հայքարարություններին՝ բազմահազար հայեր Սիրիայի քարբեր տեղերից գալիս էին Հայեպ, այնուհետև՝ գեղափոխվում Կիլիկիա: Դիմնականում Հայկական լեզենի:³⁷⁸ պաշտպանության ներքո հայերը վերադառնում են Կիլիկիա: Հայեպում Հայկական լեզենում կամավորագրվելու համար դիմում են 2 հազար երիտասարդներ, որոնցից 750-ը ուղարկվ անցնում են Աղանա, սակայն զենք չեն սրանում:

1919թ. դեկտեմբերի 17-ի հարուկ հրամանով ֆրանսիական ռազմական նախարարն առաջարկում է Լեզենում թողնել միայն երկու հայկական գումարդակ՝ փոխարենք մեծացնելով սիրիականը:³⁷⁹ 1920թ. ապրիլի 22-ին Արևելքի բանակի հրամանադրությունը է Կիլիկիայի շրջանի հրամանագրարին՝ երկու գումարդակները մեկի վերածել, իսկ մայիսի 1-ին հրահանգ է լինում սկսել Հայկական լեզենի վերջին գումարդակի լուծարումը:

Այսպիսով, հայ-արաբական համագործակցությունն՝ ի դեմ Արևելյան լեզենի, դրական արդյունքներ է գրանցում 1918 թվականին: Ռազմական համագործեղ հաջողությունները պայմանավորված էին նրանց ընդհանուր շահերով: «Անոնց միացումը մեկ դասավորումի, մեկ խմբաւորումի մեջ եղած է անոր համար որ երկունքն այ ուզած են թօթափել նոյն լուծը: Վյո պարճառը գոյութիւն ունենալէ դադրած է»:³⁸⁰ Ֆեյսալի իշխանության հասկագրումով վերջ է դրվագ Սիրիայում Օսմանյան կայսրության փրիապեգությանը, եւդեմաքարար, Արևելյան լեզենն իր սկզբնավորման բուն նպատակին արդեն հասել էր և կարծես սպառել էր իրեն. փոխվել էին Արևելյան լեզենի սպեհնանան

³⁷⁶ Թոփուզյան Ն., Խշ. աշխ., էջ 162:

³⁷⁷ Նոյեմ գեղում:

³⁷⁸ 1918թ. Մուդրութի գիւղադադարից հետո Արևելյան լեզենի հայ սպառերի և Նորար փաշայի կողմից դիմումներ են ինեւում լեզենը կոչելու Հայկական և վերանայելու կանոնադրությունը: Տունվարի 18-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 546-9/11 հրամանով կազմավորվում է Հայկական լեզենը: Բաժանումից առաջ լեզենն ուներ հետքայի պարկերը՝ հայկական 4 գումարդակ՝ 4124 և սիրիական մեկ գումարդակ՝ 698 գիւղադադարութիւնը: Տե՛ս Գարամանառուեան Ա., Հայկական Լեզենը պարմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին դպակ եւ վաերագրեր, Հայկագեան Հայագիտական Հանդէս, Պէյրութ, 1974, հ. Ե, էջ 83:

³⁷⁹ Խշ. աշխ., էջ 85:

³⁸⁰ Պօյաճեան Տ., Խշ. աշխ., էջ 175:

հիմքում դրված քաղաքական և գինվորական պայմանները: Արարները հասել էին իրենց անկախությանը, մինչդեռ հայերի «համախմբումը ինքնավար Հայկական Լեգենի մը մէջ՝ իրենց ամենէն անհրաժեշտ կարիքը կը համարեն»:³⁸¹ Ի վերջո, 1920թ. օգոստոսի 19-ին ֆրանսիացիները, վերջնականապես, լուծարեցին Հայկական լեզենը, որովհետո այն կարող էր խանգարել Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականությանը: Փաստուն, Լեզենը լուծարվում է այն վճռական պահին, երբ Կիլիկայի հայությունը վերջինիս կարիքը շափ ուներ:

Նոյն ժամակահարվածում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ասպիճանաբար իրականացնում էին Սայրս-Դիկոյի համաձայնագրի դրույթները: 1919թ. նոյեմբերի 1-ից Արևմտյան Սիրիայում³⁸² բրիտանական զորքերն ասպիճանաբար փոխարինվում էին ֆրանսիական զորքերով: Անգլիական ու ֆրանսիական մրցակցությունը երկար չի տևում, Անգլիան գեղի է տալիս, որի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջը հայդրարել է, որ չի ցանկանում փչացնել հարաբերությունները, քանի որ «իր համար Ֆրանսիայի հետ հարաբերությունները բասը Սիրիա արժեն»:³⁸³

Այս իրադարձություններին զուգահեռ Սիրիական կոնգրեսը կոչ էր անում ժողովրդին դիմադրել ֆրանսիական զորքերին ու ամեն ինչ անել ձախողելու նրանց գաղութափիրական ծրագրերի իրագործումը:³⁸⁴ 1919թ. դեկտեմբերի 21-ին օրենքը է հրապարակվում գինապարփության մասին,³⁸⁵ որը նախագիծն էր գորակոչել 20-40 տարեկան բոլոր գրամարդկանց:

Սույն օրենքը նոր անհանգստություն է առաջ բերում հայ գրագիրների շրջանում: 1920թ. Սահակ կաթողիկոսը Դամակոսից և Հայեափից դիմումներ է սրբանում այն մասին, որ նորակազմ արարական կառավարությունն իր գինվորական ընդհանուր ծրագրի մեջ հրահանգել է գինակրչել նաև հայերին: Վերջինս 1920թ. փերրվարի 7-ին հավույկ նամակով խնդրում է Ֆեյսային հայերի նկարմամբ այդ ծրագրի իրագործումը հետաձգելու մասին, մինչև

³⁸¹Պօյածեան Տ., նշվ. աշխ., էջ 175:

³⁸²1918թ. Դամասկոսում թևն հասդարվում է Ֆեյսալի սիրիական կառավարությունը, սակայն Մեծ Բրիտանիան, «Սիրիան» /պատմա-աշխարհագրական այդ գերմինի մնջ միավորվում էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանասերը/ «թշնամու օկուպացված գրաքանչ» է հոչակում. Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գիսավոր հրամանափառ Ալեներին «Սիրիան» բաժանում է երեք գործերի. հարավային՝ ընդգրկում էր Պաղեստինն ու Անդրհորդանասի մեծ մասը, որը դրվել էր անգլիական ռազմական կառավարման ներքո, արևմտյան՝ ընդգրկում էր Լիբանանն ու Հարավիայի շրջանը, որը դրվել էր ֆրանսիական ռազմական կառավարման ներքո և արևելյան՝ ընդգրկում էր Դամասկոսը, Հայեապը, Ձերել Դրույթն ու Անդրհորդանասի մի մասը, որը դրվում է Ֆեյսալի կառավարման ներքո:

³⁸³Pipes D., նշվ. աշխ., էջ 29:

³⁸⁴Դովհաննիսյան Ն., Սարգսյան Ռ., նշվ. աշխ., էջ 75:

³⁸⁵Сайд А., յշ. սու., с. 86.

միջազգային որոշումներով հսկակեցվի նրանց կարգավիճակը. «Վասրահ ըլլալով Ձեր բարեացակամ սիրտին մէջ ամրացած հայասէր զգացումին ու ջերմ վերաբերումին... Նկարելով, որ հպատակութեան որոշումը, զինորական ծառայութեան ընդհանրացումը եւ երկու ազգերու միջնութիւնը կատարված է առաջապահութեան մասին»:³⁸⁶ Սահակ կաթողիկոսը, մղահոգվելով, որ նման ձեռնարկումը կարող է լարում միցենել հայ-արաբական հարաբերություններում, մինչ Ֆեյսալին դիմելը, նոյն հարցով դիմում է նաև Պողոս Նորար փաշային: Նարկ է Նշել, սակայն, որ զինապարփության օրենքը քաղաքական խառնաշփոթ իրավիճակում չգործեց անզամ արաբների համար, այնպէս որ հերթը հայերին չհասավ: Այդ օրենքն, ըստ եռթյան, չգործադրվեց»:³⁸⁷ Միայն Սան-Ռեմոյի կոնֆերանսից հետո Հաշիմ Ալ-Աքասիի կառավարությունը որոշում է գործադրել օրենքը՝ բանակ սպեհնելու և վերջինիս ֆինանսական միջոցներ ապահովելու համար:

Նման լարված քաղաքական իրավիճակում 1920թ. հունվարի 6-ին Փարիզում սպորագրվում է ֆրանս-սիրիական համաձայնագիր՝ Կլեմանսոնի և Էմիր Ֆեյսալի միջև:³⁸⁸ Ազգային-ազգագրական պայքարը գնալով ուժեղանում էր: Ֆեյսալին իր բացակայության ժամանակ փոխարինած Զեյդ իշխանը հետազրում է Եվրոպա: «Ես չեմ կարող կանգնեցնել հեղափոխությունը»:³⁸⁹ 1920թ. մարտի 6-ին Դամասկոսում բացվում է Սիրիական կոնգրեսը՝ Հաշիմ Ալ-Աքասիի գլխավորությամբ: Մարտի 8-ին հայ-փարարվում է Սիրիայի միասնական ու անկախ պետքության սրբեղծման ու Էմիր Ֆեյսալի թագավոր հոչակման մասին: Հաջորդ օրը Առ-Ռիկաբին կազմում է Սիրիայի թագավորության առաջին կառավարությունը, սա-

³⁸⁶ Երիայեան Բ., Խշվ. աշխ., էջ 95-96:

³⁸⁷ Ռովհաննիսյան Ն., Սարգսյան Շ., Խշվ. աշխ., էջ 96:

³⁸⁸ Ըստ համաձայնագրի՝ ֆրանսիական կառավարությունը «երաշխավորում» էր Սիրիայի անկախությունը, այն սահմաններում, որը կճանաչեր Խաղաղության վեհաժողովը: Կարևոր էր երկրորդ կնքը, ըստ որի Ֆեյսալը ճանաչում էր Ֆրանսիայի հասպարփումը Լիբանանում: Ֆեյսալը պարտավորվում էր ֆրանսիայից խորհրդականներ և մասնագետներ ենթել: Սիրիայի պետքական ոլորտներում և բանակում բարեփոխումներ կատարելու նպատակով: Սիրիական կոնգրեսի գործադիր կոմիտեն միաձայն մերժում է այդ պայմանագիրը: Տես 214-215, 1920, Հ. Հայոց պատմություն, 1918-1919, մայիսի 214-215:

³⁸⁹ Ռովհաննիսյան Ն., Սարգսյան Շ., Խշվ. աշխ., էջ 82:

կայն ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի մանդատը հանձնվում է Ֆրանսիային: 1920թ. հուլիսի 14-ին Դամասկոսին ֆրանսիական կառավարությունը վերջնազիր է ներկայացնում, որով Ֆեյսալից պահանջվում էր ճանաչել Ֆրանսիական մանդատը, պարփծ սահմանել հակաֆրանսիական գործունեություն ծավալողների նկարմամբ:³⁹⁰ Հուլիսի 19-ին Սիրիական կոնգրեսը կրկին հասդարձում է Սիրիայի անկախությունը պետքություն լինելու փաստը և անօրինական է համարում ցանկացած օպարերկրյա միջամբությունը:³⁹¹ 1920թ. հուլիսի 24-ին Մայսալունի ճակարտամարտն ավարտվում է ֆրանսիական կողմից հաղթանակով:³⁹²

Ֆրանսիան դեռևս 1919թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսին հանդես էր գալիս Սիրիայի ամբողջականության օգտին: Ֆրանսիայի Արքացին գործերի նախարար Կլեմանսոն 1919թ. հոկտեմբերին հասդարձել է այն գաղափարը, որ հետպատերազմական կարգավորումը չպետք է հանգեցնի Սիրիայի բաժանմանը: Այսպիսով, Ֆրանսիան ցանկանում էր Սիրիան՝ ամբողջական և իր իշխանության տակ, որն իրականություն է դառնում որոշակի վերապահումներով Սան-Ռեմոյի կոնֆերանսում:³⁹³

Սիրիական թագավորությունը կարճ կյանք է ունենում, և Ֆրանսիան կարողանում է հասնել իր ծրագրերի իրագործմանը՝ Սիրիան դարձնելով մանդատային գոտի:³⁹⁴ Փաստորեն, Ֆեյսալի վարումով վերջ է դրվում Սիրիայում Հաշիմյան ժամանակաշրջանին, որը որակվում է որպես «կանգառ՝ թուրքական իշխանություններից անգիտական և ֆրանսիական իշ-

³⁹⁰ علي سلطان ، تاريخ سوريا، حكم فیصل بن حسين، 1918 - 1920 ، ص 356

Այլ Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 356:

³⁹¹ Հովհաննեսյան Ն., Սարգսյան Շ., Խշկ. աշխ., էջ 99:

³⁹² Ֆրանսիական գործը Դամասկոս է մերեկ հուլիսի 25-ին: Ֆեյսալն Ալ-Դին Ալ-Դրութին նշանակել է սիրիական նոր կառավարության ղեկավար, ով հետքագայում ընդունում է Ֆրանսիայի Ֆեյսալին գահընկեց անելու, սիրիական բանակը ցրելու և այլ պահանջները: Ֆեյսալը հուլիսի 28-ին հեռանում է Դամասկոսից, իսկ օգոստոսի 1-ին՝ Սիրիայից:

³⁹³ Pipes D., Խշկ. աշխ., էջ 24:

³⁹⁴ Ֆրանսիական մանդատային տարածքը մինչև 1923թ. մարտ բաժանված էր վեց կազմավորումների՝ Լիբանան, Դամասկոսի նահանգ, Հայեալի վերություն, Լարակիայի մարզ, Ջեբել Դրուզի ինքնավար մարզ ու Վելեբանդերեփի նահանգ, և Եփրար գետի Զաքիրայի նահանգն առանձին ղեկավարվում էր Ֆրանսիական զինվորական կառավարությունների կողմից: Այս բաժանումները հսկակ և պատրակ ունեն շահարկել էրեխիկական տարբերությունները: Լիբանանը 1926թ. անկախ հանրապեսիրություն է դառնում, Վելեբանդերեփը՝ 1939թ. հանձնվում է Թուրքիային, իսկ մյուս տարածքները 1925թ. կազմում են Սիրիայի ներկայի պարագքը, որին 1942թ. հունիսին միանում է Լարաքիան, 1944թ. դեկտեմբերին Ջեբել Դրուզ, որին հունիսին վերջին ֆրանսիական զինվորը դրույ է գալիս 1946թ. ապրիլի 15-ին: Stev Pipes D., Խշկ. աշխ., էջ 29:

խանություններին անցում կապարելու համար»:³⁹⁵

Այսպիսով, չնայած Ֆեյսալի արքաթիև քաղաքականությունը մի շարք փոփոխություններ է կրում, սակայն հայ գարագիրների հարցում Ֆեյսալն ունեցել է մեկ դիրքորոշում՝ հնարավոր միջոցներով օգնել հայ գարագիրներին:

Բնականաբար, երկրում գեղի ունեցող քաղաքական փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են հայ գարագիրների վրա: 1919թ. գեղեցիկ Նալեախի հայկական կողորուածները, որոնց մասին առավել մանրամասն կանրադառնանք հաջորդ ենթագլխում, որոշակի լարվածություն են մրցւում հայ-արաբական փոխհարաբերություններում, դանդաղեցնում են որբերի ու կանանց հավաքագրման աշխարհանքները, բայց հակասություններն ասդիճանաբար հարթվում են:

Նարկ է և ետև, որ հայ-արաբական փոխհարաբերություններն այդ գարիներին հարթ չեն ընթացել: Երկու ժողովուրդների միջև առկա անվըս-դրահությունն ուներ իր օբյեկտիվ պատճառները: Երիտրուրքների իրականացրած ցեղասպանությունից հետո հայերն իսլամական միջավայրում զգուշացրություն էին ցուցաբերում: Քաղաքական նկարառումներից ելելով՝ Սիրիայի արաբներն իրենց հերթին զգուշանում էին հայկական համայնքից: Հայերը ֆրանսիական իշխանությունների կողմից կարող էին օգտագործել արաբների դեմ՝ վերջիններին ազգային-ազգակազարկան պայքարի ժամանակ: Բայց նման թշնամանքը համապարագ բնույթ չէր կրում՝ հաշվի առնելով Սիրիայի արաբների բազմագուարությունը: Հակահայկական գործողությունները անհապական ու մարդինալ բնույթ են կրել, որոնք թեև իրողություն են, բայց չեն սպասերում արաբ ժողովրդի, նրա դեկավարների դրական վերաբերմունքն ու հայ գարագիրներին վերահաս վրանգներից փրկվելու հեարավորության ընձեռումը:

Այսպիսով, չնայած քաղաքական, կրոնական, լեզվական և այլ խոչընդունող հանգամանքներին, դարասկզբին Սիրիայում հայտնված հայ գարագիրները կարողանում են համագործակցել սիրիացի արաբների հետ՝ ասդիճանաբար բարեկալվելով իրենց վիճակը: Եթե 1915-1917 թթ. սիրիացի արաբների օգնությունը հայերին հիմնականում անհապական բնույթ ուներ, ապա սկսած 1918թ. Ֆեյսալի կառավարության գարիներից անհապ արաբների ցուցաբերող օգնությանը զուգահեռ գարագիրներին աջակցություն է գրամադրվում նաև պաշտոնական մակարդակով:

³⁹⁵ على سلطان ، تاريخ سوريا، حكم فصل بن حسين، 1918 - 1920، ص 407.

Այս Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 407:

3.2 1919 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ՆԱԼԵԴԻ ԴԵՊՔԵՐԸ

Էմիր Ֆեյսալը հայ-արաբական հարաբերությունները բարելավելու քաղաքականություն էր վարում, սակայն այս գործընթացում առաջ եկան նաև որոշ խոչընդուներ: «Հալեպի կողորուած», «Հալեպի ջարդ», «Հալեպի դեպք». այսպես են որակվում 1919թ. փետրվարի 28-ին Հալեպում գեղի ունեցած կողորուածները, երբ փարազիր հայերը ենթարկվել են մուսուլմանների հարձակմանը: «Թուրք ջարդարարները, առաջնորդելով մոլորեցված մի խումբ արաբների, փարածվում են քաղաքով մեկ՝ Զումաա բազար, Ազապե, Բար Ալ-Զնեյնի, Զասթալ Հարամի, Բար Ալ-Նասր, հարձակվում են հայերի որբանոցի, դպրոցների, նախկին զորանոցի վրա»:³⁹⁶

Սահակ կաթողիկոսը հետքեալ կերպ է արդահայրվում դեպքերի կապակցությամբ. «Ժխուր դեաք մը մթազնած էր հայ և արար յարաբերութիւնները... Հալեպի մէջ 1919թ. փետրուար 28-ին ... այդ հակաքրիստոնէական շարժումը, ինչպես կը յայդնէ գնդապեւու Պուեմոնը, ընդհանուր շարժում մըն էր՝ գրգռուած Սիրիոյ մէջ ու նոյսպէս ծրագրուած Ալիանայի մէջ, իր կազմակերպութեան կեղրոնը ունենալով Պուսոյ մէջ: Ամեն գեղ գրգռութիւն յառաջուցած էր ինկող թուրք Կառավարութիւնը»:³⁹⁷

Ըստ արար որոշ ականարեսների՝ ընդհարման համար պատրվակ է ծառայել Ալ-Զումաա շուկայում հայերի կողմից կափարված գողությունը: Այս լուրը փարածվում է ողջ քաղաքով, մինչև «անզլիական և ֆրանսիական շրջանակները շարժվեցան և թույլ չբուժին, որ ջարդն ավելի ծավալի»:³⁹⁸ Իհարկե, Հալեպի դեպքերի ենթադրյալ պատճառների թվում այս պատճառն առավել անհավանականն է:

Փետրվարի 28-ի իրադարձությունների հետևանքով սպանվածների և վիրավորների մասին բերվում են հակասական գեղեկություններ: «Կիլիկիա» թերթը /1919թ. մարտի 12 և 14/ նշում է, որ սպանվել են 51, վիրավորվել շուրջ 100 և անհետ կորել 20-30 հայեր: Ֆրանսիական մամուլը նույնպես անդրադարձել է այս դեպքերին, նշելով, որ հայերն ունեցել են 50 զոհ և 150 վիրավոր՝ մեկ ժամից էլ պակաս ժամանակահավաքվածում: 1800 դրության մեջ մասնաւոր գործություն է հիմնադրանց:³⁹⁹

Ընդառաջնորդ հայոց առաջնորդարանի դիմումներին՝ բրիգանա-

³⁹⁶ Նաջարյան Ե., Հայ-արաբական փոխարարաբերությունները Սիրիայում /1918 հոկտեմբեր-1919 հունիս/, գրքն «Մերձավոր և Միջին Արևելիք երկրներ և ժողովուրդներ», Երևան, 1974, հ. 6, էջ 154:

³⁹⁷ Եղիայեան Բ., Եջվ. աշխ., էջ 95:

³⁹⁸ Թոփուուզյան Հ., Եջվ. աշխ., էջ 214:

³⁹⁹ "L'illustration", Paris, 5 avril, 1919.

կան իշխանությունների կողմից այս դեպքերի կապակցությամբ հագուկ սկզբան ու ազմական դադարանը ձերբակալել է հայկական կողործածների մի շարք պատասխանագործուների, աշխաբանքից ազագել հայերի նկարմամբ բռնություններ գործած բազմաթիվ պաշտոնյաների և 35 անձանց դադարագործել է մահվան: Մի քանի ոճրագործներ պատժվել են անզամ Սիրիայի սահմաններից դուրս: Դեպքերն ուսումնասիրելու նպատակով կազմական քննիչ հանձնաժողովում ընդգրկել են երկու անգլիացի, երկու արար, մեկ ֆրանսիացի և երկու հայ՝ Պ. Փափազյանը և Մ. Նաթանյանը՝ որպես Հայ ազգային խորհրդի ներկայացուցիչներ:

Դեպքերի օրը Հայ ազգային միությունը դիմել է գեղի ֆրանսիական և անգլիական կառավարություններին՝ սպառնացող վրանքը կանխելու խնդրանքով: Խորհրդակցության և բանակցության ընթացքում անգլիական գորահրամանագործ առաջարկել է. «Նոյնիսկ Վրաններու գակ փոխադրելու հայերը, որպէսզի ի հարկին դիրին ըլլայ պաշտպանել զանոնք»:⁴⁰⁰ Վերջինիս այս առաջարկն, իհարկե, չափազանցություն էր, քանի որ հնարավոր չէր քաղաքում ապաստանած բոլոր հայերին գեղավորել վրանների գակ:

Մուհամմադ Քուրդ Ալին նշում է, որ բրիտանական դեկավարը «մեղավորներին» ուղղված իր ելույթում ասել է. «Դուք դեկավարներ եք և դեկավարներն իրենց գոգիպությունն ի ցոյց չեն դնում հասարակությանը: Մենք որևէ օրինական պատիճ չենք կարող ծեզ համար սահմանել, բայց այսուհետ դուք պեսք է հետիւնք, թե ովքեր են զենք կրում կամ տրամ պահում, քանի դեռ արելության մթնոլորդ է, և ժողովուրդը հիշում է այդ դեպքը»:⁴⁰¹ Նա Հալեպի դեպքերը որակում է «հայկական աղեփ»:⁴⁰²

Հալեպի հայկական կողործածի պատճառները հիմնականում քաղաքական էին, սակայն այն համարվել է քրեական հանցագործություն: Կայացվել են մահավճիռներ, մի խումբ ոճրագործներ ձերբակալվել են և գործն ավարտված է համարվել: Բրիտանական իշխանությունները պարբերաբար հրապարակել են պաշտոնական հայրարարություններ, որով ծանուցել են իրականացվող մահապատիժների մասին. «Հայկական ջարդին մասնակցելուն համար պարբերազմական արեանի կողմէ դադարապուած ենմեր Շերիֆ Ակնայի և մանրավաճառ Աբդ Ալ-Բեդիի մահավճիռը ընդ-

⁴⁰⁰ Կէնձեան Ա. Սօցիալ-դէմօկրաք Հնչակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան աքթը 1919-1921, Պէյրութ, 1958, էջ 8:

⁴⁰¹ محمد كرد على، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983، ص 165.

⁴⁰² Մուհամմադ Քուրդ Ալի, Շամի գեղագրություն, հ. 3, 1883, էջ 165:

⁴⁰³ Նշվ. աշխ., էջ 164:

հանուր հրամանափարության կողմէ վավերացված ըլլալով, այսօր՝ մայիսի 8-ին անոնք կախաղան հանուեցան»:⁴⁰³

Ավելի ուշ թերթը գեղեկացնում է, որ «փերրուարի 28-ի հայկական շարդի հեղինակներէն 4 հոգի ևս մահուան դափապարփուած են Նալէպի մէջ և իրենց վճիռը գործադրուած է Պապ Ալ-Ֆարաբի հրապարակում»:⁴⁰⁴

Փերրվարի 28-ի ջարդարարության հեվլսանքով բանվարկված արարները փորձել են ապստամբել և փախչել: Վերջիններս փեղի նահանգապեփի հրամանով գնդակահարվել են: Միայն մի քանիսն են ողջ բոնվել ու զինաքափ արվել և ուղարկվել են Սույանի բանտերը:⁴⁰⁵

Փարիզահայ հասարակական գործի Մարան գգնում է, որ այդ կուրուածն իր սկզբնական բնույթով «ֆրանսիական հոգափարության դեմ սարքված շարժում մը, որուն թելադրությունը միշտ Դամասկոսէն՝ մահմեդական Սուրիոյ այդ միջնաբերդնեն կուգար, նոյնիսկ հայկական կովորածի մը գեղի դրվագ, որովհետք Ֆրանսա Սուրիա էր մկած հայ զինուրներով և հայերը կնակափվէին ֆրանսիական դիրապեփության դրօշակակիրները»:⁴⁰⁶ Այս գենսակետն է կիսում նաև Ա. արք. Սյուրմեյանը. «Զարդը կազմակերպուած էր շերիֆական ոսպիկաններու և ոսպիկան զինուրներու կողմէ ... ջարդը ծրագրուեցաւ Նալէպի մէջ նոյն օրերուն խռնուող հարիր հազարէ աւելի հայ գաղթականներու ներկայութեանը իբր դժգոհութիւն, լաւ հասկցած ըլլալով Նայոց Ֆրանսասիրութեան»:⁴⁰⁷ Այս գենսակետի մէջ կա որոշակի ծշմարդություն, սակայն միայն դրանով հնարավոր չի բացաբրել նշված իրադարձությունները, իսկ մանդապի դարիններին ֆրանսիական կողմը կառչում էր դրանից և անընդհափ քրիստոնյաներին վախեցնում էր իսլամական վկանգով:

Արևելյան լեգենդի հայ զինվորների մուգքը Սիրիա չեր կարող հայկական կուրուածների ուղղակի պափճառ համարվել, սակայն, ինչ խոսք, որոշ բացասական ընկալումներ առաջացել են արաբների մով՝ ազդելով նաև հայ-արաբական հարաբերությունների վրա: Բացի այդ Նալէպի արաբները լրեղեկացված էին, որ հայերը հավաքվում են քաղաքում՝ այնպեսից Կիլիկիա՝ իրենց հայրենիք մեկնելու համար, իսկ ինչ վերաբերում է շերիֆական զինվորներին, ապա նոյն շերիֆականների հետ միասին են հայերն ազատագրել Նալէպը, Դամասկոսը, այն էլ ոչ վաղ անցյալում: Այնպես որ հա-

⁴⁰³ «Կիլիկիա», 14.05.1919:

⁴⁰⁴ «Կիլիկիա», 17.06.1919:

⁴⁰⁵ «Կիլիկիա», 23.05.1919:

⁴⁰⁶ Թուուույան Հ., նշվ. աշխ., էջ 216:

⁴⁰⁷ Սիրիմեեան արք. Ա., Պարմութիւն ..., հ. Բ, էջ 960-961:

յերի ֆրանսամետ լինելու այդ ժամանակահարվածում այդքան ցցուն չէր, որ հանգեցներ արաբների նմանօրինակ վարվելակերպին:

«Սիրիայի պարմություն» աշխարհության հեղինակ, պարմարան Ալի Սուլթանը Հալեպի դեպքերի իրական պարբռա է համարում այն փասքը, որ բազմաթիվ հայ կամավորներ ծառայում էին Կիլիկիայում և գետափնյա շրջաններում: Վերջիններս նաև Սիրիայի լեռնային շրջաններ գնալով՝ կողրապետում և սպանում էին արաբներին ու թուրքերին, որի հետևանքով «...արաբները մի փեսակ թշնամանքով էին լցվել հայերի նկարմամբ»:⁴⁰⁸

Այս Սուլթանը կիսում է Մարույի կարծիքը. ըստ որի Սիրիայում գիրող հակաֆրանսիական գրամադրությունները և ֆրանսիական բանակում հայ կամավորների ծառայելու փասքը լրացուցիչ լարվածություն էր մտցնում հայ-արաբական հարաբերություններում: «Եղինակը դրա ապացույցն է համարում Հալեպից Բեյրութի ֆրանսիական հյուպատութան ուղարկված հեռագիրն, ուր ասվում էր. «Խնդրում ենք թույլ տրամադրել հայ կամավորներին չծառայել ֆրանսիական բանակում»»:⁴⁰⁹ Սակայն արաբների հակաֆրանսիական գրամադրությունները չեն կարող հայկական կորուրածների պարբռա դառնալ: Ֆրանսիան՝ Սիրիայի նկարմամբ իր ծրագրերն արդարացնելու համար դեպքերից հետո է միայն փորձում օգրագործել նշված իրադարձությունը՝ Ֆեյսալի իշխանությունը վարկարենկելու և հայ-արաբական հակասությունները սրելու համար:

Մոհամմադ Քուրդ Այն Հալեպի դեպքերի համար երեք պարբռա է բերում: Ամին Սահր Ղարյաբը, ում Մոհամմադ Քուրդ Այն վստահելի անծնավորություն է համարում, դեպքի մասին նրան գեղեկացրել է. Աղանայով Սիրիա վերադարձող արար զինվորներին թուրքական համազգեստով փեսնող հայերը, հիշելով իրենց հետ կարարված ողբերգությունը և մոռանալով նրանց արար լինելու փասքը, վերջիններիս հետ շար դաժան էին վարվում: Արար զինվորները Հալեպ էին հասնում հայերի կողմից վիրավորված, բռնությունների ենթարկված: «Բնականարար նման արաբները քաղաքում լուրեր էին փարածում, որ հայերը մեզ հետ վարվում են այնպես, ինչպես թուրքերն են իրենց հետ վարվել»:⁴¹⁰ Նման միջադեպերը դառնում են Հալեպի դեպքերի պարբռաը:

Երկրորդ պարբռաը հեղինակը համարում է Սիրիայում գրեղակայված

⁴⁰⁸ على سلطان ، تاريخ سوريا، حكم فصل بن حسين، 1918 - 1920 ، ص 114.

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 114:

⁴⁰⁹ Նոյն դեղում:

⁴¹⁰ محمد كرد على، خطط الشام، الجزء الثالث، 1983، ص 164.

Մոհամմադ Քուրդ Այն, Շամի գրեղագրությունը, հ. 3, 1883, էջ 164:

անզիական գորակրամանափարության՝ հայ գրագիրներին կարևոր պաշտոններ գտալու փաստը: Տեղի արաբները հայ գրագիրներին գործակալներ էին համարում: «Հայերն ավելի ինքնավսփահ դարձան: Նրանց նախկին անօգնական վիճակը փոխարինվեց ազատ և բարեկեցիկ կյանքով, մեծամրացան, ինչը ընդունվեց արաբների կողմից ... Նրանք, բնականարար, զայրությունով էին նայում հայերին...»:⁴¹¹

Երրորդ պատճառը գրեթեսական բնույթ ուներ. հայերին մի շարք ապրանքներ, կենցաղային իրեր ավելի մաքչելի ու հասանելի էին, քան արաբներին: Անզիական կողմից հայերին որոշակի գումարներ էր գրամադրում, նրանք կարող էին նույնիսկ սենյակի վարձ գրալ, մինչդեռ արաբների համար նույն բանն ավելի թանկ էր: Դիմնականում հայերի համար գործում էին որոշակի գեղջեր: Այս փաստը նույնպես զայրացնում էր արաբներին:

Իսկ արաբների մասնակցությունը Հայեափի դեպքերին Մուհամմադ Քուրդ Ալին բացապրում է հետքյալ հանգամանքով. «Արարական իշխանությունները մասնակցում են այդ դեպքերին, քանի որ այդ գրարածքում գրեղի ոսդիկանության և զորքի մեջ կային նաև արաբներ»:⁴¹² Այսինքն, հեղինակը փաստում է, որ արաբներն ինքնաբերաբար են մասնակից դարձել դեպքերին: Դեպքի ժամանակ գոհված մուտքման հալեպցիների թիվն, ըստ նրա, չի անցնում գրամից:

Մեր կարծիքով առավել հավասփի է այն վարկածը, որ Սիրիայում «աշխուժացած թուրքական գործակալություններն էին, որ կազմակերպեցին, դեկավարեցին և հիմնականում գործադրեցին Հայեափի 1919թ. փետրվարի 28-ի հակահայ արյունով թուրքյունը»:⁴¹³ Կամ «Հայեափի թուրք դավադիրները գիխավորեցին գեղաքնակ իրենց հայրենակիցների և արաբ խավարամիվ որոշ գրարերի խժեցություններն անգեն և անպաշտպան հայ գաղրականների դեմ»:⁴¹⁴ Եվ ականափես հայերի այն պնդումները, որ «զանգվածային ջարդը դեռ սիրելի է մեր երդուալ թշնամիների համար»:⁴¹⁵ Այսպես պետք է թուրքական կողմին դիմարկել նախաձեռնող ու իրահրող կողմ, իսկ իրադարձությունների վերլուծության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել թուրքական, անզիական, ֆրանսիական և արաբական կողմերի մասնակցության փաստը:

⁴¹¹ محمد كرد على، خطط الشام، الجزء الثالث، 1983 ، ص 164.

Մուհամմադ Քուրդ Ալի, Շամի գեղագրությունը, h. 3, 1883, էջ 164:

⁴¹² Նշվ. աշխ., էջ 165:

⁴¹³ Նաջարյան Ե., Հայ-արաբական փոխարաբերությունները Սիրիայում, տես «Սերծավոր և Միջին Արևելիք երկրներ և ժողովուրդներ», h. 6, էջ 144:

⁴¹⁴ Նշվ. աշխ., էջ 151:

⁴¹⁵ «Կիլիկիա», 14.03.1919:

Վյդ ժամանակ ֆրանսիական կողմը պնդում էր, որ բրիտանական հրամանագրառության թողփությամբ արաբները կազմակերպել են հալեպահայերի ջարդը:

Նայ և օգար աղբյուրներում պահպանված նյութերի վերլուծությունները ցույց են դրախա, որ Հալեպի դեպքերը կազմում են Կիլիկիայի հայության դեմ ուղղված դաշտարության մի մասը: Ամենսին պատահական չէր, որ դա փեղի է ունենում այն օրերին, երբ հայերը գանգվածաբար ներգաղթում էին Կիլիկիա: Թուրքական կողմը նպագրակ էր հետապնդում խոչընդունակ հայերի վերադարձը Կիլիկիա և Երկրորդ, սպեղծել հայ-արաբական լարված հարաբերությունները:

Անգլիական և ֆրանսիական գինվորական հրամանագրառությունները հայերին հորդորում էին Կիլիկիա վերադառնայ: Դամասկոսի և հարակից շրջաններից ավելի քան քսան հազար հայության հայրենիք վերադառնալու ուժգին հոսանքը կանոնավորելու համար գործում էր Դամասկոսի Հայ ազգային միությունը, որը նախագահում էր Ա. Կենճյանը: Նա նոյնապես իր հուշերում հասպարում է Հալեպի դեպքերի թուրքական գործակալների կողմից նախաձեռնված լինելու վարկածը և կապ է փեսնում Կիլիկիայի ու Հալեպի դեպքերի միջև. «1919 փետրուարին Հալեպի մեջ ըստ թուրքական վաղեմի ուսակութեան, հայերու ջարդը, կուգար Դամասկոսի գրադադիր հայութեան խանդավառութեան վրայ ջուր լցնելու, որքան որ ալ յիշեալ ջարդերն ու ուրիշ նման դեպքերը զսպող անգլիական և ֆրանսիական գինորական ուժերու վրայ վսրահութիւնը մնար անխախտ»:⁴¹⁶

Անգլիական գործերի՝ Միիհա մինելուց հետո Հալեպից հեռացող թուրք պետական պաշտոնյաներին փոխարիններու էին եկել «թուրք միայնությամբ սմուած և թուրք դաստիարակությամբ զարգացած» արաբները, որոնք «մեծաւ մասսամբ իթթիհադին կապականեին»:⁴¹⁷ Միանգամայն հավանական է այն փեսակեդրը, թե «գարշելի իթթիհադը հոս ալ՝ Հալեպում խորունկ արմադ ձգած է արաբ զանազան խավերուն մեջ և դյուրին էր հասկանալ, թե Թուրքիում մեջ գրակալին զաղբևապես գործող իթթիհադականները շատ դյուրավ կրնային հարաբերության մեջ մինել իրենց Սուրիոյ կուսակիցներուն հետո»:⁴¹⁸ Կասկած չկա, որ Հալեպում հայերին կորդորելու ծրագրի իրականացումը հանձնարարված էր Աղանայի թուրքական շրջանների ցուցումներով գործող արաբ իթթիհադականներին: Հալեպի ոսդիկանապերը, ավագանու անդամների մեծ մասը պատրկանում էին իթթիհադա-

⁴¹⁶ Կէնճեան Ա., Խշվ. աշխ., էջ 8:

⁴¹⁷ Նաշարյան Ե., Հայ-արաբական փոխարաբերությունները Միրիայում, էջ 152:

⁴¹⁸ Նոյն փեղում:

կան արաբների թվին: Թուրքական կողմի հրահրման մասին է վկայում ֆրանսիական մամուլը. «Նալեպում մինչ այդ հայերի արյունն այդքան չեր թափվել թուրքերի կողմից հրահրված խոռվությունների հետևանքով»:⁴¹⁹

Նալեպում, Կիլիկյանում այդ ժամանակ լույս գտնանող թերթերի հրապարակումները վկայում էին Նալեպի դեպքերին նախորդ օրերին փիրող լարված մթնոլորդի մասին: Վերջինիս համար առիթ է եղել «Ալ-Արաք» թերթի⁴²⁰ զիսավոր խմբագիր Սամի Ալ-Սարրաջի՝ փեղրվարի սկզբներին գրված «Նայր և արաբը» խորագրով հոդվածը, որը դրագրվել է նրա՝ Աղանա կալվարած շրջագայությունից հետո: Նոդվածում հայերի դեմ զրապարփանքներ էին ներկայացված:⁴²¹ Այս հոդվածում Սամին փորձում է «ապացուցել, թե հայ կուսակցությունները, հայ չեթենները և հայ ժողովուրդը Թուրքիային դարձող արաբներուն նեղություններ փալէ զար, զանոնք կապանեն»:⁴²² Նալեպի հայ մամուլը, առաջինը՝ «Տարագիր»-ը հերքել է այդ զրապարփությունները: Նման մթնոլորդը սդեղծվել էր շնորհիվ «Սամիի նման թրքացած և թուրք դրամի սպասարկու արաբներու, ինչու չէ պաշփանական իսկ դէմքերու այդ ուղղութեամբ ջանքերի»:⁴²³

«Նայ ձայն»-ը նոյնպես անդրադանում է Սամի բեյի հոդվածին՝ փորձելով հերքել Սամիի հոդվածում դրեղ գրած այն դժգոհությունը, «թե կը գանգափի հայ զինուորներու կողմէն Արաք ճամփորդեներուն հանդէպ եղած անփեղիութիւններէն»: «Նայ ձայն»-ի փեղրվարի 23-ի համարում հերքում է դրագրվում, ըստ որի ոչ մի հայ նպատակ չի ունեցել արաբներին մեղադրել կամ վիրավորել, ընդհակառակը՝ «... լրագրութիւնը և թէ, ժողովուրդը միշտ երախտագիրվական զգացումներ արքահայրած են արաք կառաւարութեան և ազգին հանդէպ եւ իրենց այդ արքայայդութիւնները արձագանք գրած են արքասահմանի մեջ ալ»:⁴²⁴

Դեպքերի նախորդ օրը «Նայ ձայն»-ում դրագրված «Նայ և արաք եղայրակցութիւնը» հոդվածի հեղինակ Ռ. Արամյանը հավաստիացնում էր, որ Սամի բեյը, ով Աղանայից նոր էր վերադարձել, պեղք է իր քաղաքագետի հարուկ հոդվառությամբ զգար, որ «... Ինքը /Սամի բեյը՝ Ն. Մ./ կամայ թէ ակամայ իթթիհաղի գործիքը կըլլայ, երբ նոյնիսկ անզիփակօրէն,

⁴¹⁹ “L’illustration”, 1919, 5 avril , 1919.

⁴²⁰ 1918թ. աշխանք իթթիհաղական արաբների կողմից կազմակերպվել էր «Նայի Ալ-Արաք» /«Արաքական ակումբ»/ ընկերությունը, որի օրգանն էր «Ալ-Արաք» օրաթերթը:

⁴²¹ Նաջարյան Ե., «Նայ-արաբական փոխարաբերություններ Սիրիայում, էջ 154:

⁴²² «Կիլիկիա», 14.03.1919:

⁴²³ Նոյն դեղում:

⁴²⁴ «Նայ ձայն», 27.02.1919:

գրչի մէկ սխալով հայու և արաբի միջեւ ցրտութիւն յառաջ բերել կուզէ»:⁴²⁵ Նա կոչ է անում զոհ շղանայ «իթթիհադի անարդ դաւերուն և փոխանակ զիրար մեղադրելու սխալ մեկնարաննելու ... իրարու քով զանք ու զիրար լուսաւորենք օգդուելու միմեանց առաւելութիւններէն»:⁴²⁶

Թերթում բացադրություն է դրվում Սամի բեյի դժգոհությունը հարուցած այն փասդին, ըստ որի հայ գինվորներն իրենց ֆրանսիական ղեկավարներից ճամփորդ թուրքերին խուզարկելու հանձնարարականներ են սրացել՝ Նրանց զենքերն առզրավելու համար, բայց սխալութը է եղել, որի վերաբերյալ հոդվածագիրն հավասարացրել է. «...կը յանձնարարենք այդ պարագան Հայ պաշտպանական մարմիններին, որ հայ գինորները խուզարկութիւնների միջոցին կամ իրենց պարտականութիւնների կապարումի մեջ զգուշաւոր ըլլան ու ցաւ և դժգոհութիւններ չի պատճառեն արար եղբայրներուն, որոնք ամէն արիթներուն կը գովեն հայերը»:⁴²⁷

Դեպքերի ականագետն Ա. Դիշոյիշյանը հասպագում է արարների մասնակցությունը. «Թուրքական գաղփնի գործակալները, օգտագործելով քաղաքի ոչ աշխատավոր արար մասսաներին, հավաքել էին հին բերդի մոտ՝ Զումա կոչվող շուկայում՝ իբր քննարկելու Միրիայում անզիխական, թե՛ ֆրանսիական խնամակալության հարցը, մինչդեռ հարուկ հրահանգից հեգո, հավաքված խուժանին ուղղում են հայերին կուրորելու և կողոպ-դրելու նրանց ունեցվածքը»:⁴²⁸

Չի բացառվում, որ Հալեպի խիստ փոքրաթիվ թուրքերից ոմանք մասնակցած լինեն հայերի կուրորածներին, սակայն ճիշդ չի լինի բոլորին համարել «Հալեպի և շրջակա բնակավայրերի հայաբյաց թուրքեր», այն դեպքում, երբ աղբյուրները թուրքեր են հիշաբակում հայերի կուրորածներին մասնակցելու մեղադրանքով դափարանի առաջ կանգնածների, բանդարկածների կամ աքսորվածների մի մասին: Ճիշդ է, անզիխական ռազմական դափարանը զանազան նկարառումներով մերժել է լսել կուրորածին արար ոսպիկանների, զինվորների մասնակցության վերաբերյալ վկայությունները, սակայն նրանց մեղսակցության վերաբերյալ փասդերը համապատասխանում էին իրականությանը: Նույնիսկ դեպքերից շարաթներ անց «արար ոսպիկանները, թաղերու միշթարները» գործնական քայլեր են կափարել հայ գարագիրներին Հալեպից վրաբերելու համար:⁴²⁹

⁴²⁵ «Հայ ծայն», 27.02.1919:

⁴²⁶ Նոյն գեղում:

⁴²⁷ Նոյն գեղում:

⁴²⁸ Դիշոյիշյան Ա., Խշ. աշխ., էջ 264:

⁴²⁹ «Կիլիկիա», 26.03.1919:

Նայ ականափեսները, դեպքերի անմիջական մասնակիցները պնդում են Հալեպի դեպքերի թուրքական իշխանությունների կազմակերպման վարկածը, սակայն հսկակ նշում են, որ ջարդերն իրականացվել են արարմերի միջոցով: Զարդերի ականափես Առնակն իր հուշերում գրում է. «ինքը արքուար 28-ին ուրբաթ առփուան ջարդն էր, զոր վայրենի արաբներ իրենց ոստիկաններու գիսավլորութիւնով գրծի դրին ջարդուելու դափապարփուած խեղճ, անմեղ ու անդիրական հայերուն վրայ»:⁴³⁰

Ավելի ուշ պաշարվել է նաև քաղաքի գորանոցը: Արաբները հարձակում են գործել նաև Հալեպի հայկական որբանոցի վրա: Որբանոցի փողաներից շափերը փայտե հրացաններով ավելի քան 2 ժամ պաշփառել էին որբանոցը: «Խուժանը, փայտե հրացանները իսկականի փեղ ընդունելով սիրու չէր արել շենքը խուժել»:⁴³¹

1919թ. փերպարյան դեպքերից հետո շափ հայ երեխաներ, կորցնելով իրենց վսպահությունը, փորձել են փախչել: Որբերի շրջանում վսպահությունը վերականգնելու համար Ա. Շիրաճյանը, որբանոցի շենքում արաբական գոնի կապակցությամբ ընդունելություն է կազմակերպել: Շիրաճյանի խնդրանքով էմիր Ֆեյսալը, ավելի քան հիսուն արաբ պաշփոնյաների ներկայությամբ, մոտ հազար որբերի, որոնց թվում է եղել նաև հեղինակը, «հավասպիացրեց, որ եղածը չի կարող կրկնվել, իսկ արաբները, նախկինում թուրքերի կողմից հավասարաշափ ճնշված լինելով, համակրում են հայերին և խոսքանում իրենց ձեռքի փակ եղած միջոցներով օժանդակել հայ գաղթականներին, որբերին»:⁴³²

Սակայն ամենասկարենորն այն է, որ արաբներն ընդունել են իրենց մեղքը և 1919թ. նոյեմբերին արարական վազագույն ներկայացուցիչների առաջարկով սփեղծվել է. «Հայ-արարական բարեկամության կոմիտե», որի նպագակն էր անզիական զորքերի հեռանալուց հետո քաղաքում «շրջող վրդովեցուցիչ շշուկները թնեն և թյուրիմացությունները փարապել»:⁴³³ Այդ

⁴³⁰ Առնակ, Թուրքերու ճանակին մեջ 1916-1919, Երևան, 2007, էջ 145:

⁴³¹ Դիշիշյան Հ., Խշվ. աշխ., էջ 264:

⁴³² Խշվ. աշխ., էջ 265-266:

